

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
2009-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Հաշվետվությունը պատրաստվել և հրատարակվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի, Բաց հասարակության հիմնադրամների Հանրային առողջապահության ծրագրի Առողջապահություն և իրավունք նախաձեռնության և Վնասի նվազեցման միջազգային ծրագրի աջակցությամբ:

Սույն հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպությունների տեսակետներին:

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ:

Հասցե՝ ՀՀ, Երևան, Պուշկինի 3^ա, 5-րդ սենյակ
Հեռ.՝ (+374 10) 56-79-23
(+374 77) 44-39-66
Էլ. փոստ՝ pmg.armenia@gmail.com
Կայքէջ՝ www.prisonmonitor.am



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄԵԿԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
«Նուբարաշեն» ՔԿՀ	5
«Երևան Կենտրոն» ՔԿՀ	9
«Արթիկ» ՔԿՀ	13
«Վանաձոր» ՔԿՀ	14
«Վարդաշեն» ՔԿՀ	16
«Գորիս» ՔԿՀ	18
«Արովյան» ՔԿՀ	19
«Էրեբունի» ՔԿՀ	23
«Սևան» ՔԿՀ	25
«Կոշ» ՔԿՀ	27
«Հրազդան» ՔԿՀ	28
«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ	30
«Մեղրի» ՔԿՀ	32
ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	33
Ընդհանուր նկարագրություն	34
Առանձին ՔԿՀ-ում դիտարկման արդյունքները	35
«Վարդաշեն» ՔԿՀ	35
«Էրեբունի» ՔԿՀ	36
«Կոշ» ՔԿՀ	37
«Արովյան» ՔԿՀ	37
«Նուբարաշեն» ՔԿՀ	39
«Վանաձոր» ՔԿՀ	39
«Սևան» ՔԿՀ	40
ԲՈՒԺՍՊՈՐՏԱՐԿՈՒՄՆ ԸՍՏ ԱԶԱՏԱԶԱՐԿՎԱԾՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ	41
ՔԿՀ-ներում մարդու առողջության պահպանման սահմանդրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման համար պատասխանատու ծառայությունների հզորությունները	44
Հետազոտության արդյունքները	46
ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկների և միջին բուժաշխատողների հարցում	46
Ընդհանուր տեղեկություն Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի վերաբերյալ	49
«Գորիս» ՔԿՀ, քաղաք Գորիս	49
«Արթիկ» ՔԿՀ քաղաք Արթիկ	50
«Վանաձոր» ՔԿՀ քաղաք Վանաձոր	51
«Սևան» ՔԿՀ Սևան քաղաք	52
«Արովյան» ՔԿՀ նախատեսված կանանց և անչափահասների համար	53

«Հրազդան» ՔԿՀ քաղաք Հրազդան	54
«Երևան Կենտրոն» ՔԿՀ քաղաք Երևան	55
«Երևան Կենտրոն» ՔԿՀ քաղաք Երևան	56
«Էրեբունի» ՔԿՀ քաղաք Երևան	57
«Վարդաշեն» ՔԿՀ քաղաք Երևան	58
«Կոշ» ՔԿՀ քաղաք Երևան	59
«Նուբարաշեն» ՔԿՀ քաղաք Երևան	60
Քննարկում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկների և միջին բուժաշխատողների հարցում	61
Ընդհանուր տեղեկություն Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի վերաբերյալ	64
ՔԿՀ-ներում մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման համար պատասխանատու ծառայությունների հզորությունները	71
Հետազոտության արդյունքները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկների և միջին բուժաշխատողների հարցում	71
Ընդհանուր տեղեկություն Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի վերաբերյալ	73
«Գորիս» ՔԿՀ, քաղաք Գորիս	73
«Արթիկ» ՔԿՀ քաղաք Արթիկ	74
«Վանաձոր» ՔԿՀ քաղաք Վանաձոր	74
«Սևան» ՔԿՀ Սեվան քաղաք	75
«Արովյան» ՔԿՀ նախատեսված կանանց և անչափահասների համար	75
«Հրազդան» ՔԿՀ քաղաք Հրազդան	76
«Երևան Կենտրոն» ՔԿՀ քաղաք Երևան	76
«Էրեբունի» ՔԿՀ քաղաք Երևան	77
«Վարդաշեն» ՔԿՀ քաղաք Երևան	77
«Կոշ» ՔԿՀ քաղաք Երևան	78
«Նուբարաշեն» ՔԿՀ քաղաք Երևան	79
Քննարկում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկների և միջին բուժաշխատողների հարցում	79
Ընդհանուր տեղեկություն Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի մասին	81
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԴԻՏՈՐՂՆԵՐԻ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՅ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՅ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ 2009-2010 թթ.	83

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը պատրաստված է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի (հետագայում Դիտորդների խումբ) կողմից 2009 և 2010 թթ. իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

Հաշվետվությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացված է յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի վիճակը, բացահայտված խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները: Զուգահեռ ներկայացված է ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները:

2009 թվականին ուսումնասիրվել է նաև քրեակատարողական հիմնարկներում բուժապասարկման վիճակը՝ վեր են հանվել դատապարտյալների և կալանավորվածների բուժօգնության հետ կապված խնդիրները:

Երկրորդ մասում ներկայացված է քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման համար պատասխանատու ծառայությունների հզորությունների վիճակի ուսումնասիրության արդյունքները, որն իրականացվել է 2010 թվականին: Երկրորդ մասի վերջում ներկայացված են նաև առաջարկություններ:

2009-2010 թթ. քրեակատարողական համակարգի խնդիրներից էր քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունը: Ի դեպ, այն իր բացասական ազդեցությունն է ունեցել դատապարտյալների և կալանավորների իրավունքների վիճակի վրա: Մասնավորապես արձանագրվել է մահացության դեպքերի աճ (2009 թ.՝ մահացության 9 դեպք, 2010 թ.՝ 35 դեպք):

Դիտորդների խումբը ստեղծվել է 2004 թվականին և գործում է արդարադատության նախարարի ՔՀ-66-Ն հրամանով հաստատված արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգի հիման վրա, որը ստեղծվել է նախարարության, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների համատեղ աշխատանքի արդյունքում: Դիտորդների խմբի առաջին կազմը նշանակվել է արդարադատության նախարարի կողմից: Դիտորդների խմբի գործունեության հետ կապված բոլոր որոշումները, այդ թվում կազմի փոփոխության հետ կապված, ընդունվում են Դիտորդների խմբի կողմից:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ստորև ներկայացվում են ՀՀ արդարադատության նախարարության մեկնաբանությունները՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2009թ-ի գործունեության հաշվետվությամբ բարձրացված խնդիրների վերաբերյալ:

ԽՄԲԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
<p style="text-align: center;">«Նուբարաշեն» ՔԿՀ</p> <p>«Նուբարաշեն» ՔԿՀ-ն իր լրակազմով ամենամեծն է Հանրապետությունում, որտեղ պահվում են կալանավորված և դատապարտված անձինք, այդ թվում ցմահ դատապարտյալները: Այս հիմնարկը իր կառուցվածքով չի համապատասխանում ոչ ազգային, ոչ միջազգային իրավական պահանջներին: Հիմնարկն ունի 6 մասնաշենք, ուր ազատազրկվածները պահվում են փակ խցերում: Հիմնարկում պահվում են կալանավորվածներ և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներ (այդ թվում գրեթե բոլոր ցմահ դատապարտյալները):</p> <p>2009 թվականի ընթացքում սա միակ հիմնարկն է եղել, ուր ազատազրկվածները չեն ունեցել անհատական քնելատեղեր և քնել են հերթափոխով:</p> <p>«Նուբարաշեն» ՔԿՀ-ի բոլոր խցերը (բացի ցմահ դատապարտյալների խցերից) նախատեսված են 8 անձի համար: Չնայած որ</p>	<p>Նշված, ինչպես նաև քրեակատարողական ծառայության՝ օրենքով նախատեսված այլ խնդիրների կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է եղել քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակմանը, որին ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 4 արձանագրությամբ տրվել է հավանություն: Ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն տրամադրվում է սույն մեկնաբանությունների վերջնամասում:</p> <p style="text-align: center;">Ազատազրկվածները անհատական քնելատեղերով ապահովված են:</p>

խցերում ապահովվում է մեկ ազատագրկվածի համար նախատեսված 4մ² տարածք, սակայն ութ ազատագրկվածների պահելը մեկ խցում հակասում է Քրեակատարողական օրենսգրքի պահանջներին, որով նախատեսված է՝ փակ ուղղիչ հիմնարկի խցերում պետք է պահվեն մինչև 4 դատապարտյալ: Բացի այդ գերբնակեցման պատճառով խցերում տեղադրվել են լրացուցիչ 2-4 մահձակալներ և այնտեղ պահվում են, ըստ Դիտորդների խմբի դիտարկումների, նախատեսվածից երկու և ավելի անգամ ավել մարդ:

Խումբն իր նախկին հաշվետվություններում անդրադարձել է զբոսանքի կազմակերպման խնդրին, որի հետ կապված տեղեկացվել է այն մասին, որ նրանք չեն կարող օգտվել իրենց ամենօրյա զբոսանքի իրավունքից: Ավելին «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմն ընդունել է խմբի այն դիտարկումը, որ շաբաթ և կիրակի օրերին ընդհանրապես զբոսանք չի կազմակերպվում: «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմը այդ խնդիրը բացատրում է աշխատակազմի ոչ լիարժեք լրացվածությամբ:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը մի շարք առաջարկություններ էր ներկայացրել՝ իրավիճակի բարելավմանն ուղղված: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են: Առաջարկություններ՝

1. Միջոցներ ձեռնարկել հիմնարկի գերբնակեցումը վերացնելու համար:

1. Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով նախատեսվում է առաջիկա 10 տարիների ընթացքում որոշ քրեակատարողական հիմնարկների փոխարեն (այդ թվում նաև «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի փոխարեն) նոր և միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկների կառուցում, և անբավարար շենքային պայմաններ ունեցող քրեակատարողական հիմնարկների գործունեության դադարեցում: Դրանով կլուծվի նաև ուղղիչ հիմնարկների տեսակների՝ օրենսդրությամբ սահմանված պայմանների ապահովումը: Ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն տրամադրվում է սույն մեկնաբանությունների վերջնամասում:

2. Հաշվի առնելով խցերի գերբեռնվածության և թթվածնի ուղղակի պակասը, որպես միջանկյալ լուծում, խցերն ապահովել օդափոխիչներով:
3. Հետագա վերանորոգումների ընթացքում նախատեսել խցերում փայտյա հատակ:
4. Ապահովել խցերը գիշերային լուսավորության լամպերով:
5. Վերափոխել կարճատև տեսակցության սենյակը՝ ապամոնտաժել ապակե միջնապատը, որպեսզի ապահովվի տեսակցողների և ազատագրկվածի միջև մարդկային անմիջական շփման հնարավորությունը:
6. Ապահովել կարճատև տեսակցության սենյակների ջեռուցումը:
7. Բարելավել սանիտարահիգիենիկ վիճակը կարճատև տեսակցության սենյակներում:
8. Ավելացնել երկարատև տեսակցության սենյակների քանակը:

9. Միջոցներ ձեռնարկել հեռախոսակապից օգտվելու հաճախականությունն ավելացնելու համար:

10. Ապահովել ազատագրկվածների լոգանքը հիմնարկի բաղնիքների պայմաններում օրենսդրությամբ նախատեսված հաճախականությամբ.

11. Ապահովել բաղնիքների սանիտարահիգիենիկ պայմանները:
12. Ապահովել լոգարանները օդափոխության համակարգով:
13. Ապահովել լոգարանների ջեռուցումը:

- 2, 3, 12.. Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կկատարվի:

4. Խցերում գիշերային լուսավորվածությունն ապահովված է:
5. Ընդունելի չէ, քանի որ օրենսդրությամբ արգելված չէ նման պայմանների ստեղծումը: Տվյալ դեպքում հաշվի են առնվել անվտանգության ապահովման խնդիրները:

6. Ջեռուցվում են էլեկտրական սալիկներով:
7. Սանիտարահիգիենիկ վիճակը կարճատև տեսակցության սենյակներում բավարար է:
8. 2010թ. ավելացվել են երկարատև տեսակցությունների սենյակները, որոնք բավարարում են ՔԿՀ-ում երկարատև տեսակցություններ կազմակերպելու համար:

9. Հեռախոսային խոսակցությունները տրամադրվում են հիմնարկի պետի կողմից հաստատված ժամանակացույցով, օրենսդրության պահանջների խախտումներ չկան:

10. Լոգանքը տրամադրվում է Ներքին կանոնակարգի 47-րդ կետի համաձայն՝ առնվազն շաբաթը մեկ անգամ, առնվազն 15 րոպե: Օրենսդրության պահանջների խախտումներ չկան:

11. Հնարավորինս ապահովվում է:

13. Ծենքը տաքացվում է էլեկտրական սալիկներով, ինչը հնարավոր չէ իրականացնել լոգարաններում, սակայն լոգանք տրամադրելուց առաջ լոգարանները էլեկտրական սալիկներով տաքացվում են: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության

- 14. Ապահովել լոգարանների կահավորանքը(օրինակ՝ կախիչներով, նստարաններով, պահարաններով...):
- 15. Համալրել հիմնարկի բուժմասն անհրաժեշտ մասնագետներով և համապատասխան բժշկական պարագաներով:
- 16. Ապահովել օրենսդրությամբ նախատեսված ամենօրյա զբոսանքը:
- 17. Զբոսահրապարակներն ապահովել մարզական գույքով:
- 18. Համալրել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ, նորացնել գրական ֆոնդը:
- 19. Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը ամենօրյա մամուլով:

20. Կապիտալ վերանորոգել խոհանոցը:

21. Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:

դեպքում հնարավոր կլինի լուծել լոգարանների ջեռուցման հարցը:

- 14. լոգարաններն ապահովված են կախիչներով և նստարաններով, պահարանները կտեղադրվեն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
- 15. Ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

16. Միջոցներ են ձեռնարկվում առավելագույնս ապահովելու ուղղությամբ:

17. Զբոսահրապարակների չափերի փոքր լինելու պատճառով, կալանավորվածները հնարավորության սահմաններում զբաղվում են մարմնամարզությամբ:

18. 19. Քրեակատարողական հիմնարկների գրադարանի համալրման համար օգտագործվում են հնարավոր մի շարք միջոցներ: Բացի այդ, Ներքին կանոնակարգի 118-րդ կետի համաձայն կալանավորված անձինք և դատապարտյալները իրավունք ունեն օգտվելու կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի աշխատողի միջոցով՝ իրենց հաշվին կամ բաժանորդագրության ձևով ձեռք բերված գրականությունից և պարբերական մամուլից, որի համար կալանավորված անձը կամ դատապարտյալը դիմում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետին: Բաժանորդագրման ձևակերպումը կատարում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը: Բաժանորդագրության համար անհրաժեշտ դրամը փոխանցվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական հաշվից:

20. Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կվերանորոգվի:

21. Հատկացվել է 3 հատ 250 լիտրանոց էլ. կաթսա: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կբավարարվի մնացած պահանջները:

22. Հիմնարկի հաստիքացուցակում նախատեսել մասնագետ խոհարարի հաստիք:

23. Բարձրացնել սննդի որակը

24. Կապիտալ վերանորոգել պատժախցերը.

25. Կարանտինային խցերի պայմանները համապատասխանեցնել առկա նորմատիվ պահանջներին:

26. Ապահովել կարանտինային խցերը ներքին ռադիոցանցով:

27. Ավելացնել հոգեբանների և սոցիալական աշխատողների հաստիքները և կազմակերպել նրանց համար մասնագիտական վերապատրաստում:

28. Բարելավել աշխատակազմի աշխատանքային պայմանները, կիրառել օրենքով սահմանված արտոնությունները, իրագործել աշխատանքային օրենսգրքով նախատեսված պահանջները և բարձրացնել նրանց աշխատավարձը:

«Երևան Կենտրոն» ՔԿՀ

«Երևան կենտրոն» քրեակատարողական հիմնարկը, գտնվում է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության շենքում և դեռևս խորհրդային տարիներից ծառայել է որպես ՊԱԿ-ի մեկուսարան:

Դիտորդների խումբը բազմիցս նշել է, որ չնայած «Երևան կենտրոն» ՔԿՀ-ն իրավական կարգավիճակով գտնվում է ԱՆ ենթակայության տակ, բայց փաստացի գործում է որպես ԱԱԾ մեկուսարան: Մասնավորապես, հիմնարկը չունի իր անցագրային կետը և այնտեղ մուտք գործելու համար անհրաժեշտ է անցնել ԱԱԾ անցագրային կետով: Այս հիմնարկը միակն է, ուր Դիտորդների խումբը խոչընդոտ-

22. Խոհարար մասնագետի հաստիք նախատեսելու անհրաժեշտություն չկա: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է պայմանագրային կարգով ապահովել:

23. Սննդի որակը համապատասխանում է սահմանված չափանիշներին և մշտապես գտնվում է հսկողության տակ:

24, 25, 26. Կապված է շենքային պայմանների հետ, նպատակահարմար չէ, քանի որ կոնստրուկտիվ լուծումը թույլ չի տալիս :

27. Հաստիքների ավելացման հարցը կքննարկվի քրեակատարողական վարչության կողմից: Մասնագետների վերապատրաստումը կազմակերպվում և իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

28. Հնարավոր կլինի բարելավել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Կապված է հիմնարկի տեղակայման հետ: Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:

ների է հանդիպում մուտք գործելիս: Գրեթե միշտ խմբի անդամները ստիպված են տևական ժամանակ սպասել ԱԱԾ անցագրային կետում՝ մուտքի թույլատվություն ստանալու համար:

Դիտորդական խումբը «Երևան կենտրոն» ՔԿՀ-ում պահվող ազատազրկվածներից հաճախ է ստանում ահազանգեր, դիմումներ՝ իրենց իրավունքների խախտման վերաբերյալ: Օրինակներ՝

- 2009 թվականի դեկտեմբերին խմբի կողմից արձանագրվել է հետևյալ խախտումը՝ քրեակատարողական հիմնարկի պետը, մերժելով դատապարտյալի կարճաժամկետ մեկնում տրամադրելու մասին դիմումն առանց որևէ պատճառաբանության, խախտել է ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասը: Այս փաստի առթիվ խումբը հրատապ հաշվետվություն է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն:

- Նամակագրության գաղտնիության խախտումը և գրաքնության առկայությունը:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում խումբը մի շարք առաջարկություններ էր ներկայացրել իրավիճակի բարելավման ուղղությամբ: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են: Առաջարկություններ՝

1. Արագացնել հիմնարկի առանձնացումն ԱԱԾ տարածքից, իսկ մինչ այդ ապահովել խմբի անարգել մուտքն ԱԱԾ անցակետով՝ ՔԿՀ:
2. ՀՀ արդարադատության նախարարի 2007թ. փետրվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նա-

1. Խմբի կողմից արձանագրած խախտումը հիմնազուրկ է: Քրեակատարողական հիմնարկի պետը դատապարտյալ ԱԴ-ի դիմումը՝ կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 81-րդ հոդվածով սահմանված կարգով քննարկել է և 09.12.2009թվականի որոշմամբ կարճաժամկետ մեկնում տրամադրելը մերժել է: Նշված որոշման օրինականությունը ստուգելու նպատակով դատապարտյալի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին, որի ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ դիմումը քրեակատարողական հիմնարկի կողմից քննարկվել է սահմանված կարգով և կայացվել է օրենքի դրույթներից բխող որոշում:

2. Անհիմն է:

1, կետերում նշված խնդիրների լուծումը տրվելու է քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով: Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:

2. Լրակազմով նախատեսված է կիսաբաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների պահում, որպեսզի հետագայում հնարավոր լինի նրանց տեխնիկատնտեսական աշխատանքներում ընդգրկելու

խարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» հրամանում փոփոխել «Երևան կենտրոն» հիմնարկի համար նախատեսված լրակազմը և համապատասխանեցնել այն հիմնարկի ներկայիս շենքային հնարավորություններին:

3. Խցերում տեղադրել գիշերային լուսավորության (փոքր հզորության) լամպեր:
4. Խցերն ապահովել օդափոխության համակարգով:
5. Մեկուսացնել խցերի զուգարանները:
6. Կիրառել տեսակցությունների հսկողության այնպիսի ձև, որն ապահովելով անվտանգությունը՝ չխախտի ազատազրկվածների անձնական կյանքի իրավունքը:
7. Հիմնարկում ստեղծել երկարատև տեսակցության սենյակ:

8. Վերանայել հեռախոսազանգերի ժամանակացույցը, ավելացնել դրանց հաճախականությունը և ապահովել հեռախոսազրույցների գաղտնիությունը:
9. Տեղափոխել հանձնուփի ընդունման կետը այնպիսի տարածք, որ այն առնչություն չունենա ԱԱԾ-ի հետ:

10. Ապահովել հանձնուփների ընդունման օրենքով սահմանված հաճախականությունը:

համար: Լերկայումս կիսաբաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալներ չեն պահվում:

3. Խցերն ապահովված են գիշերային լուսավորությամբ:

4, 5, 7, 9, 13, 15. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 2-րդ կետում:

6. ՀՀ կառավարության 03.08.2006թ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի եւ ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին». թիվ 1543-Ն որոշման (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) 143 կետի համաձայն մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ:

8. Ներքին կանոնակարգի 182-րդ կետի համաձայն կալանավորված անձին կամ դատապարտյալին հեռախոսակապից օգտվելու հնարավորություն տրամադրվում է համապատասխանաբար կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի սահմանած ժամանակացույցով: Հեռախոսակապից օգտվելու տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել 15 րոպե: Նույն կանոնակարգի 183 կետի համաձայն՝ ազատազրկվածի հիմնավոր պատճառաբանության դեպքում հեռախոսազանգի տևողությունը կարող է երկարացվել ևս 10 րոպեով: Օրենսդրության պահանջների խախտումներ չկան:

10. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կալանավոր-

11. Վերացնել խցերում սառնարան ունենալու արգելքը:

12. Հնարավորության դեպքում ավելացնել լոգանք ընդունելու հաճախականությունը:

13. Լվացքատունն առանձնացնել բուժկետից:

14. Ապահովել հիմնարկը այնպիսի որակյալ անկողնային պարագաներով, որպեսզի ազատագրկվածները ստիպված չլինեն օգտագործել անձնականը:

15. Չքոսահրապարակները ապահովել մարզական գույքով:

16. Ապահովել օրենքով սահմանված զբոսանքի իրավունքը:

17. Համալրել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ, նորացնել գրական ֆոնդը:

18. Ստեղծել առանձին կարանտինային խուց:

19. Ապահովել օտարազգի ազատագրկվածների ծանուցումը իրենց իրավունքների և պարտականությունների, ներքին կանոնակարգին՝ իրենց մատչելի լեզվով:

ված անձը ամսվա ընթացքում կարող է ստանալ մինչև 70 կիլոգրամ հանձնուք, որը կարող է ստանալ միանվագ կամ մաս-մաս: Ուսումնասիրություններով օրենսդրության պահանջի խախտումներ չեն հայտնաբերվել:

11. Օրենսդրությամբ նման սահմանափակում նախատեսված չէ, սակայն չկա նաև պարտավորություն՝ խցերը սառնարաններով ապահովելու վերաբերյալ: Կալանավորվածի կամ դատապարտյալի կողմից նման ցանկություն հայտնելու և ապրանքի ձեռքբերման ու շահագործման համար նախատեսվող ծախսերի կատարման պարտավորվածությունը ստանձնելուց հետո վերջիններս կարող են իրենց խցերում ունենալ հեռուստացույց, ռադիոընդունիչ, մագնիսոֆոն և փոքր չափերի սառնարան:

12. Լոգանքը տրամադրվում է օրենքի պահանջներին համապատասխան՝ առնվազն շաբաթը մեկ անգամ: Հնարավորության դեպքում լոգանք ընդունելու հաճախականության քանակը կավելացվի:

14. Տրամադրվում է ՀՀ կառավարության 10.04.2003թ. թիվ 413-Ն որոշմանը համապատասխան, իսկ անձնական անկողնային պարագաներն օգտագործվում են լրացուցիչ:

16. Ապահովվում է:

17. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 18-րդ կետում:

18. Խցերից մեկը օգտագործվում է որպես կարանտինային խուց:

19. «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկում օտարազգիներին իրենց իրավունքներին ու պարտականություններին, ինչպես նաև ՔԿ հիմնարկի ներքին կանոնակարգի ծանուցումը իրենց հասկանալի լեզվով հնարավոր չէ ապահովել լեզվաբան-մասնագետի բացակայության պատճառով: Նպատակահարմար է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ՔԿ հիմնարկի կողմից պաշտոնապես հրավիրել համապա-

20. Ապահովել հոգեբանների և սոցիալական աշխատողների հաստիքներով և կազմակերպել նրանց համար մասնագիտական վերապատրաստում:

21. Բարելավել աշխատակազմի աշխատանքային պայմանները, կիրառել օրենքով սահմանված արտոնությունները, իրագործել աշխատանքային օրենսգրքով նախատեսված պահանջները և բարձրացնել նրանց աշխատավարձը:

«Արթիկ» ՔԿՀ

«Արթիկ» ՔԿՀ-ն վերաշահագործվել է 2006 թվականին, հիմնովին վերանորոգումից հետո: Հիմնարկի բոլոր 5 մասնաշենքերում տեղադրվել են ժամանակակից պատուհաններ, բացառությամբ 5-րդ մասնաշենքի, որտեղ խցերը մինչև 8 տեղանոց են, իսկ մնացած 4 մասնաշենքերում՝ 2-4 տեղանոց:

Հարկ է նշել, որ 2009 թվականին հիմնարկում տեղի են ունեցել դրական տեղաշարժեր, մասնավորապես վերակառուցվել է սպորտային հրապարակը, հարակից տարածքում հիմք է դրվել մատուռի կառուցման:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում խումբը մի շարք առաջարկություններ էր կատարել ուղղված իրավիճակի բարելավմանը: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են:

Առաջարկություններ՝

1. Արդարադատության նախարարության, տեղական իշխանության, ջուր մատակարարող ընկերության, տարածքային սանիտարահիգիենիկ հակահամաճարակային կենտրոնի միջև համագործակցության միջոցով լուծել ջրի որակի հարցը:

տասխան մասնագետ:

20. Հաստիքների համալրման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ: Մասնագետների վերապատրաստումը կազմակերպվում և իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 28-րդ կետում:

1. «Արթիկ» քրեակատարողական հիմնարկին սնուցող ջրագծի հիմնանորոգման հարցը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

2. Բոլոր խցերում փակցնել ազատազրկված անձանց իրավունքների և պարտականությունների ցանկը:
3. Ստեղծել համապատասխան պայմաններ մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար:
4. Կարճատև տեսակցությունների սենյակին կից կառուցել սանհանգույց:
5. Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սպասասրահ և սանհանգույց:
6. Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել քաղաքացիների համար տեսանելի վայրում, որպեսզի ազատազրկվածների հարազատները հնարավորություն ունենան դրանց հեշտությամբ ծանոթանալ:
7. Վերանորոգել և կահավորել բաղնիքները:
8. Համալրել գործերի ֆոնդը գեղարվեստական գործերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ, նորացնել գրական ֆոնդը:
9. Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը և թարմացնել խոհանոցի սպասքը:
10. Ճաշարանը ապահովել ջեռուցումով:
11. Բարելավել սննդի պահպանման պայմանները:

«Վանաձոր» ՔԿՀ

2007 թվականին «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկը տեղափոխվել է նոր շենք: Այն կառուցված է նման կառույցների համար ընդունված պահանջներին համապատասխան: Այստեղ առկա են կալանավորված ու ազատազրկման դատապարտված անձանց պահելու համար միջազգային չափորոշիչներին համապատասխանող հիմնական պայմանները: Օրինակ՝ բոլոր խցերն

2. Կատարված է:

3. Մանկահասակ երեխաների հետ կարճատև տեսակցություններ կազմակերպելու համար ստեղծված են համապատասխան պայմաններ:
4, 5, 9. Ֆինանսական հնարավորության առկայության դեպքում կկահավորվեն:

6. Քրեակատարողական հիմնարկի հանձնուքների ընդունման կետում, տեսանելի վայրում փակցված է ցուցատախտակ, որի վրա ամրացված են անհրաժեշտ փաստաթղթերը:

7, Բաղնիքը վերանորոգված և կահավորված է:

8. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 18, 19-րդ կետերում:

10. Տաքացվում է էլեկտրական սալիկներով:

11. Սննդի պահպանման պայմաններն ապահովված են:

ունեն բավարար բնական լուսավորվածություն և օդափոխություն, հատակը փայտից է, կահավորանքը համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին, սանհանգույցն առանձնացված է բնակելի տարածքից:

2009 թվականին դիտորդական խմբի կողմից կատարված այցելությունների արդյունքում պարզվեց, որ նախկինում ներկայացված առաջարկությունների վերաբերյալ պաշտոնական մեկնաբանություններում բերված պատասխանները, հանձնարարականները դեռ լուծում չեն ստացել: Նշենք դրանցից մի քանիսը՝ չեն վերանորոգվել բաղնիքները, չի կառուցվել հանձնուփի սենյակին կից սանհանգույցը, երկարատև տեսակցությունների սենյակներում առանձին խոհանոցի հարցը դեռ լուծված չէ: ՔԿՀ-ում կա հատուկ սենյակ՝ զսպախուց:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում էսումբը մի շարք առաջարկություններ էր կատարել՝ ուղղված իրավիճակի բարելավմանը, որոնց մի մասը ի կատար են ածվել:

Առաջարկություններ՝

1. Հստակեցնել լրակազմի թիվն՝ ըստ եղած տեղերի:
2. Ապահովել երկարատև տեսակցության սենյակները խողանոցով:
3. Հանձնուփի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:
4. Վերանորոգել հիմնարկի բոլոր բաղնիքները և բաղնիքներում տեղադրել ցնցուղներ:
5. Բաղնիքների հանդերձարանները կահավորել անհրաժեշտ գույքով:
6. Բացի տնտեսմասի զբաղվածությունից, ստեղծել դատապարտյալների համար զբաղվածության այլ հնարավորություններ:
7. Սպորտային փակ դահլիճի տանիքը վերանորոգել:

1. Լրակազմով նախատեսված թիվը և եղած տեղերը համապատասխանում են, ուստի դրանք հստակեցնելու անհրաժեշտություն չկա:
2, 3, 5. Ֆինանսական հնարավորության առկայության դեպքում կկատարվեն:

4. Բաղնիքները ընդլայնվել և վերանորոգվել են, տեղադրվել են լրացուցիչ ցնցուղներ:

6. Դատապարտյալների զբաղվածությունն ավաճելու նպատակով հնարավորինս ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:

7. Սպորտդահլիճին կից վթարային շինությունն ապամոնտաժվել է իսկ դահլիճի տանիքը վերանորոգվել է:

8. Ճաշացանկի նմուշը փակցնել ճաշարանում:

9. Ապահովել ճաշարանի ջեռուցումը և օդափոխությունը:

10. Համալրել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ, նորացնել գրական ֆոնդը:

11. Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ և բազմազան մամուլով:

«Վարդաշեն» ՔԿՀ

«Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվում են իրավապահ մարմինների ազատազրկված նախկին աշխատակիցները և արտասահմանցիների մեծ մասը: Սա ՀՀ քրեակատարողական համակարգում առաջին հիմնարկն էր, որ դեռևս 2005 թվականին վերանորոգվեց և ուր համապատասխան պայմաններ ստեղծվեցին դատապարտյալներին խցային պայմաններում պահելու համար: Այդուամենայնիվ վերանորոգման աշխատանքների ցածր որակի պատճառով հիմնարկն անընդհատ ունի ընթացիկ վերանորոգումների կարիք:

Հիմնարկում մինչ օրս չլուծված հարցերից են մնում՝ հիմնարկի ջեռուցման հարցը և նախկինում նշած կարևորագույն խնդիրներից մեկը՝ օդափոխության համակարգի տեղադրումը, խոնավությունից ոչ բավարար մեկուսացումը:

Հիմնարկում տեղի են ունեցել որոշ խախտումներ՝ դատապարտյալների բուժսպասարկման հետ կապված: Խումբն անհապաղ արձագանքել, կազմել և ուղարկել է հրատապ հաշվետվությո-

8. Ճաշացուցակները ճաշարանի տարացքում փաթցնելը օրենսդրությամբ սահմանված չէ, սակայն վարչակազմերի նախաձեռնությամբ ճաշացուցակները փաթցվում են:

9. Ճաշարանի օդափոխությունն ապահովված է, իսկ ջեռուցումը կապահովվի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

10, 11. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 18, 19-րդ կետերում:

յուններ այդ դեպքերի վերաբերյալ:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում հսումբը մի շարք առաջարկություններ էր կատարել՝ ուղղված իրավիճակի բարելավմանը: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են:

Առաջարկություններ՝

1. Արդարադատության նախարարության, տեղական իշխանությունների և ջուր մատակարարող ընկերության միջև համագործակցության միջոցով լուծել ջրամատակարարման հարցը:
2. Հիմնարկում տեղադրել ջեռուցման համակարգ, իսկ մինչ այդ պետք է նախատեսել պետական միջոցներով համապատասխան ջեռուցիչների ապահովումը խցերում:
3. Տեղադրել օդափոխության համակարգ:
4. Համապատասխան միջոցներ ձեռնարկել խցերը միջատներից և կարիճներից զերծ պահելու համար:
5. Բարելավել «Կալանավորների և դատապարտյալների պահելու վայրի» տարածքում գտնվող կարճատև տեսակցության սենյակների պայմանները:
6. «Կալանավորների և դատապարտյալների պահելու վայրի» տեսակցության սենյակներին կից կառուցել սանհանգույց:
7. Կառուցել առանձին քննչական սենյակներ:
8. Հանձնառու ընդունման կետին կից կառուցել սպասասրահ և սանհանգույց:
9. Անհրաժեշտ փաստաթղթերը փակցնել տեսանելի վայրում:
10. Հիմնարկի բոլոր բաղնիքներում բարելավել սանիտարական վիճակը:
11. Հիմնարկի երկու բաղնիքում կառուցել հանդերձարաններ:
12. Համալրել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ, նորացնել գրական ֆոնդը:

1. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:

2, 3, 6, 7, 8, 14, 15. Հնարավոր կլինի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

4. Ձեռնարկված են համապատասխան միջոցներ:

5. Կալանավորված անձանց պահելու վայրում վերակառուցվել է տեսակցությունների նոր սենյակ:

9. Անհրաժեշտ փաստաթղթերը փակցված են տեսանելի վայրում:
10, 11. Բաղնիքները վերանորոգվել են, կառուցվել են համապատասխան հանդերձարաններ:

12, 13. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 18, 19-րդ կետերում:

13. Բաժանորդագրության միջոցով գրադարանն ապահովել ամենօրյա մամուլով:

14. Բարելավել խոհանոցի տեխնիկական հագեցվածությունը:

15. Խոհանոցում սարքավորել օդափոխության համակարգ:

16. Ապահովել որակյալ սննդով:

17. Կրոնական կամ այլ պատճառներով որոշակի սնունդ չօգտագործող դատապարտյալներին ապահովել համապատասխան սննդով:

«Գորիս» ԶԿՀ

«Գորիս» ԶԿՀ-ն գործում է որպես կալանատուն դեռ 1870 թվականից: Բնականաբար կառույցը շատ, ծայրաստիճան մաշված է և չի համապատասխանում արդի պահանջներին: Առկա պայմանները հանդիսանում են ազատագրկվածների վրա բարոյահոգեբանական ճնշվածության պատճառ: Խումբը գտնում է, որ հիմնարկի գործունեությունը նման պայմաններում հարկավոր է դադարեցնել, քանի որ նման պայմաններում ազատագրկվածներին պահելը հանդիսանում է մարդու արժանապատվությունը նվաստացնող և անմարդկային վերաբերմունք:

Հարկ է նշել, որ հիմնարկի բուժառայությունում կան բազմաթիվ խնդիրներ, որի մասին տեղեկացվում է հաշվետվության համապատասխան մասում:

Նախորդ հաշվետվությանը հաջորդած ժամանակահատվածում հիմնարկի պատժախցերը վերանորոգվել են:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը նաև մի շարք առաջարկություններ էր ներկայացրել, որոնց մեծ մասը դեռևս

16. Սննդի որակը համապատասխանում է ընդունելի չափանիշներին, միաժամանակ հանձնարարվել է հիմնարկների պետերին տվյալ հարցում լինել հետևողական:

17. Հնարավորության սահմաններում ապահովվում է:

լուծված չեն:

Առաջարկություններ`

1. Կարծատն տեսակցությունների սենյակն առանձնացնել հանձնուքի ընդունման կետից:
2. Ապահովել երկարատև տեսակցությունների սենյակները բնական լուսավորությամբ:
3. Հանձնուքի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:
4. Ապահովել հիմնարկը հանձնուքի զննության սարքավորումով:
5. Ապահովել բաղնիքները հանդերձարաններով, նստարաններով և կախիչներով:
6. Համալրել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ, նորացնել գրական ֆոնդը:
7. Ջրոսահրապարակներն ապահովել մարզական գույքով:
8. Կապիտալ վերանորոգել խոհանոցը:
9. Կարանտինային խուցն օգտագործել ըստ նշանակության:

«Արուվյան» ՔԿՀ

«Արուվյան» քրեակատարողական հիմնարկը նախատեսված է կալանավորված և դատապարտված կանանց և անչափահասներին պահելու համար: Անչափահասներն այստեղ են ուղարկվում 14 տարեկանից սկսած և կարող են պատիժը կրել մինչև 21 տարեկան հասակը` անհատական դիմումի հիման վրա: Ամբողջ 2008 թվականի ընթացքում հիմնարկում պահվում էր մեկ տղամարդ կալանավորված անձ: Ըստ հիմնարկի ղեկավարության դա պայմանավորված է կոնկրետ ազատագրվածի անվտանգությունն այլ հիմնարկներում ապահովելու անհնարինությամբ:

Հիմնարկն ապահովված է մշտական ջրամատակարարմամբ,

Գորիսի տարածքում քրեակատարողական հիմնարկի նոր շենք կառուցելու և «Գորիս» քրեակատարողական հիմնարկի գոծունեությունը դադարեցնելու նպատակով ձեռք է բերվել համապատասխան հաղատարածք և ավարտվել է կառուցման ենթակա նոր քրեակատարողական հիմնարկի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

սակայն քանի որ տարբեր հիմնարկներ են օգտվում նույն ջրագծից, երբեմն ջրի ճնշումը չի բավարարում բարձր հարկերի համար:

«Աբովյան» ԲԿ-ում կարծատն տեսակցությունները կատարվում են անմիջական կոնտակտի միջոցով: Այցելության պահին սենյակում տեղադրված էր երկու սեղան և 3 աթոռ, այցելության պահին միաժամանակ կատարվում էր երկու տեսակցություն և այցելուները ստիպված էին կանգնած տեսակցել: Սենյակն ապահովված է և բնական և արհեստական լուսավորությամբ: Սենյակի սանիտարական վիճակը բավարար էր: Մոտակայքում առկա է սանհանգույց, որն ապահովված է ջրամատակարարմամբ, հիգենիկ պարագաներն առկա էին:

Հիմնարկն ունի 4 երկարատև տեսակցության սենյակ: Սենյակները լավ վերանորոգված և կահավորված են: Յուրաքանչյուրում կա երեք աթոռ, մեկ բազմոց, մեկ սեղան և մեկ երկտեղանոց մահձակալ: Բնական և արհեստական լուսավորությունը սենյակներում ապահովված է: Սենյակները ջեռուցվում են և ապահովված են ջրամատակարարման ու առանձին սանհանգույցով և լոգարանով: Յուրաքանչյուր սենյակ ունի իր առանձին խոհանոցը, բայց սպասքը և սպիտակեղենը հիմնականում բերվում են դատապարտյալների հարազատների կողմից: Նաև առկա է օդափոխության համակարգ:

Երկարտև տեսակցության տարածքում չկար մանկական սենյակ, որը հատկապես կանանց բաժնի համար անհրաժեշտ է:

«Աբովյան» ԲԿ-ում նախատեսված է սենյակ, հանձնուրքների ընդունման համար, բայց տարածքում չկա զուգարան, խմելու ջրի հնարավորությունը դրսի ցայտադրյուն է: Տարածքն ունի 4 քմ մակերես և ջեռուցվում է: Սենյակում կա սեղան, բայց նստարանները դրսում են, ինչն անհարմար է և անօգտագործելի՝ եղանակային անբարենպաստ պայմաններում: Ըստ աշխատակիցների՝ հերթեր գոյանում են միայն տոնական օրերին:

«Աբովյան» ԲԿ-ում կանանց բաժնում ազատազրկվածները կարող են լոգանք ընդունել առանց սահմանափակումների: Ազատազրկվածները մասամբ ապահովված են հիգիենիկ պարագա-



ներով: Խնդիրներ կան անկողնային պարագաների հետ, օրինակ սպիտակեղենը տրվում է տարին մեկ անգամ, ինչը չի բավարարում և ազատագրկվածների հարազատները ստիպված լրացուցիչ սպիտակեղեն են բերում: Ներքնակների վիճակը նույն- պես բավարար չէ:

Անչափահաս դատապարտյալների գոտում լոգանքը կազմակերպվում է շաբաթական մեկ անգամ: Այցելության պահին խմբի անդամները չհայտնաբերեցին հիգենիկ պարագաներ՝ չկար օձառ, ատամի մածուկ և այլն: Այս գոտում նույնպես ներքնակների որոշ մասը պատռված էր, սպիտակեղենի մաքրությունը՝ ոչ բավարար:

Ըստ հիմնարկի ղեկավարության, կա տեսչական կազմի մոտ 20 հաստիքի ավելացման կարիք: Հարցը բազմիցս բարձրացվել է, սակայն դեռևս լուծում չի ստանում:

Չնայած, որ անչափահաս դատապարտյալների գոտում գործում է դպրոց, սակայն Դիտորդների խմբի դիտարկումները ցույց են տալիս, որ ազատագրկված անչափահասների մեծ մասը չի ստանում պատշաճ կրթություն: Հատկապես դա վերաբերվում է նախաքննության փուլում գտնվողներին, որոնց համար ընդհանրապես չի կազմակերպվում ուսումնական գործընթացը:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը մի շարք առաջարկություններ էր կատարել՝ ուղղված իրավիճակի բարելավմանը: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են:

Առաջարկություններ՝

1. Օրենսդրությամբ նախատեսել մանկահասակ երեխաներին անհրաժեշտ սնունդն ու պարագաները,

Տրամադրվում է ՀՀ կառավարության 10.04.2003թ. թիվ 413-Ն որոշմանը համապատասխան: Ուսումնասիրություններով նշված որոշման պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել:

Լոգանքը տրամադրվում է օրենքի պահանջներին համապատասխան՝ առնվազն շաբաթը մեկ անգամ:

1. ԱՆ քրեակատարողական վարչության կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման

2. Վերակառուցել հանրակացարանները և անցնել պահման խցային տիպի:
3. Գիշերային հերթապահությունները կազմակերպել միայն կին աշխատակիցների ուժերով:
4. Խցերում տեղադրել փոքր հզորության լամպեր՝ գիշերային լուսավորությունն ապահովելու համար:
5. Քրեակատարողական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ ավելացնելով անչափահաս դատապարտյալների կարծատն տեսակցությունների քանակը:
6. Կարծատն տեսակցության սենյակներում ավելացնել աթոռների և սեղանների քանակը:
7. Հիմնարկի դատապարտյալ կանանց պահելու գոտում ավելացնել հեռախոսների քանակը:
8. Հանձնուքի ընդունման կետում կառուցել սանհանգույց:
9. Հանձնուքի ընդունման կետը կահավորել աթոռներով:
10. Հանձնուքի զննման համար ձեռք բերել ժամանակակից տեխնիկա:
11. Մեկուսարանում ավելացնել ազատազրկվածների, հատկապես կանանց, լոգանք ընդունելու հաճախականությունը:
12. Բոլոր բաղնիքներն ապահովել հանդերձարանով:
13. Դատապարտյալների գոտում ավելացնել հեռուստացույցների քանակը:
14. Կազմել գրադարանի գրքերի ցանկ, որտեղից կալանավորվածները կկարողանան ընտրել իրենց նախընտրած գրքերը:
15. Լրացնել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությամբ:

ժամկետները հաստատելու մասին» թիվ 413-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նպատակով այն ընդգրկել ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների ծրագրում:

2. Մեկնաբանությունը տես «նութարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:
3. Գիշերային ժամերին հերթապահության են նշանակվում միայն կին աշխատողներ:
4. Խցերում գիշերային լուսավորվածությունն ապահովված է փոքր հզորության լամպերով:
5. Հիմնավոր չէ, քանի որ քրեակատարողական օրենսգրքով նախատեսվում է ամսեկան առնվազն մեկ կարծատն տեսակցություն:
6. Ավելացված է:
7. Ավելացվել է:
8. 9, 10, 12, 13, 17, 18, 20, 23. Հնարավոր կլինի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
11. Լոգանքը տրամադրվում է օրենքի պահանջներին համապատասխան՝ առնվազն շաբաթը մեկ անգամ:
14. 15. Մեկնաբանությունը տես «Նութարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 18, 19-րդ կետերում:

16. Կապիտալ վերանորոգել խոհանոցները և տեղադրել համապատասխան նոր տեխնիկա:
17. Թարմացնել հիմնարկի ձաշարանների տեխնիկական հագեցվածությունը:
18. Հիմնարկի ձաշարանները ջեռուցել:
19. Ձաշարաններում տեղադրել օդափոխության համակարգ:
20. Ձաշարաններում տեղադրել նոր կահույք:
21. Խիստ հսկողություն սահմանել ձաշերի որակի նկատմամբ:
22. Նախատեսել առանձին կարանտինային խուց:
23. Արժվյան ՔԿՀ-ի տարածքում համապատասխան տարածք հատկացնել հիվանդանոց կառուցելու նպատակով:

«Էրեբունի» ՔԿՀ

«Էրեբունի» ՔԿՀ-ն նախատեսված է միայն դատապարտյալներին պահելու համար: Այն դեռևս խորհրդային տարիներից չի վերակառուցվել և ազատազրկվածներն այստեղ պահվում են հանրակացարաններում, որոնք տեղակայված են երեք մասնաշենքերում:

Հիմնարկը կառուցված է հոսող սողանքավտանգ և բարձր խոնավություն ունեցող տարածքում, ինչի արդյունքում շատ շինություններ գտնվում են վթարային վիճակում: Մասնավորապես վարչական մասնաշենքի հիմնական պատերը խոշոր ձաքեր ունեն: Որոշ մասնաշենքերում 2009 թվականի ընթացքում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Ամբողջ 2009 թվականի ընթացքում «Էրեբունի» ՔԿՀ-ի հանրակացարանները գերբնակեցված էին: Հանրակացարաններում պատուհաններին մասամբ բացակայում էին ապակիները՝ փոխարենը դրանք պատված էին պոլիէթիլենով: Նույնը վերաբերում է նաև կարճատև տեսակցության սենյակին:

16. Խոհանոցը վերանորոգվել է, իսկ համապատասխան տեխնիկայով հնարավոր կլինի ապահովել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

19. Օդափոխության համակարգը տեղադրված է:

21. Սննդի որակը գտնվում է ամենօրյա հսկողության տակ:

22. Կարանտինային խցերն առկա են և տեղակայված են կալանավորված անձանց պահելու համար նախատեսված նոր մասնաշենքում:

Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:

Պահեստային մասին տրամադրած շինությունները կիսաքանդ են, օրինակ բանջարեղենի համար նախատեսված շինության տանիքի որոշ մասը փլված է, պատերը կիսաքանդ, բորբոսնած և սևացած են, պահեստի հատակը հողից է: Դիտորդական խմբի այցելության օրը ձնհալից առաստաղից կաթում էր հեղեղի պես. իսկ այդտեղ պահվում էին նաև նոր ներքնակները, այլ պարագաներ, որոնք էլ գտնվում էին թրջված վիճակում: Այդ նույն տեղում էր պահվում պահեստավորված սոխը և կարտոֆիլը:

Լվացքատանը ըստ փաստաթղթերի պիտի լիներ երկու լվացքի մեքենա, որոնցից մեկն անսարք էր: Գոյություն չունի արդուկման և չորացման մեքենաներ:

«Էրեբունի» ՔԿՀ-ի բուժմասում դեղորայքի պահման երկաթյա պահարանում խմբի անդամները հայտնաբերել են ժամկետանց դեղորայք, որտեղ ըստ բուժմասի բժշկի, պահվում է նաև առաջին օգնության դեղորայքը: Ժամկետանց դեղորայքը դեռ դուրս գրված չէր, չնայած որ օգտագործման ժամկետից անցել էր առնվազն 3 ամիս:

Բժշկական ծառայության համար նախատեսված սենյակում խմբի անդամները տեսել են արյան մեջ շաքարի քանակը որոշող սարքեր (գլյուկոմետրներ), որոնք չեն օգտագործվում, թեև հիմնարկում կան շաքարային դիաբետով տառապող հիվանդներ, որոնց ըստ ՀՀ կառավարության 825-ն որոշման, ամիսը մեկ անգամ անհրաժեշտ է ենթարկել վերը նշված հետազոտության:

2008 թվականի համեմատությամբ հիմնարկում այլ եական փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Առաջարկություններ՝

1. Քանի որ ՔԿՀ-ն գտնվում է սողանքային գոտում, առաջարկում ենք, հիմնարկը տեղափոխել կամ կատարել շինարարական համապատասխան աշխատանքներ՝ հիմնարկը հիմնովի ամրացնելու ուղղությամբ: Մինչ այդ՝
2. Բարելավել հիմնարկի ջրամատակարարումը:
3. Ապահովել ազատագրկվածների օրենսդրությամբ նախատես-

Ըստ «Էրեբունի» ՔԿ հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի պետի կողմից ներկայացված 19.01.2011թ. տեղեկանքի, դիտորդների խմբի կողմից ներկայացված հաշվետվության տվյալ հատվածը չի համապատասխանում իրականությանը:

1, 3, 4, 5, 8, 9, 10, 11, 15, Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին և 2-րդ կետերում:

2. Կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցի հետ:

ված բնակմակերեսը:

4. Կացարաններում առանձին սանհանգույցներ կառուցել:
5. Ապահովել կացարաններում կենտրոնացված ջեռուցում:
6. Առանձին սանհանգույց կառուցել տեսակցությունների սենյակի համար:
7. Տեսակցությունների սենյակին կից տեղ հատկացնել երեխաների համար:
8. Ավելացնել լոգարանների քանակը:
9. Տեսակցությունների սենյակն ապահովել օդափոխության սարքերով:
10. Կահավորել և ջեռուցել հանձնուքի սպասասրահը:
11. Հանձնուքի ընդունման կետում կառուցել սանհանգույց:
12. Հանձնուքի զննությունը կատարել հանձնողի ներկայությամբ:
13. Ապահովել հիմնարկի բոլոր դատապարտյալների համար առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանք:
14. Լրացնել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությունով:
15. Կապիտալ վերանորոգել ճաշարանը և խոհանոցը և վերազինել այն:
16. Բարձրացնել սննդի որակը:
17. Բացառել ժամկետանց դեղորայքի օգտագործումը:
18. ՔԿՀ-ում առկա բուժ. սարքավորումները (գլյուկոմետր) օգտագործել ըստ նպատակի:

«Սևան» ՔԿՀ

«Սևան» ՔԿՀ-ն նախատեսված է միայն դատապարտված անձանց պահելու համար: Դեռ խորհրդային տարիներից ընդունված

6. Տեսակցությունների սենյակին կից առկա է գործող սանհանգույց:

7, Հատկացվել է:

12. Հանձնուքի զննությունը կատարվում է այն բերած անձի ներկայությամբ:

13. Օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվում է դատապարտյալների առնվազն շաբաթը մեկանգամյա լոգանքը:

14. Մեկնաբանությունը տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 18, 19-րդ կետերում:

16. Սննդի որակը համապատասխանում է սահմանված չափանիշներին և գտնվում է ամենօրյա հսկողության տակ:

17. Ժամկետանց դեղորայք չի օգտագործվել, ուստի դրա օգտագործումը բացառելու վերաբերյալ առաջարկությունը հմինագուրկ է:

18. ՔԿՀ-ում առկա բուժասրքավորումներն օգտագործվում են ըստ նպատակի:

Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին կետում:

Է եղել, այստեղ պահել կրկնահանգագործության համար դատապարտված անձանց: Ներկայումս այստեղ հիմնականում պահվում են այն դատապարտյալները, ովքեր պատիժը պիտի կրեին կիսափակ տիպում, չնայած, որ ներկայիս պայմանները (բացառությամբ կացարանների չափսերի) ավելի մոտ են կիսաբաց ռեժիմին: Ազատագրվածները այստեղ պահվում են հանրակացարաններում, որոնք տեղակայված են չորս երկհարկանի մասնաշենքերում:

«Սևան» ՔԿՀ-ի հիմնախնդիրներից եղել և մնում է ջրամատակարարման հարցը, այն առավել խնդրահարույց է դառնում ձմեռային ամիսներին, ջրագծի սառչելու հետևանքով: Բացի այդ դատապարտյալները նշում էին, որ անձնական հիգիենայի ապահովման համար հիմնարկում ստեղծված չեն բավարար պայմաններ: Մասնավորապես լվացվելու համար ստեղծված չեն համապատասխան պայմաններ, իսկ զուգարանը գտնվում է ծայրահեղ հակասանիտարական վիճակում: Ինչ վերաբերում է լոգանքի հաճախականությանը, ապա Խմբի անդամները դրա վերաբերյալ տարբեր կարծիքներ են լսել, սկսած շաբաթը երկու անգամից մինչև ամիսը երկու անգամը:

Երբ նախորդ հաշվետվությունում Խումբը, ելնելով վերջին տարիների դիտարկումների արդյունքից, առաջարկել էր հիմնովին վերակառուցել կամ փակել հիմնարկը, ՀՀ արդարադատության նախարարության կողմից պաշտոնական մեկնաբանության մեջ, այս մասին տրվել էր հետևյալ պատասխանը. «Հիմնանորոգման աշխատանքների իրականացումը կամ փակման հարցը կքննարկվի ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում»: Որքան հայտնի է Խմբին, այդ բարեփոխումները նախատեսում են մինչև 2018 թվականը, որը ենթադրում է, որ չեն արվելու վերանորոգման աշխատանքներ և ազատագրվածները շարունակելու են պահվել և ապրել այդ պայմաններում: Հարկ է նշել, որ պաշտոնական մեկնաբանություններում, Խմբի կողմից եղած առաջարկությունների և դիտողությունների մի մասին ընհանրապես անդրադարձ չի եղել նախարարության կողմից:

Կապիտալ վերանորոգվել է արտաքին ջրամատակարարման համակարգը, իսկ ջրամատակարարման խնդիրը կապված է տվյալ տարածքի ընդհանուր ջրամատակարարման հետ: Բոլոր կացարաններում կառուցվել են առանձնացված սանհանգույցներ (20 հատ)՝ կից լվացարաններով: Լոգանքը տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը մի շարք առաջարկություններ էր կատարել՝ ուղղված իրավիճակի բարելավմանը: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են:

Դիտորդական խումբն առաջարկում է հիմնովին վերակառուցել կամ փակել հիմնարկը ամենակարճ ժամանակում:

«Կոշ» ՔԿՀ

«Կոշ» ՔԿՀ-ն նախատեսված է միայն դատապարտյալներին պահելու համար: Քանի որ հիմնարկը հանրակացարանային տիպի է, հնարավորություն ունի միայն բաց ու կիսաբաց պայմաններ ապահովելու: Սակայն, ըստ լրակազմի, հիմնարկում նախատեսված է պահել հիմնականում կիսափակ ռեժիմի դատապարտյալներ:

Անցած տարվա ընթացքում հիմնարկում կատարվել են որոշ վերանորոգման աշխատանքներ հանրակացարաններում: Բացի այդ վերանորոգվել են լվացարանները: Որոշ աշխատանքներ կատարվել են նաև խոհանոցում, սակայն, օդափոխության համակարգի բացակայության պատճառով, խոհանոցի առաստաղը շարունակում է խոնավանալ:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը մի շարք առաջարկություններ էր կատարել ուղղված իրավիճակի բարելավմանը: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են:

Առաջարկություններ՝

1. Հիմնովին վերակառուցել հիմնարկը՝ ապահովելով օրենսդրությամբ նախատեսված ազատազրկվածների պահման խցային տիպ:
2. Բարելավել հիմնարկի ջեռուցումը:
3. Վերացնել հեռախոսից օգտվելու ժամերի սահմանափակումը:
4. Հանձնուժի ընդունման կետին կից կառուցել սանհանգույց:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում իրավիճակի բարելավմանն ուղղված Խմբի կողմից արված հիմնավոր և ողջամիտ առաջարկություններն ընդունվել են և ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

1, 2, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12. Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 2-րդ, 18-րդ և 19-րդ կետերում:

3. Մեկնաբանությունը տես «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 8-րդ կետում:

5. Կապիտալ վերանորոգել լոգարանի մասնաշենքը:
6. Լոգարանին կից կառուցել զուգարան:
7. Կապիտալ վերանորոգել բուժմասի մասնաշենքը:
8. Լրացնել գրքերի ֆոնդը հայերեն գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրքերով:
9. Բաժանորդագրության միջոցով ապահովել գրադարանը թարմ մամուլով:
10. Խոհանոցում ապահովել օդափոխության համակարգ:
11. Ապահովել պատժախցերում բավարար բնական լուսավորություն:
12. Կառուցել կարանտինային խցեր:

«Հրազդան» ՔԿՀ

«Հրազդան» ՔԿՀ-ն գործում է 2008 թվականի հունիսից: Այն փակ խցային տիպի է և ի սկզբանե նախատեսված է եղել կալանք պատժատեսակ կրող դատապարտյալներին պահելու համար: Սակայն հետագայում, հաշվի առնելով որ կալանք պատժատեսակի դատապարտվածների քանակը քիչ է (մինչև 10 մարդ ամբողջ հիմնարկում) որոշվեց այնտեղ տեղափոխել նաև փակ տիպում պատիժը կրող դատապարտյալների:

Հիմնարկը վերանորոգված և կահավորված է:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը նշել է. «ՔԿՀ-ն գտնվում է Հրազդան քաղաքի տարածքում, բնակելի շենքերի հարևանությամբ և հիմնարկի խցերը մոտակա շենքերի պատուհաններից ամբողջությամբ տեսանելի են, ինչը, հաշվի առնելով, որ խցերի պատուհաններին վարագույրներ չկան, կարող է անհարմարությունների պատճառ հանդիսանալ»: Նշված խնդիրն առաջնահերթ դարձավ հիմնարկի լիարժեք շահագործման ընթացքում: Ներկայումս, դատապարտյալների կողմից տույժեր ստանալու հիմնա-

5. Բաղնիքը հիմնովին վերանորոգվել է:

11. Ծինության կոնստրուկտիվ պայմանները թույլ չեն տալիս իրականացնել նոր բացվածքներ:



կան պատճառը պատուհանից քաղաքի բնակիչների հետ զրույցի բռնվելն է: Ավելին, արգելված իրերի փոխանցել-ստանալու վտանգ կա :

2008 թվականի համեմատ կտրուկ ավելացել է հիմնարկում պահվող ազատագրվածների քանակը: Հաշվի առնելով, որ կալանք պատժատեսակի դատապարտվածները չունեն երկարատև տեսակցության իրավունք, այդպիսի սենյակ հիմնարկում ի սկզբանե նախատեսված չի եղել: Ներկայումս գործում է 1 կարճատև և 2 երկարատև տեսակցության սենյակներ:

2008 թվականի Խմբի տարեկան հաշվետվությունում կատարված որոշ առաջարկություններ ի կատար են ածվել: Մասնավորապես փոխվել է հիմնարկի լրակազմը և այժմ այնտեղ պահվում են ոչ միայն կալանք պատժատեսակի դատապարտվածները, բարելավվել են տեսակցության սենյակների պայմանները: Այդուամենայնիվ որոշ առաջարկություններ մնում են արդիական և այժմ:

Առաջարկություններ`

1. Ապահովել հիմնարկի շուրջօրյա ջրամատակարարումը:
2. Կառուցել և համապատասխան սարքավորումներով հագեցնել հանձնուքների ընդունման կետը:
3. Ապահովել կարճատև տեսակցությունների սենյակը սանհանգույցով:
4. Ստեղծել առանձին խոհանոցներ, յուրաքանչյուր երկարատև տեսակցությունների սենյակների համար:
5. Երկարատև տեսակցությունների սենյակներն ապահովել բավարար օդափոխությամբ:
6. Հանձնուքի ընդունման կետը բարեկարգել և համալրել բացակայող անհրաժեշտ պարագաներով և համապատասխան սարքավորումներով:
7. Կահավորել լոգարանների հանդերձարանները համապա-

1. Մատակարարվում է ըստ տարածաշրջանի ժամանակացույցի: Հնարավորության դեպքում կապահովվի:
2, 3, 4, 6, 7, 10, 11. Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 2-րդ, 18-րդ և 19-րդ կետերում:

5. Երկարատև տեսակցությունների սենյակներն ապահովված են բավարար օդափոխությամբ

տասխանորեն:

8. Ուշադրություն դարձնել հացի պահպանման հիգիենայի կանոններին:
9. Չքոսահրապարակներում տեղադրել նստարաններ և տեղումներից պաշտպանող ծածկեր:
10. Չքոսահրապարակներն ապահովել մարզական գույքով:
11. Լրացնել գրքերի ֆոնդը գեղարվեստական գրքերով, բառարաններով և ուսումնական գրականությունով:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն հանդիսանում է միակ մասնագիտացված բուժաստատությունը քրեակատարողական համակարգում:

Այս քրեակատարողական հիմնարկ տեղափոխվում և պահվում են այն ազատագրվածները, որոնք ունեն առողջական լուրջ խնդիրներ և կարիք ունեն մասնագիտացված օգնության, որը չի կարող ապահովվել համակարգի մյուս քրեակատարողական հիմնարկների բուժմասերում:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն ունի 3 գոտի: Հիվանդանոցում տեղակայված են բաժանմունքներ՝ վիրաբուժական, ատամնաբուժական, ֆիզիոթերապիայի և ֆունկցիոնալ ախտորոշման, ինֆեկցիոն, թերապևտիկ, թոքախտաբանական, նարկոլոգիական, կլինիկակենսաբանական լաբորատորիա, դեղագործական: Հարկ է նշել, որ նարկոլոգիական բաժանմունքը, որը նախկինում գտնվում էր թոքախտաբանական բաժանմունքի շենքում, 2008թ. վերակառուցումից հետո, ունի իր առանձնացված շենքը:

Դիտորդական խումբը բազմիցս բարձրացրել է «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի Երևան քաղաքի կենտրոնում, բնակելի շենքերի և հիմնարկների մոտ տեղակայված լինելու հար-

8. Հիգիենայի կանոնները պահպանվում են:

9. Կատարված է:

Մեկնաբանությունները տե՛ս «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, կետում:



ցը: Խումբը գտնում է, դա դատապարտյալների և հարակից շենքերի բնակիչների կապը հիմնարկում հաճախ կատարվող խախտումների պատճառ է հանդիսանում:

2008 թվականի տարեկան հաշվետվությունում Խումբը մի շարք առաջարկություններ էր կատարել՝ ուղղված իրավիճակի բարելավմանը: Այդ առաջարկությունների մեծ մասն այժմ էլ արդիական են:

Առաջարկություններ՝

1. Ապահովել հիմնարկը ջեռուցման կենտրոնացված համակարգով:
2. Վերակառուցել վիրաբուժական բաժանմունքի մասնաշենքը:
3. Ատամնաբուժական բաժանմունքին հատկացնել ատամնաբուժական ռենտգեն սարք և ՄԻԱՎ-ով և ՁԻԱՀ-ով հիվանդների համար նախատեսել առանձին պարագաներ:
4. Վերանորոգել թերապևտիկ բաժանմունքի մասնաշենքը:
5. Ապահովել բաժանմունքներն անհրաժեշտ սարքավորումներով:
6. Ստեղծել վերակենդանացման բաժանմունք:
7. Վերանայել ՀՀ Կառավարության 26.05.2006թ. N825 որոշման 110 կետը:
8. Ավելացնել կարճատև տեսակցության սենյակների քանակը:
9. Հանձնուքի ընդունման կետի համար հատկացնել ավելի մեծ սենյակ:
10. Ապահովել հանձնուքի ընդունման կետը սանհանգույցով:
11. Հիմնանորոգել լոգարանի հանդերձարանը:

1, 2, 3, 4, 5, 10, 11, 12, 13, 14, 15, 16. Մեկնաբանությունները տես «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին, 2-րդ, 18-րդ և 19-րդ կետերում:

6. Վերակենդանացման բաժանմունքի ստեղծումը պահանջում է մեծ ֆինանսական ծախսեր և կադրային ռեսուրսներ, ուստի անհրաժեշտության դեպքում հարցը կարգավորվում է առողջապահական մարմինների հետ սերտ համագործակցության շրջանակում:

7. Նախատեսվում է կատարել փոփոխություններ և լրացումներ ՀՀ Կառավարության 26.05.2006թ. N825 որոշման մեջ:

8. Կարճատև տեսակցության սենյակների քանակը բավարար է:
9. Հանձնուքների ընդունման կետի տարածքը բավարար է:

12. Ապահովել հանդերձարանը անհրաժեշտ քանակությամբ գույքով:
13. Ապահովել հանդերձարանի և լոգարանի ջեռուցումը:
14. Գրադարանին տրամադրել նոր տարածք:
15. Գրադարանին հատկացնել ընթերցասրահ:
16. Համալրել գրադարանը նոր գրքերով:

«Մեղրի» ՔԿՀ

«Մեղրի» քրեակատարողական հիմնարկը քրեակատարողական համակարգում միակ հիմնարկն է, որտեղ դատապարտյալները պահվում են միայն բաց ուղղիչ հիմնարկի պայմաններում: Հիմնարկը տեղակայված է ՀՀ Սյունիքի մարզի Նռնաձոր գյուղից 7 կիլոմետր հեռավորության վրա, սահմանամերձ գոտում:

Հիմնարկի կացարանը և սանիտարական պայմանները չեն համապատասխանում ընդունված չափանիշներին: Այցելությունների ընթացքում խումբը ներկայացրել է երկու հրատապ հաշվետվություն, առաջարկելով դադարեցնել հիմնարկի շահագործումը:

Հաշվետվության պատրաստման պահին «Մեղրի» ՔԿՀ-ն դադարել էր առանձին հիմնարկ լինելուց և դարձել էր « Գորիս» ՔԿՀ-ի մասը: Սակայն այդ տարածքում շարունակվում են մարդիկ պահվել, ինչի մասին խումբը շարունակում է հայտնել իր մտահոգությունը:

Առաջարկություններ`

1. Արգելել նախկին «Մեղրի» ՔԿՀ-ի տարածքում ազատազրկվածներ պահելը, մինչև այնտեղի պահման պայմանները չհամապատասխանեցվեն օրենսդրության պահանջներին:

Մեկնաբանությունները տե՛ս «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի առաջարկությունների վերաբերյալ 1-ին և 2-րդ կետերում:

**ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ**

**ՔԿՀ-ներում դիսպանսերիզացիայի ուսումնասիրություն
Նախաբան**

Դիսպանսերիզացիան հանդիսանում է կալանավորված անձանց և դատապարտյալների առողջական վիճակի ակտիվ ուսումնասիրմանը, նրանց կենցաղի և աշխատանքի պայմանների բարելավմանը, ինչպես նաև համապատասխան բուժկանխարգելիչ, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների միջոցով հիվանդությունների կանխարգելմանը միտված աշխատանք:

Հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ դիսպանսերային հսկողությունն իրականացնում են բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի կամ խմբի բժիշկ-մասնագետները, հիմնարկի վարչակազմը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման 1-ին կետի ,գե ենթակետով հաստատված ժամանակացույցին համապատասխան:

Դիսպանսերիզացումը նպատակ ունի՝

1. հիվանդության վաղ փուլում հայտնաբերել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին:
2. ժամանակին անցկացնել առողջարարական և հակառեցի-դիվային միջոցառումներ՝ հիվանդությունների կանխարգելման և սրացումը կանխելու նպատակով:
3. ուսումնասիրել կալանավորված անձանց և դատապարտյալների աշխատանքային և կենցաղային պայմանները և կազմակերպել դրանց բարելավմանն ուղղված միջոցառումներ:
4. ժամանակին հսկողության տակ վերցնել բուժօգնության կարիք ունեցողներին:
5. նպաստել դատապարտյալների առողջ վերադարձին հասարակություն:
6. հիվանդությունների կանխարգելման, տարածման կանխ-

ման, բուժման նպատակով ժամանակին և լիարժեք կազմակերպել բուժկանխարգելիչ, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ:

Ընդհանուր նկարագրություն

2009 թվականին կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերիզացիան ուսումնասիրելու նպատակով Դիտորդների խումբն այցելել է որոշ քրեակատարողական հիմնարկներ: Դիտարկման ընթացքում պարզվել է, որ, քրեակատարողական հիմնարկի բուժառաջարկությունում, ընդհանուր առմամբ, ազատազրկվածների նկատմամբ դիսպանսեր հսկողություն չի իրականացվում, որի հետևանքով վերը նշված դրույթները չեն կատարվում:

Որոշ ՔԿՀ-ում չեն հետևում հիվանդ ազատազրկվածների բժշկական քարտերի, ինչպես նաև բուժմասում պառկած հիվանդների հիվանդության պատմագրերի կազմանը և ձիշտ վարմանը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. Մայիսի 26-ի N825-ն որոշման 7-րդ գլխի 55 կետի: Դիտորդների խումբն արձանագրել է բժշկական քարտերով չհիմնավորված դեղորայքի դուրս գրման փաստեր, ինչը հակասում է վերը նշված 8-րդ գլխի 64-րդ կետին:

Ստացիոնար բուժօգնության ոչ բավարար ազդեցություն ունենալու դեպքում, հիվանդ ազատազրկվածներին բուժական ուղղիչ հիմնարկ կամ այլ բուժական հիմնարկներ փոխադրելու համար, Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնից համաձայնություն ստանալը ժամանակի ձգձգում է, որի պատճառով հիվանդությունը ավելի է խորանում, կամ անդարձելի հետևանքներ է ունենում:

Օրվա հրամայական է դառնում բժիշկների վերապատրաստման անհրաժեշտությունը, որը պետք է պարբերական բնույթ կրի:

ՀՀ կառավարության 26.05.2006թ. N825 որոշմամբ հաստատված կարգի պահանջները լիարժեք և ամբողջական կատարելու համար պետք է ՔԿ համակարգի բժշկական ստորաբաժանումները ապահովված ու համալրված լինեն անհրաժեշտ լաբորատոր-ախտորոշիչ սարքավորումներով և համապատասխան նեղ մասնագետներով: Նշված ուղղությամբ ՔԿ վարչության կողմից տարվում են աշխատանքներ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար, առնվազն շաբաթը մեկ անգամ կատարել ստացիոնարում բուժում ստացող հիվանդների համայց, հիվանդության պատմագրերում կատարելով համապատասխան գրառումներ:

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ կալանավորված անձանց և դատապարտյալների տեղափոխումն իրականացվում է համաձայնեցնելով վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի հետ, բացառությամբ անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալու դեպքերի (ՀՀ կառավարության 26.05.2006թ. N825 որոշման 59-րդ կետ): ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ կալանավորված անձանց և դատապարտյալների տեղափոխումը կար-

**Առանձին ՔԿՀ-ում դիտարկման արդյունքները
«Վարդաշեն» ՔԿՀ**

Բուժմասում աշխատում է 2 բժիշկ՝ անեստեզիոլոգ-ռեանիմատոլոգ, կարդիոլոգ և 4 բուժակ, ինչպես նաև ազատ վարձու բժիշկներ՝ նյարդաբան, մաշկավեներոլոգ:

Թերապևտիկ հիվանդ ազատազրկվածների դիսպանսեր հաշվառման մատյանում գրանցված էին 22 անձ, բայց նրանց նկատմամբ դիսպանսեր հսկողություն չի իրականացվում՝ ՀՀ կառավարության 26 մայիսի 2006թ N825-ն Որոշման 14-րդ գլխում ներառված դրույթների և NN 3, 4, 5, 6, 7 հավելվածների սահմանված ժամանակացույցերի համաձայն:

Բուժմասում պառկած ազատազրկվածները չունենին հիվանդության պատմագրեր: Նախապես համաձայնություն ստանալով՝ բժշկական քարտերում նույնպես գրառումներ չկային բուժման ժամանակահատվածում նրանց առողջական վիճակի մասին:

Հիվանդ ազատազրկվածներին տրվող դեղորայքը հիմնավորված չէ: Բժշկական քարտում չկար որևէ գրառում տվյալ պահին հիվանդի առողջության վիճակի մասին, բայց դատապարտյալներից մեկը ցույց տվեց դեղորայք, որը տրվել էր բժշկի կողմից և հավաստիացրեց, որ ավելի քան մեկ շաբաթ բուժում էր ստանում:

գագրով կազմակերպելու դեպքում գործնականորեն բացառվում են անհիմն հոսպիտալացման դեպքերը, ինչը նպաստում է մահճակալային ֆոնդի արդյունավետ և նպատակային օգտագործմանը: Ակնառու է միայն կարգագրերի միջոցով, Դատապարտյալների հիվանդանոցե քրեակատարողական հիմնարկ կալանավորված անձանց և դատապարտյալների տեղափոխման անհրաժեշտությունը:

2009-2010թթ. ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ թվով 9 բժիկներ վերապատրաստում են անցել ՀՀ առողջապահության նախարարության ազգային ինստիտուտում:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար, առնվազն շաբաթը մեկ անգամ կատարել ստացիոնարում բուժում ստացող հիվանդների համայց, հիվանդության պատմագրերում կատարելով համապատասխան գրառումներ:

Բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում ոչ հիվանդ ազատազրկվածների գտնվելը պայմանավորված է եղել ոչ բժշկական ցուցումներով կամ հիմնարկի գերբնակեցմամբ:

Նշված դեղորայքը եղել է ընդհանուր ցավազրկող ազդեցության դեղահաբեր, որոնք հիվանդը ընդունել է ըստ անհրաժեշտության:

ՀՀ կառավարության 2006թ.մայիսի 26 N825-ն որոշման մեջ առկա է բժշկական սպասարկման ստորաբաժանումներում վարվող մատյանների ցանկը: Լրացուցիչ մատյանների վարումն իրականացվում է ստորաբաժանումների կողմից ըստ անհրաժեշտության:

Բժիշկը հաստատեց փաստը, չնայած բժշկական քարտում դարձյալ չկար համապատասխան հիմնավորում: Բուժակի ստորագրությամբ 01.06.2009թ. տրվել էր 10 հաբ ինդոմետացին տեսակի դեղորայք, սակայն հիվանդի մոտ 2 տեսակի դեղորայք կար, որոնց անվանումները դժվարացանք կարդալ:

Ըստ բժշկի նշանակվել է ինդոմետացինի հաբերը, որը նախատեսված էր 5 օրվա համար (ըստ բժշկի՝ մեկ հաբից օրը երկու անգամ), բայց անցել էր 8 օր՝ հիվանդը չհիմնավորված դեղորայքը, չհիմնավորված ժամանակացույցով, շարունակում էր խմել: Այս դատապարտյալը, չնայած վերցված է դիսպանսեր հաշվառման, բայց և այնպես բժիշկի կողմից առողջական վիճակի մասին գրառում կատարվել էր միայն 2007թ.-ին

Առաջարկություններ՝

1. Կազմակերպել դիսպանսեր հսկողությունը՝ համաձայն Հ.Հ. կառավարության 2006թ. մայիսի 26 N825-ն որոշման 14-րդ գլխում ներառված դրույթների:
2. Խստագույնս հետևել բժշկական քարտերի և հիվանդության պատմագրերի կազմմանը և ծիշտ վարմանը՝ համաձայն ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26 N825-ն որոշման 7-րդ գլխի 55 կետի և սույն որոշման 6-րդ գլխի կետ 47-ի:
3. Կարել և ՔԿՀ-ի պետի կնիքով ամրագրել բուժմասի բուժակի կողմից դեղորայք տրամադրելու մատյան: Հիմնավորել դեղորայք տալու անհրաժեշտությունը՝ համաձայն վերը նշված որոշման 64 կետի:

«Էրեբունի» ՔԿՀ

Հիմնարկում չի իրականացվում դիսպանսեր հսկողություն: Չնայած բուժմասում կա դիսպանսեր հսկողության մատյան, որտեղ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ

հաշվառված են հիվանդ դատապարտյալները, սակայն այն ձևական բնույթ է կրում: Բժիշկը հայտարարեց, որ չի կազմակերպում և չի էլ կարող իրականացնել դիսպանսեր հսկողություն:

Առաջարկություն՝

1. Կազմակերպել դատապարտյալների դիսպանսերիզացիա:

«Կոշ» ՔԿՀ

Այցի պահին «Կոշ» ՔԿՀ-ի բուժմասում կար 7 հիվանդ, բոլորի համար բացված էին հիվանդության պատմագրեր:

Դիսպանսերիզացումը կազմակերպված էր բավարար մակարդակի: Մասնավորապես՝ դիսպանսեր մատյանում հաշվառված մի քանի դատապարտյալների թույլտվությամբ ուսումնասիրված նրանց իսկ բժշկական քարտերում կար գրառումներ անհրաժեշտ նեղ մասնագետների կողմից, որը և հաստատում էին դատապարտյալները:

Կատարվել էին կարմրուկի և կարմրախտի պատվաստումներ, կային համապատասխան ուղեցույցներ և կատարողականներ:

«Արույան» ՔԿՀ

Հիվանդ ազատագրվածների դիսպանսեր հսկողություն ըստ ՀՀ կառավարության N825-ն որոշման 14-րդ գլխի համաձայն այստեղ չի իրականացվում:

Թերապևտիկ հիվանդների դիսպանսեր հաշվառման մատյանում գրանցված էին 42 հիվանդներ: Նրանք չեն հետազոտվում ըստ օրենքի նախատեսված մասնագետների կողմից և ժամանակացույցի:

Պատճառը, ըստ բժշկի, համապատասխան մասնագետներ չունենալն է:

հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար:

Կալանավորված անձինք և դատապարտյալներն ամենամյա ընդգրկվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունե-

Մաշկային հիվանդություն ունեցող ազատագրկվածին /հավանական է նեյրոդերմիտ/, մաշկաբանի այց երբևէ չի կազմակերպվել: Երկաթ-դիֆիցիտային անեմիայով հիվանդին նույնիսկ հեմոգլոբինի հետազոտություն կամ հեմոտոլոգի կողմից զննում չի կատարվել:

ՔԿՀ-ում չկա լաբորատոր հետազոտությունների համար նախատեսված համակարգ, որի պատճառով անարդյունավետ է գինեկոլոգի աշխատանքը, ինչպես նաև թերապևտիկ բուժման կազմակերպումն ու դիսպանսեր հսկողությունը:

Դատապարտյալի ընդունման ժամանակ լիարժեք չի կազմակերպվում բուժզննում: Հաշվի առնելով կանաց և անչափահասների առողջական առանձնահատկությունները, չեն կազմակերպվում համապատասխան լաբորատոր հետազոտություններ, մասնավորապես, կանաց մոտ սեռավարակների հայտնաբերման ուղղությամբ՝ ՔԿՀ ընդունման պահին, նշված որոշման 37, 40, 41 կետերի համաձայն:

ՔԿՀ-ում նորածինների և երեխաների բուժապասարկում, մասնավորապես պատվաստումների կազմակերպումը թերի է: Համապատասխան պայմանագրեր չկան տարածքային բուժամբույատորիաների հետ:

Չի կազմակերպվում հանրապետության առողջապահության նախարարության համապատասխան չափորոշիչներով ՀՀ ողջ բնակչության համար նախատեսված ցուցումները /մասնավորապես լաբորատոր հետազոտությունները անչափահասների մոտ/:

Առաջարկություններ

1. Կազմակերպել դիսպանսեր հսկողություն:

2. Պայմանագրերով կազմակերպել տարածքային բուժմիավորումներում կանանց և երեխաների բուժապասարկումը, որպեսզի անհրաժեշտության պահին կարողանան կազմակերպել լիարժեք բուժօգնություն և բուժկանխարգելիչ միջոցառումներ (ծննդատուն,

ցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում, ուստի քրեակատարողական հիմնարկում կամ «Դատապարտյալների հիվանդանոց» հետազոտման և բուժման ծավալների ոչ բավարար լինելու դեպքում խնդիրը կարգավորվում է առողջապահական մարմինների բուժական հիմնարկների և դրանց մասնագետների միջոցով:

Ըստ անհրաժեշտության հիմնարկը պայմանագրային հիմունքներով ընդունում է աշխատանքի նեղ բժիշկ մասնագետների:

Հնարավորության դեպքում կկազմակերպվի վերապատրաստում «ընտանեկան բժիշկ» մասնագիտությամբ:

հիվանդանոց, պոլիկլինիկա):

3. Անհրաժեշտության դեպքում պայմանագրային հիմունքներով ապահովել համապատասխան նեղ մասնագետների մասնակցությունը, որոնք կհետազոտեն և կկազմակերպեն համապատասխան բուժում կամ խորհրդատվություն:

4. Բժշկի վերապատրաստում՝ ընտանեկան բժշկի մասնագիտությամբ, որպեսզի լիարժեք կազմակերպվի և երեխաների, և կանաց բուժապասարկումը:

«Նուբարաշեն» ՔԿՀ

Չնայած «Նուբարաշեն» ՔԿՀ-ն մյուս հիմնարկների համեմատությամբ առավելագույնս ապահովված է նեղ մասնագետ բուժանձնակազմով, այդուամենայնիվ հիմնարկում դիսպանսեր հսկողություն թերապևտիկ հիվանդների նկատմամբ չի իրականացվում:

Հոգեկան հիվանդների և հոգեակտիվ նյութերից կախվածություն և հակում ունեցող հիվանդների նկատմամբ դինամիկ հսկողությունը կատարվում է թերի: Ազատագրկվածների ասելով, բժիշկը այցելում է, երբ նրան դիմում են:

Առաջարկություն

1. Կազմակերպել լիարժեք դիսպանսեր հսկողություն:

«Վանաձոր» ՔԿՀ

Հաշվառման մատյանում հաշվառված էր 19 ազատագրկված, որոնց նկատմամբ դիսպանսեր հսկողություն չի կազմակերպվում:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար:

Այցիի ընթացքում պարզ դարձավ, որ կան հիվանդ դատապարտյալներ, որոնք տառապում էին խրոնիկ հիվանդություններով /ստամոքսի խոց. ռեմատոիդ արթրիտ և այլն/, բայց նրանք չեն վերցվել դիսպանսեր հաշվառման: Նեղ մասնագետների խորհրդատվությունը դժվարամատչելի է: Դեղորայք տրվում է ազատազրկվածներին առանց հիմնավորման:

Առաջարկություններ`

1. Կազմակերպել դիսպանսեր հսկողություն:
2. Հիմնավորել դեղորայք տալու անհրաժեշտությունը:

«Սևան» ՔԿՀ

Այցելության պահին ՔԿՀ -ում մոտ մեկ ամիս է բժշկ չկար: Դիսպանսեր հսկողություն չի իրականացվում: Բուժմասում պառկած հիվանդների համար բացված հիվանդության պատմագրերից ոմանց մեջ գրառումները ընդանրապես բացակայում էին, նույնիսկ բացման ամսաթիվը, այնինչ դատապարտյալը նշում էր, որ մոտ 3 ամիս է բուժում է ստանում բուժմասում: Որոշ հիվանդության պատմագրերում վերջին գրառումը կատարվել էր մարտ-ապրիլ ամիսներին, բայց ազատազրկվածները շարունակում էին իրենց չհիմնավորված բուժումը ստանալ բուժմասում: Դեղորայքը տրվում էր առանց գրավոր հիմնավորման: Այցելության պահին դեղորայքի պակասի խնդիր կար:

Առաջարկություններ`

1. Ապահովել անհրաժեշտ բուժանձնակազմով, կազմակերպել նրանց մասնագիտական վերապատրաստումը:
- 2 Կազմակերպել դիսպանսեր հսկողությունը` համաձայն Հ.Հ. կառավարության 2006թ.մայիսի 26 N825-ն որոշման 14-րդ գլխում

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար:

2. Դեղորայք տրվում է համաձայն բժշկական ցուցումների:

Թերությունները պայմանավորված են եղել բժշկական հաստիքների թափուր լինելով: Ներկայումս բժշկական սպասարկման 7 հաստիքներից համալրված են 6-ը` թափուր է 1 երրորդ կարգի մասնագետի հաստիքը: Ծարունակվում է քրեակատարողական համակարգը բժշկական մասնագետներով համալրելու գործընթացը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսերացման աշխատանքները կազմակերպելու համար, ինչպես նաև հետևել բժշկական բոլոր փաստաթղթերի լրացման ճշտությանը և ամբողջականությանը:

Յուրաքանչյուր տարվա համար հիմնարկի բժշկական սպասարկման բաժինը ՔԿ վարչություն է ներկայացնում անհրաժեշտ դեղորայքի և բժշկական պարագաների ցանկ, որը ձեռք է բերվում կենտրոնացված ձևով, մրցույթային կարգով:

ներառված դրույթների և սույն որոշման 1-ին կետի ,գե ենթակետում նշված ժամանակացույցով:

3. Խստագույնս հետևել բժշկական քարտերի և հիվանդության պատմագրերի կազմմանը և ճիշտ վարմանը:
4. Ապահովել համապատասխան նեղ մասնագետների կցում / պայմանագրային/ տարածքային կամ այլ բուժմիավորումներից, որոնք անհրաժեշտության դեպքում կհետազոտեն և կկազմակերպեն համապատասխան բուժում կամ խորհրդատվություն:
5. Ապահովվել անհրաժեշտ դեղորայքով:
6. Տարածքային դեղատնից օգտվելու համակարգ մշակել՝ լրացնելով կետորոնացված դեղամատակարարումը:

ԲՈՒԺՄՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԸՍՏ ԱԶԱՏԱԶԱՐԿՎԱԾՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ

Այս հետախուզական ուսումնասիրությունը իրականացվել է 12 ՔԿՀ-ներում, յուրաքանչյուր հիմնարկում իրականացվել է առնվազն 7 հարցում: Ընդհանուր առմամբ, հարցման են ենթարկվել 100 դատապարտյալներ: Ուսումնասիրության նպատակն էր՝ պարզել մատուցվող բուժապասարկման վիճակը:

ՔԿՀ-ներում ազատազրկվածներն ընդունվելիս ենթարկվում են բուժզննման, երբեմն ավելի ուշ: Չննումը կատարում է բուժաշխատողը, հաճախ ուղեկցողի կամ ՔԿՀ-ի վարչակազմի աշխատակցի ներկայությամբ: Հարցման ենթարկված ազատազրկվածների մեծամասնությունը ՔԿՀ ընդունվելիս ունեցել է առողջական տարբեր խնդիրներ և չեն ենթարկվել անհրաժեշտ բժշկական հետազոտության: Առողջական խնդիրներով ազատազրկվածներ, ՔԿՀ ընդունվելիս, այլ հետազոտությունների (լաբորատոր, սոնոգրաֆիկ, ռենդենոգրաֆիկ և այլն) հիմնականում չեն ենթարկվում: Բուժճառա-

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների պետերին ՔԿ վարչության պետի կողմից 18.01.2011թ.-ին թիվ 40/8-112 գրությամբ հանձնարարվել է անձնական հսկողություն սահմանել ՀՀ կառավարության 16.05.2006թ.թիվ 825 որոշման պահանջների կատարման նկատմամբ, որտեղ ուշադրություն է հիավիրվել տեղ գտած թերությունների վերացմանը և բացառմանը:

Ծխող և չծխող ազատազրկվածների տարանջատումը կապահովվի հիմնարկի լրակազմի համապատասխանացնելու դեպքում:

Խցերի սան.հանգույցներում ախտահանման գործընթացը կատարվում է ՀՀ ոստիկանության ՀՀԿ-ի աջակցությամբ: Ներկայումս ՔԿ հիմնարկներում կատարվում են սան-լուս աշխատանքներ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, տուբերկուլոզ և այլն):

Դեղորայքը ձեռք է բերվում կենտրոնացված ձևով, մրցույթային կարգով:

յության առկայության և նրանից օգտվելու իրավունքի մասին ազատագրկվածներին իրազեկված են և օգտվում են բուժօժանայությունից: Անհրաժետության դեպքում դատապարտյալների մի մասը բուժում է ստացել ՔԿՀ-ի բուժմասում, իսկ ոմանք բուժում ստացել են խցերում, հանրակացարաններում: Սակայն անհրաժեշտության դեպքում դժվարությամբ է հիմնարկի վարչակազմը տեղափոխում դատապարտյալների հիվանդանոց կամ քաղաքացիական հիվանդանոց:

ՔԿՀ-ներում բոլոր ազատագրկվածները պարտադիր անցնում են ֆյուրոգրաֆիկ հետազոտություն տարին 2 անգամ:

ՔԿՀ-ներում ամենօրյա բժշկական այցելություն կատարում է բուժակը, իսկ բժիշկը՝ ըստ անհրաժեշտության (եթե ՔԿՀ-ում կա բժիշկ): Բուժ. զննում կատարում է բժիշկը, իսկ նրա բացակայության ժամանակ՝ բուժակը: Հիվանդ դատապարտյալներին դեղորայքային բուժում նշանակում է բժիշկը, որոշ ՔԿՀ-ներում, որտեղ բժիշկ չկա բուժումը նշանակում է բուժակը: Դեղորայքը տրվում է բուժաշխատողի կողմից՝ ամենօրյա անհրաժեշտ դեղորայքային չափաբաժնով, երբեմն միանգամից տրվում է ամբողջ անհրաժեշտ դեղաբաժինը, բացի ներարկվող դեղորայքից: Ներարկումները կատարում է բուժակը:

Անհրաժեշտության դեպքում դեղամիջոցներ ազատագրկվածը ձեռք է բերում ՔԿՀ-ի բուժկետից անվճար և հանձնուքի միջոցով: Ազատագրկվածները իրազեկված են և կարող են ընտրել ՔԿՀ-ի բժշկին կամ օգտվել այլ բժշկի ծառայությունից՝ ցանկացած բուժհիմնարկից, իրենց միջոցներով: Բժշկական ծառայությունը ՔԿՀ-ներում անվճար է: Ցանկության դեպքում կատարվում է անհրաժեշտ լաբորատոր հետազոտություններ: Կան ՔԿՀ-ներ որտեղ դժվարամատչելի են լաբորատոր-գործիքային հետազոտությունները

Հացադուլ հայտարարելիս ազատագրկվածները տեղափոխվում են հացադուլավորների խուց, որտեղ բժիշկը կատարում է ամենօրյա այցելություն: Սակայն մեծ խնդիր է հացադուլավորների լրգանք ընդունելու հարցը, որը սովորաբար չի կազմակերպվում:

Ազատագրկվածների մեծ մասը տառապում է քրոնիկ հիվան-

Բացառված է ժամկետանց դեղորայքի օգտագործումը:

ՔԿ վարչությունը պայմանագիր է կնքել համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպության հետ առկայության դեպքում ժամկետանց դեղորայքի ոչնչացման համար:

Հիմնարկների բժշկական ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է, անհետաձգելի բուժօգնություն ցուցաբերելու նպատակով, անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով համալրել համապատասխան հավաքածուները:

դրություններով, սակայն նրանց բուժզննումը կատարվում է ըստ ազատագրկվածի դիմումի: Դիսպանսեր հսկողություն նրանց նկատմամբ չի կատարվում: Նեղ մասնագետների այց չի կազմակերպվում ըստ ՀՀ կառավարության 2006թ մայիսի 26-ի 825-ն որոշմամբ սահմանված ժամանակացույցի (տե՛ս դիսպանսեր հսկողության կազմակերպման մասը):

Չծխողները առանձնացվում են ըստ պահանջի, սակայն նրանց համար նախատեսված պայմաններ չկան:

Ազատագրկվածները նշում են, որ խցերի սանհանգույցներում ախտահանումը կատարում են իրենք, հազվադեպ, ուղղակի ցանելով ախտահանող փոշին (նյութը):

Ազատագրկվածները բուժսպասարկման որակը հիմնականում գնահատում են միջին (առաջարկված տարբերակներն էին՝ գերազանց, լավ, միջին, վատ, չափազանց վատ):

Առաջարկություններ՝

1. Ազատագրկվածներին ՔԿՀ ընդունելիս ենթարկել պարտադիր բուժզննման՝ համաձայն ՀՀ կառավարության 825 Ն որոշման գլուխ 5-ի

1. ՔԿՀ ընդունվելիս բացառել ուղեկցող ոստիկանի կամ ՔԿՀ-ի աշխատակցի ներկայությունը բուժզննման ժամանակ.
2. Կազմակերպել ՔԿՀ ընդունվելիս առողջական խնդիրներ ունեցող ազատագրկվածների լիարժեք հետազոտությունները և բուժումը:
3. Կատարել ՀՀ կառավարության 825-ն որոշման գլուխ 3-ի համաձայն բժշկի առնվազն շաբաթը մեկ անգամյա այցելությունը:
4. Հացադուլավորների համար առանձնացնել հատուկ խցեր, որտեղ կլինի լոգանք ընդունելու հնարավորություն և ապահովել սանիտարահիգիենիկ պայմաններով:
5. Կազմակերպել քրոնիկ հիվանդների դիսպանսեր հսկողություն, համաձայն ՀՀ կառավարության 825-Ն որոշման գլուխ 14:
6. Կազմակերպել ծխող և չծխող ազատագրկվածների տարան-


ջատումը:

7. Կանոնակարգել խցերի սանհանգույցներում ախտահանումը, կազմակերպել սանլուս. աշխատանք, խցակիցներին բացատրել ախտահանման ձիշտ և անվտանգ գործընթացը:
8. Մշակել դեղորայքի մատակարարման ձևերը համակարգ, որը լիարժեք կապահովի ազատագրկվածներին անհրաժեշտ դեղորայքով:
9. Բացառել ժամկետանց դեղորայքի օգտագործումը:
10. Սահմանել ժամկետանց դեղորայքի ոչնչացման հստակ ընթացակարգ:
11. Անհետաձգելի բուժօգնություն ցուցաբերելու նպատակով, համապատասխան հավաքածուն նպատակահարմար է տեղավորել/կամ առաջին օգնության պայուսակում, կամ որևէ դարակում, պահարանի մեջ/: Դեպքեր կան, երբ առաջին օգնության համար նախատեսված դեղորայքը և անհրաժեշտ պարագաները զտնվում էին տարբեր սենյակներում, պահարաններում կամ տարբեր դարակներում:

ՔԿՀ-ներում մարդու առողջության պահպանման սահմանդրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման համար պատասխանատու ծառայությունների հզորությունները

2010թ փետրվար մարտ ամիսներին Հայաստանում իրականացվեց «ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկներ և միջին բուժաշխատողներ» վերնագրով հարցում: Հարցմանը մասնակցեց 53 բուժաշխատող:

Հետազոտության նպատակն էր՝ պարզել ՔԿՀ-ներում մարդու առողջության պահպանման սահմանդրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազ-



մակերպման համար պատասխանատու ծառայությունների (ՔԿՆ-ների բուժական ծառայության, բուժաշխատողների և այլն) հզորությունները, արձանագրել ներկա վիճակը և նախապատրաստել առաջարկություններ:

Հետազոտության ձևը

մշակվել և իրականացվել է որակական հետազոտություն՝ (դիտարկում և խորացված հարցազրույցներ) գնահատելու և պարզելու ՔԿՆ-ներում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման համար պատասխանատու ծառայությունների (ՔԿՆ-ների բուժական ծառայության, բուժաշխատողների ներուժը) հզորությունները, ոչ միայն ըստ փաստաթղթերի և այն գործառնությունների, որ ըստ կանոնների պետք է իրականացվեն, այլ նաև իրականության մեջ, ինչպես նաև հնարավոր չափով բացահայտելու հիմնական խնդիրները: Այս հետազոտությունը փորձել է անդրադառնալ առողջապահական ծառայությունների հզորությունների ամբողջական պատկերին:

Վերլուծության մեթոդներ են կիրառվել հասկանալու բուժօժանությունների գործառնությունները, հագեցվածությունը, մարդկային ներուժի առկայությանը, բուժաշխատողների պատրաստվածությունը և այլ:

Հետազոտության մասնակիցները

Հետազոտությունն իրականացվել է բոլոր քրեակատարողական հիմնարկներում (բացի «Մեղրի» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներից) և հարցմանը մասնակցել է ՔԿՆ-ների ողջ բուժանձնակազմը, բժիշկները և միջին բուժաշխատողները, որոնք հետազոտության պահին եղել են աշխատանքային վայրում: Բացի դրանից, դիտարկող հանձնախմբի կողմից լրացվել է դիտարկման հարցաթերթիկ, որը նույնպես ենթարկվել է վերլուծության:

Այս ամենը ելակետային նյութ կարող է հանդիսանալ հետագա

հետազոտությունների և առողջապահության բնագավառի աշխատակիցների ու քաղաքականություն մշակողների գործունեության համար: Հարցման արդյունքներն օգտակար կարող են լինել նաև Հայաստանի օրենսդրական դաշտի հետագա կատարելագործման հարցում, քանզի հարցաթերթիկներում շոշափված խնդիրներն առնչվում են նաև առողջապահության իրավական եզրերին:

**Հետազոտության արդյունքները
ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկների և միջին բուժաշխատողների հարցում**


Հարցմանը մասնակցած 53 բուժաշխատողներից մեծամասնության (33) տարիքն եղել է քառասուն տարեկանից բարձր, ինչը կազմում է 61%: Բոլոր բուժաշխատողների տասից մեկի (5) տարիքն է երեսունից ցածր:

Հետազոտության արդյունքների համաձայն, ՔԿՀ-ի բուժկետերի անձնակազմի մեծամասնությունը կազմում են տղամարդիկ (56%): Ընդ որում, տղամարդիք հիմնականում զբաղեցնում են բժիշկների (այդ թվում բուժօժանոցայության ղեկավարների պաշտոնները, իսկ կանայք՝ միջին բուժաշխատողների):

Մասնակից բուժաշխատողների ձևաչափը մեծամասնությունը (տասից ինը) նշել են, որ իրենց անմիջական պարտականությունների մեջ մտնում է առողջությանը հետևելը, առողջության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը:

Հարցվածներից տասից երկուսը երբեք չեն անցել վերապատրաստում կամ մասնագիտացում, 32-ը՝ (42%) վերջին հինգ տարվա, և 4-ը՝ վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցել էին նման կրթական միջոցառումների:

Հարցվածների մեկ երրորդը իր մասնագիտական գործունեության ընթացքում վերջին տարում չի մասնակցել որևիցե կար-



Ճատև մասնագիտական կրթական կամ գիտական միջոցառման (սեմինար, կլոր սեղան և այլն): Բուժաշխատողներից տասից ութը նշել են, որ մասնագիտական, ուսումնական, գիտական նյութերն իրենց համար հասանելի են: Հատկանշական է, որ հարցվածներից ընդամենը 4-ն են նշել, որ իրենց մասնագիտական պրակտիկայում պարբերաբար օգտագործում են համակարգիչ, 18 (33%) նշել են, որ օգտագործում են հազվադեպ (մեկ-մեկ): Մասնագետների ձնշող մեծամասնությունը 85% (45) համարում է, որ ՔԿՀ-ներում աշխատող բժիշկական անձնակազմը/աշխատողները հատուկ պատրաստվածության կարիք ունեն:

Հարցվածների մեծամասնությունը 80% (42) համարում է, որ իրենց գործունեությունը կանոնակարգվում է հատուկ կանոնակարգով, իսկ տասից մեկը (5) համարում է, որ նման փաստաթղթի կարիքը չկա:


Հարցվածների մի մասը՝ տասից մեկը (5) համարում է, որ դեղորայքային պակաս գոյություն ունի բուժ կետում կամ բաժնում, 90%-ը համարում է, որ բաժինը/կետը ապահովված է անհրաժեշտ դեղորայքով: Մյուս կողմից տասից յոթը համարում են, որ բուժկետը կամ բաժինը ապահովված չէ անհրաժեշտ սարքավորումներով: Աշխատողների 64% համարում է, որ բաժնի/բուժկետի տարածքը և կահավորումը չի համապատասխանում բուժական ծառայություն մատուցելու պահանջներին: Հարցվածների 21% (11) համարում է, որ, հնարավոր է, համապատասխանում է և ընդամենը 15% (8) (բոլորը, բաժնի պետ) հստակ համոզված են, որ համապատասխանում է:

Հարցմանը մասնակցած բուժաշխատողների 30% (16) չի անցել հատուկ բժշկական քննություն առողջական վիճակը պարզելու նպատակով, 70% (38) նշել են, որ իրենց ՔԿ-հիմնարկի բուժաշխատողներն առողջական վիճակը պարզելու նպատակով պարբերաբար անցնում են հատուկ բժշկական քննություն: Հարցմանը մասնակցած տասից յոթը (35) նշել են, որ **իրենց ՔԿ-հիմնարկի բուժաշխատողները չեն եթարկվում իմունոկանխարգելման**

միջոցառումների: Հարցմանը մասնակցած գրեթե բոլոր բուժաշխատողները համարում են, որ իրենք պարտադիր պարբերաբար պետք է անցնեն բժշկական քննություն՝ առողջական վիճակը պարզելու նպատակով: **Ճնշող մեծամասնությունը 94% (51) համարում է, որ քրեակատարողական հիմնարկների բուժաշխատողներն իրենց առողջությունը ենթարկում են ռիսկի:**

Հարցմանը մասնակցած բուժաշխատողների 65% (35) նշել են, որ իրենք օրական իրականացրել են 10 կամ ավել բժշկական միջամտություն (հիվանդի զննում, այլ միջամտություն): Բնականաբար, նման պատասխան տվողների մեծամասնությունը կազմում են բժիշկները: Սակայն հարցվածների տասից ութը **(80%, կամ 43) նշել են, որ վերջին մեկ տարվա ընթացքում իրենք առողջապահական կանխարգելիչ միջամտություն չեն իրականացրել, բացառությամբ իրազեկումից:** Հատկանշական է, որ չի եղել պատվաստման ոչ մի դեպք: Հարցմանը մասնակցած բուժաշխատողների ամեն տասից չորսը (43% 23) նշել են, որ իրենք վերջին 30 օրվա (մեկ ամսվա) ընթացքում եղել են աշխատանքային տեղում 24-ից ավել օր: Հատկանշական է, որ մեկ հարցվող նշել է, որ նա ընդհանրապես չի եղել աշխատանքի վայրում, իսկ տասից երեքը (32%) վերջին 30 օրվա (մեկ ամսվա) ընթացքում եղել աշխատանքային տեղում 12 աշխատանքային օր: **Հարցվածների 70%-ը նշել են, որ մեկ շաբաթվա ընթացքում 45 ժամից ավել անցկացրել են աշխատանքային տեղում:** Բացահայտ մեծամասնությունը (91%) համարում է, որ քրեակատարողական հիմնարկների բուժաշխատողները վարձատրվում են իրենց կատարած աշխատանքին ոչ համապատասխան և **80%-ից ավելին համարում են, որ քրեակատարողական հիմնարկների բուժաշխատողների աշխատավարձի չափը (հաստատապես կամ մասամբ) հանդիսանում է խոչընդոտ՝ առողջապահական ծառայությունները համապատասխան ունակ կադրերով համալրելու համար:**

Ուշադրության արժանի է, որ հարցմանը մասնակցած բուժաշ-



խատողներից ընդամենը ութ հոգի է համարում, որ քրեակատարողական հիմնարկների առողջապահական բաժինների/կետերի աշխատողների մասնագիտացման ոլորտը միշտ համապատասխանում է այն գործառույթներին, որոնք անհրաժեշտ են:

Ընդհանուր տեղեկություն Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի վերաբերյալ

Դիտարկման թերթ`

Հետազոտության ընթացքում դիտարկման միջոցով ընդհանուր տեղեկություններ են հավաքվել ՔԿՀ-ների մասին:

«Գորիս» ՔԿՀ, քաղաք Գորիս

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 98, լիմիտով` 100

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը` համաձայն հաստիքացուցակի. բժիշկներ` 3 (2:1), միջին բուժանձնակամ` 4:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ` 3 (2:1), միջին բուժանձնակազմ` 1:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի (սենյակների) թիվը` հինգ, այդ թվում բժիշկների, հիվանդների, մանիպուլյացիոն սենյակներ, ատամնաբուժարան և պահեստ:

Նախատեսվածին համապատասխան, բուժական մասը պետք է ունենար 7 մահձակալ, փաստացի հետազոտության

պահին ոչ մի մահճակալ տեղադրված չէր:

Քրեակատարողական հիմնարկը չունի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով համապատասխան բժշկական հավաքածուի առկայությունը հետազոտության պահին առկա էր մասամբ:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնում/կետում բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ, գործիքներ) և դեղերի նվազագույն քանակի առկայությունը՝ ըստ սենյակների. Բժիշկների սենյակ՝ առկա էր, մանիպուլյացիոն՝ առկա էր մասամբ, հիվանդների սենյակ՝ առկա էր, ատամնաբուժարան՝ առկա էր մասամբ:

Անհետաձգելի բժշկական օգնության դեղերի հավաքածուն առկա էր մասամբ և պահվում էր բժիշկների և մանիպուլյացիոն սենյակներում:


«Արթիկ» ՔԿՀ քաղաք Արթիկ

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 343, լիմիտով՝ 373

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համաձայն հաստիքացուցակի. բժիշկներ՝ 4 (2:2), միջին բուժանձնակամ՝ 5:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ՝ 3(2:1), միջին բուժանձնակազմ՝ 5:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի (սենյակների) ընդհանուր ծավալը կազմում էր մոտ ... մետր քառակուսի: Սենյակ-



ների թիվը 12, այդ թվում բժիշկների սենյակ, հիվանդասենյակներ 7 այդ թվում իֆեկցիոն հիվանդների համար նախատեսված սենյակ, վիրակապարան, ատամնաբուժարան, լողասենյակ և պահեստ :

Քրեակատարողական հիմնարկն ուներ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Նախատեսվածին համապատասխան, բուժական մասը պետք է ունենար 15 մահձակալ, փաստացի հետազոտության պահին բոլոր մահձակալները տեղադրված էին:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին առկա էր:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնում/կետում բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ, գործիքներ) և դեղերի նվազագույն քանակի առկայությունը՝ ըստ սենյակների, բժիշկների սենյակ՝ առկա էր, վիրակապարան՝ առկա էր, ատամնաբուժարան՝ առկա էր մասամբ, հիվանդների համար նախատեսված սենյակներ՝ առկա էր:

Անհետաձգելի բժշկական օգնության դեղերի հավաքածուն առկա էր:

«Վանաձոր» ՔԿՀ քաղաք Վանաձոր

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 217, լիմիտով՝ 245

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համաձայն հաստիքացուցակի. բժիշկներ՝ 5 (4:4), միջին բուժանձնակազմ՝ 5:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժ-

նի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ՝ 2 (1:1), միջին բուժանձնակազմ՝ չորս:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի (սենյակների) ընդհանուր ծավալը կազմում էր մոտ ... մետր քառակուսի: Սենյակների թիվը՝ 8, այդ թվում՝ բժիշկների սենյակ, ատամնաբույժի սենյակ, մանիպուլյացիոն, հիվանդների սենյակներ 3, մուլեգնախուց, լոգարան: Սենյակները կահավորված էին:

Քրեակատարողական հիմնարկն ուներ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Նախատեսվածին համապատասխան, բուժական մասը պետք է ունենար 6 մահձակալ, փաստացի հետազոտության պահին բոլոր մահձակալները տեղադրված էին:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով, համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին առկա էր մասամբ:

Առողջապահական բաժնում/կետում բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ, գործիքներ) և դեղերի նվազագույն քանակն առկա էր մասամբ:


Անհետաձգելի բժշկական օգնության դեղերի հավաքածուն առկա էր և պահվում էր մեկ տեղ բուժմասում:

«Սևան» ՔՀԿ Սևան քաղաք

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 606, լիմիտով՝ 548

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համաձայն հաստիքացուցակի. **բժիշկներ՝ երեք**, միջին բուժանձնակազմ՝ չորս:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժ-



նի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ՝ **մշտական աշխատող 0, երկու ոչ մշտական**, միջին բուժանձնակազմ՝ երեք:

Քրեակատարողական հիմնարկի՝ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի (սենյակների) ընդհանուր ծավալը կազմում էր մոտ ... մետր քառակուսի: Սենյակների թիվը 11, այդ թվում բժիշկների սենյակ, ատամնաբույժի սենյակ, պրոցեդուրային, հիվանդների սենյակներ՝ 6, լոգարան, զուգարան: Բոլոր սենյակները կահավորված էին մասամբ:

Քրեակատարողական հիմնարկը չունեի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Նախատեսվածին համապատասխան, բուժական մասը պետք է ունենար 30 մահձակալ, փաստացի հետազոտության պահին բոլոր մահձակալները տեղադրված էին:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով, համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին առկա էր մասամբ:

Առողջապահական բաժնում/կետում բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ, գործիքներ) և դեղերի նվազագույն քանակն առկա էր մասամբ:

Անհետաձգելի բժշկական օգնության դեղերի հավաքածուն առկա էր մասամբ:

«Արուլյան» ՔԿՀ նախատեսված կանանց և անչափահասների համար

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 218, լիմիտով՝ 250

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համաձայն հաստիքացուցակի. բժիշկներ՝ 3 (2:1), միջին բուժանձնակազմ՝ 5 (4:1):

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ՝ 3 (2:1), միջին բուժանձնակազմ՝ (4:1), լիովին համապատասխանում էր հաստիքացուցակին:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի /սենյակների թիվը 6, այդ թվում բժիշկների սենյակ, գինեկոլոգիական սենյակ, ատամնաբույժի սենյակ, պրոցեդուրային, զննման սենյակ, հիվանդասենյակ: Սենյակները, այդ թվում գինեկոլոգիական սենյակը, կահավորված էին մասամբ:

Քրեակատարողական հիմնարկն ուներ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Նախատեսվածին համապատասխան՝ բուժական մասը պետք է ունենար 5 մահճակալ, փաստացի հետազոտության պահին տեղադրված էին 3 մահճակալ:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին առկա էր մասամբ:


Առողջապահական բաժնում/կետում բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ, գործիքներ) և դեղերի նվազագույն քանակն առկա էր մասամբ:

Անհետաձգելի բժշկական օգնության դեղերի հավաքածուն առկա էր և հավաքված էր վարչական մասում:

«Հրազդան» ՔՀԿ քաղաք Հրազդան

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 153, լիմիտով՝ 225

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համաձայն հաստիքացուցակի. բժիշկ-



ներ` 2, միջին բուժանձնակամ` 4:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ` 1, միջին բուժանձնակազմ` 4:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի/սենյակների թիվը 4, այդ թվում բժիշկների սենյակ և հիվանդասենյակները կահավորված էին, իսկ մանիպուլյացիոն սենյակը կահավորված էր մասամբ:

Քրեակատարողական հիմնարկն ուներ բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Նախատեսվածին համապատասխան` բուժական մասը պետք է ունենար 18 մահձակալ, փաստացի հետազոտության պահին տեղադրված էին 2 մահձակալ:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին առկա էր մասամբ:

Անհետաձգելի բժշկական օգնության դեղերի հավաքածուն առկա էր և հավաքված էր բուժմասում:

«Երևան կենտրոն» ՔԿՀ քաղաք Երևան

Դատապարտյալների քանակը փաստացի եղել էր 48, լիմիտով` 53

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համաձայն հաստիքացուցակի. բժիշկներ` մեկ, միջին բուժանձնակամ` մեկ:

Քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը փաստացի. բժիշկներ` մեկ, միջին բուժանձնակազմ` մեկ, համապատասխանում էր հաստիքացուցակին:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցու-

ցաբերելու նպատակով առանձնացված տարածքի/սենյակների թիվը 3, այդ թվում բժիշկների և ատամնաբույժի սենյակները կահավորված էր մասամբ:

Քրեակատարողական հիմնարկը չունի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) մասին կանոնավորող փաստաթուղթ:

Նախատեսվածին համապատասխան՝ բուժական մասը չունի մահձակալ:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով՝ համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին առկա էր մասամբ:

Առողջապահական բաժնում/կետում բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ, գործիքներ) և դեղերի նվազագույն քանակն առկա էր մասամբ:

Քննարկում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում բժիշկների և միջին բուժաշխատողների հարցում

Հետազոտության ժամանակ օտագործվել է հատուկ պատրաստված հարցաթերթիկ: Հարցմանը մասնակցեցին քրեակատարողական հիմնարկների բոլոր բուժաշխատողները, որոնք հետազոտության պահին գտնվում էին աշխատանքի վայրում և իրենց համաձայնությունը տվեցին մասնակցելու հարցմանը: Այսպիսով՝ հարցումը ցույց տվեց, որ բուժաշխատողների մեծամասնությունը կազմում են տղամարդիկ, ինչը, հաշվի առնելով աշխատանքային առանձնահատկությունը, բացատրելի է: Հարցմանը մասնաքցած բժիշկների մոտ ամենատարածված բազային (դիպլոմային) կրթությունը հանդիսանում է բուժական գործ, իսկ հիմնական մասանգիտությունը՝ թերապիան: **Հատկանշական է, որ**

հարցմանը մասնակցածների շրջանում չկար մանկաբույժ, դա այն դեպքում երբ «Աբովյան» ՔԿՀ-ն նախատեսված է կանանց և անչափահաս երեխաների համար: Հարցվածների մի զգալի մաս երբեք չեն անցել վերապատրաստում կամ չեն մասնակցել նմանատիպ որևիցե միջոցառմանը, ինչը կարող է խնդիր հանդիսանալ մասնագետի համար ժամանակակից մասնագիտական հմտություններ ձեռք բերելու առումով: Նույնը վերաբերվում է մասնագետների մասնակցությանը կարծատն ուսումնական և գիտական միջոցառումներին, սեմինարներին, կոնֆերանսներին և այլն: Իհարկե դրական է, որ հարցվածների մեծ մասը նշել են ուսումնական և մասնագիտական գրականության հասանելիությունը: Ահազանգող է, որ չափազանց ցածր է իրենց մասնագիտական պրակտիկայում համկարգիչ օգտագործող մասնագետների թիվը, միգուցե պատճառներից մեկն էլ այն է, որ համակարգիչներն աշխատանքային վայրում հասանալի չեն բոլորի համար: Կարևոր ենք համարում նշել, որ հարցվածների մեծամասնությունը համարում է, որ ՔԿՀ-ների բուժաշխատողները կարիք ունեն հատուկ պատրաստվածության:

Բուժաշխատողների գործունեությունը կանոնակարգելու առումով հարցվածների մեծամասնությունը համարում է, որ այն իրականացվում է կանոնակարգերով: Հարցվածների մեծ մասը համարում է որ հիմնարկների բուժ-կետերի/մասերի սարքավորումներով հագեցվածությունը բավարար չէ: Դա լուրջ ազդեցություն է թողնում բուժական ծառայությունների մատոցման և որակի, և բուժօգնության տրամադրման տեսակների վրա: Նույնը վերաբերվում է կահավորման և բուժ. ծառայություններին հատկացված տարածքներին: Տարածքների պակասը և նվազագույն անհրաժեշտ կահվորման պակասը կամ նույնիսկ առանձին դեպքերում բացակայությունը կառող է բերել բուժօգնության տրամադրման դժվարացմանը և նույնիսկ անհնարինությանը:

ՔԿՀ-ներում կարևոր խնդիր է բուժաշխատողների առողջությունը: Հարցմանը մասնակցած բուժաշխատողների մեկ երրորդը չի անցել հատուկ բժշկական քննություն առողջական վիճակը պարզելու համար, իսկ երկու երրորդը չի ենթարկվել իմունոկախարգելման որևիցե միջոցառման: Նշենք, որ հարցման գրեթե բոլոր մասնակիցները նշել են, որ իրենք ենթարկում են իրենց առողջությունը ռիսկի, այսինքն հանդիսանում են լուրջ ռիսկի խումբ: Հաշվի առնելով հետազոտության տվյալները, կարելի է ասել, որ բուժաշխատողները կատարելով իրենց ամենօրյա պարտականությունները շատ դեպքերում հենց իրենք են գտվում թիրախի դերում՝ ենթարկելով առողջությունը վտանգի:

Հարցումը ցույց տվեց, որ բուժաշխատողներն իրականում աշխատում են բավականին մեծ ծանրաբեռնվածությամբ: Հատկանշականը այն է, որ վերջին մեկ տարվա ընթացքում իրենք առողջապահական կանխարգելիչ միջամտություն չեն իրականացրել (այդ թվում իմունականխարգելում) բացառությամբ իրազեկումից: Վերոհիշյալից կարելի է ենթադրել, որ ՔԿՀ-ներում նմանատիպ կանխարգելիչ միջամտություն չի իրականացվում:

Հարցմանը մասնակցածների կարծիքով առկա է լուրջ խնդիր՝ կապված քրեակատարողական հիմնարկների բուժաշխատողների աշխատավարձի չափի հետ և համարում են աշխատավարձի չափը խոչընդոտ առողջապահական ծառայությունը համապատասխան ունակ կադրերով համալրելու համար:

Ամփոփելով կարելի է ասել, որ բուժաշխատողներն անցկացնելով իրենց օրվա մեծ մասը աշխատանքային վայրում, ոչ այնքան նպաստավոր աշխատանքային պայմաններում, պարտականությունները կատարելիս ենթարկում են իրենց առողջությունը ռիսկի և վարձատրվում են ոչ բավարար իրենց առաքելությունն իրագործելու և արժանի կենսամակարդակ ապահովելու համար:

Ընդհանուր տեղեկություն քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի մասին (դիտարկում)

Այս տիպի ուսումնասիրություն առաջին անգամ է իրականացվում Հայաստանում, այդ պատճառով հնարավոր չէ քննարկման ընթացքում և ընդհանրապես համեմատականներ անցկացնել նախկին իրավիճակների հետ: Հարկ է նշել նաև, որ հետազոտության հարցաթերթերում առկա որոշ հարցադրումների սենսիթիվության հանգամանքով պայմանավորված, հնարավոր է, որ հարցվածների կողմից այդ հարցադրումներին տրված պատասխանները հնարավորություն չտան ամբողջական պատկերացում կազմել այս կամ այն երևույթի խորության վերաբերյալ: Այնուամենայնիվ, հետազոտությունը հնարավորություն է տալիս որոշ չափով վերլուծել ներկա իրավիճակը:

Համաձայն հետազոտության արդյունքների՝ հարցման պահի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների և կալանավորների քանակը կազմել է 4212 որոնք անկախ գտնվելու վայրից չեն զրկվում մարդու առողջության պահպանման սահմանդրական իրավունքի իրականացումից: Նշենք, որ հետազոտությանը մասնկցած ՔԿՀ-ների լիմիտավորված թիվը կազմում է 3819 տեղ: Եվ հավանաբար գործող բժշկական ծառայությունների նախատեսված հզորություններն այդ թվում անձնակազմը և հաստիքացուցակը հաշվարկված են հենց երկրորդ թվից: Հետազոտությունը ցույց տվեց, որ քրեակատարողական հիմնարկի առողջապահական բաժնի/կետի աշխատողների թիվը համապատասխան հաստիքացուցակի եղել է 48 բժիշկ և 50 միջին բուժ աշխատող, փաստացի կազմել է 39 բժիշկ և 40 միջին բուժ աշխատող: Առկա է բուժաշխատողների պակաս, ինչը ակնհայտ բերում է բժշկական օգնության որակի անկմանը: Ուշադրության արժանի փաստ ՔԿՀ-ից մեկում փաստացի չկար բժիշկ, միջոցառումներ հաստիքացուցակով նախատեսվում էր, իսկ մասնագիտական բուժական ծառայությունն իրականացվում էր կալանավայրում գտնվող մասնագիտության բժիշկ երկու դատապարտյալների կողմից:

Քրեակատարողական հիմնարկի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով առանձնացված տարածքի (սենյակների) ընդհանուր վիճակը եղել է տարբեր: Կահավորվածության աստիճանը նույնպես: Սենյակների/տարածքների կահավորվածության հետ կապված խնդիրներ եղել են գրեթե բոլոր ՔԿՀ-ներում:

Հիմնարկների մեծ մասը նշել են, որ իրենք չունեն բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) կանոնավորող փաստաթուղթ: Դիտարկված ՔԿՀ-ում բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով տարածքների (սենյակների) տրամադրման (առանձնացման) հատկացումը մնում էր հիմնարկների պետերի հայեցողության: Նման փաստաթղթի բացակայությունը կարող է դժվարություն հանդիսանալ բուժօժանության կառավարման խնդրում: Ուշադրության արժանի է նախատեսված և փաստացի առկա մահճակալների քանակը և փոխհարաբերությունը: Նախատեսվածի համաձայն վերոհիշյալ ՔԿՀ-ներում մահճակալների ընդհանուր քանակը պետք է լինի 166, փաստացի առկա է նախատեսվածի երկու երրորդը՝ 115: Կարևոր է նշել, որ մի շարք ՔԿՀ-ներում տեղադրված մահճակալների քանակը նախատեսվածից պակաս էր և նույնիսկ առկա էր իրավիճակ, երբ ՔԿՀ-ում նախատեսվածին հակառակ մահճակալ ընդհանրապես տեղադրված չէր: Մահճակալների պակասը, իսկ որոշ ՔԿՀ-ներում բացակայությունը, լրջորեն կարող է ազդել վերոնշյալ կալանավայրերում կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական օգնությունը պատշաճ կերպով կազմակերպելու գործում:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով համապատասխան բժշկական հավաքածուն հետազոտության պահին գրեթե բոլոր հիմնարկներում առկա էին, սակայն ոչ բոլոր դեպքերում էին պահվում համապատասխան նախատեսված տեղերում: Հետազոտությունը ցույց տվեց, որ որոշակի խնդիրներ կան բժշկական սպասարկման համար անհրաժեշտ բժշկական պարագաների (սարքավորումներ,

գործիքներ) և դեղերի մասով: Ավելի նեղ մասնագիտական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված սենյակները (օրինակ՝ ատամնաբույժի) համապատասխան կերպով կահավորված և հագեցված չէին: Հատկանշական է, որ «Արուլյան» ՔԿՀ-ում որը նախատեսված է կանանց և անչափահաս երեխաների համար գինեկոլոգիական սենյակը կահավորված, հագեցված չէր, և սույն ծառայությունն իրականացվում էր մոտակա քաղացիական բժշկական հաստատությունում՝ միջգերատեսչական պայմանվորվածության հիման վրա, որը հանդիսանում է կազմակերպչական լուրջ խոչընդոտ որակյալ, օպերատիվ բուժօգնություն ցուցաբերելուն: Հուշագրավ փաստ՝ «Պատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում կանանց համար ծառայություն նախատեսված չէ: Ինչ վերաբերվում է անհետաձգելի բժշկական օգնության համար դեղերի հավաքածուին հետազոտության պահին այն առկա հիմնականում բոլոր ՔԿՀ-ներում ուղակի ոչ բոլոր հիմնարկներում էր որ այն պահվում էր կոնկրետ առանձնացված տեղում: Սակայն պետք է նշել, որ գրեթե բոլոր հավաքածուի բացառությամբ դեղորայքից, պարագաները հնացած էին և շատ դեպքերում նույնիսկ օգտագործելի չէին: Նշենք, որ առանձին դեպքերում նկատվել է ժամանակն անցած դեղորայքի առկայություն:

Առաջարկություններ

1. Քանզի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կան որոշակի խնդիրներ քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումների աշխատանքը պատշաճ կերպով կազմակերպելու հարցում և հաշվի առնելով բժշկական օգնության որակը բարձրացնելու և կառավարելու անհրաժեշտությունը առաջարկում ենք՝
2. Վերանայել, իսկ անհրաժեշտության դեպքում մշակել, նորմատիվային ակտեր, փաստաթղթեր, որտեղ հստակ ամրագրված կլինեին ՔԿՀ-ների բուժաշխատողների իրավունքները, պարտականությունները, այդ թվում իրենց կողմից պարտադիր բուժզննում անցնելու, վերապատրաստվելու և այլ խնդիրները :
3. Հաշվի առնելով, որ ՔԿՀ-ներում, կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունն իրականացնելուն հետ մեկտեղ բուժծառայողներն իրենք են հանդիսանում ռիսկի խումբ մի շարք հիվանդություններ ձեռք բերելու առումով, պարբերաբար իրականացնել ինունականխարգելման միջամտություններ:
4. ՔԿՀ-ը համալրել համապատասխան առողջապահական մասնագետներով :
5. Բարելավել առողջապահական մասնագետների աշխատանքային պայմանները: Վերանայել առողջապահական մասնագետների աշխատաժամանակի և հանգստի, նորմերը:
6. Հնարավորինս բարձրացնել առողջապահական մասնագետների աշխատավարձերը: Աշխատավարձերը հիմնված լինեն, ինչպես մասնագետների կրթության, աշխատանքային փորձի, այնպես էլ նրանց կատարած փաստացի աշխատանքի վրա:
7. Բարելավել ՔԿՀ-ներում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու և իրականացնելու նպատակով հատկացված տարածքները: Ապահովել սարքավորումներով և դեղորայքով, ինչպես նաև ուշադրություն դարձնել առկա հզորությունների արդյունավետ օգտագործմանը:
8. Ամփոփելով առաջարկում ենք՝ հետագայում համապատասխան բնագավառներում իրավիճակը դիտարկելու նպատակով իրականացնել կանոնավոր հարցումներ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՏԱՊ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
2009-2010 թթ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԾԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԱԳ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴՖՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Գ Լ Խ Ե Վ Ո Ր Դ Ա Տ Ա Խ Ա Ջ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 09-001
14.01.2009 թ.

ՀՀ Գլխավոր դատախազ,
պարոն Ա. Հովսեփյանին

Հարգելի պարոն դատախազ,

2008 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը հրատապ հաշվետվություն էր ներկայացրել ՀՀ Արդարադատության նախարարին 2008 թվականի դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածների հանդեպ տեղի ունեցած բռնությունների կապակցությամբ: ԱՆ աշխատակազմի վերահսկողության վարչության պետի պատասխանում նշվում էր, որ մեր հրատապ հաշվետվությունը նախարարի հանձնարարությամբ ուղղարկվել է ՀՀ գլխավոր դատախազին համապատասխան ընթացք տալու համար: Խնդրում ենք հայտնել մեզ, հարուցվել է արդյոք քրեական գործ հաշվետվությունում նշված փաստերի առթիվ:

Կից ուղղարկում եմ խմբի հրատապ հաշվետվությունը և ԱՆ պատասխանը:

Հարգանքով,

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն
Իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան

№ 18/6-15
«21» 01 2009 թ.

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փող. 5

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և
մարմիններում հասարակական վերա-
հսկողություն իրականացնող, հասարակական
դիտորդների խմբի նախագահ
պարոն Ա.Դանիելյանին

Չեր 14.01.2009թ. թիվ 09-001 գրությանը հայտնվում է, որ հասարակական դիտորդների խմբի «հրատապ հաշվետվությունը» ստացվել և ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինակաբանության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունում:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձ Գրիգոր Ոսկերյանի նկատմամբ բռնություն գործադրելու հանգամանքները պարզելու նպատակով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վերահսկողական վարչության կողմից կատարվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննության արդյունքում պարզվել է, որ քրեակատարողական վարչության արագ արձագանքման խմբի սպա, արդարադատության մայր Արբոր Եղիազարյանի կողմից թույլ է տրվել իր պարտականությունների ոչ պատշաճ կատարում և Արդարադատության նախարարի 09.01.2009թ. հրամանով վերջինս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: 19.01.2009թ. ծառայողական քննության վերաբերյալ նյութերն ուղարկվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հատուկ քննչական ծառայություն:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 36 խցում կատարված խուզարկության ժամանակ արագ արձագանքման խմբի պետ՝ արդարադատության գնդապետ Ջորիկ Արզումանյանին դատապարտյալների կողմից ծեծի ենթարկելու վերաբերյալ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ոստիկանության Էրեբունու քննչական բաժին, որտեղ 03.01.2009թ. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12100409 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Թիվ 36 խցի բոլոր դատապարտյալների նկատմամբ նշանակվել են դատաբժկական փորձաքննություններ:

Հասարակական դիտորդների խմբի «հրատապ հաշվետվությունը» «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 36 խցում կատարված բռնությունների վերաբերյալ, դատախազության կողմից ուղարկվել է ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում քննվող թիվ 12100409 քրեական գործին կցելու և նախաքննությամբ ընթացքը որոշելու համար:

Արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների
կիրառման օրինակաբանության նկատմամբ հսկո-
ղություն իրականացնող վարչության պետի տեղակալ

Վ.Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԱԾՈՂ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-002
14.01.2009թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ.Դանիելյանին՝

Հարգելի պարոն նախարար,

2008 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը հրատապ հաշվետվություն էր ներկայացրել Ձեզ՝ 2008 թվականի դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում N 36 խցի թվով 13 դատապարտյալների, ինչպես նաև նույն հիմնարկի 6-րդ մասնաշենքում պահվող Գ.Ոսկերչյանի հանդեպ տեղի ունեցած բռնությունների կապակցությամբ: ԱՆ աշխատակազմի վերահսկողության վարչության պետի պատասխանում նշվում էր, որ ՀՀ արդարադատության նախարարի 2008 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 225-Ա հրամանով դեպքի կապակցությամբ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նշանակվել և անցկացվում է ծառայողական քննություն: Խնդրում ենք հայտնել մեզ ծառայողական քննության արդյունքների մասին:

Հարգանքով,

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն
իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 2-25-9
24.01.2009թ.

0078 Երևան, Պալատյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում
վերահսկողություն իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ պարոն Ա. Դանիելյանին՝

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կայանավոր Գ. Ոսկերչյանի հետ տեղի ունեցած միջադեպի մասին հաղորդման առնչությամբ անցկացված ծառայողական քննության րնթացքում հիմնավորվել է, որ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության արագ արձագանքման բաժնի գլխավոր մասնագետ, արդարադատության կապիտան Արթուր Սասունիկի Եղիազարյանը, 2008թ. դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ աշխատակիցների հետ խուզարկություն իրականացնելու րնթացքում ցուցաբերել է սպային ոչ փայլ փարքազիծ, դրանով իսկ խախտելով կարգապահական կանոնակարգը, որի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարի 2009թ. հունվարի 9-ի թիվ 2-Ա հրամանով վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ հայտարարվել է խիստ նկատողություն:

Հարգանքով՝

Ա.Դանիելյան



Հ Ա Յ Ա Մ Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ր Դ Ա Ր Ա Դ Ա Տ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Յ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

N 09-002
13.01.2009թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ.Դանիելյանին

Հարգելի պարոն նախարար,

2008 թվականի դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խումբը հրատապ հաշվետվություն էր ներկայացրել Ձեզ՝ 2008
թվականի դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում N 36 խցի դատապարտյալների
Գ.Ոսկերչյանի հանդեպ տեղի ունեցած բռնությունների կապակցությամբ: ԱՆ աշխատակազմի
վերահսկողության վարչության պետի պատասխանում եղվում էր, որ ՀՀ արդարադատության
նախարարի 2008 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 225-Ա հրամանով դեպի կապակցությամբ
«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նշանակվել և անցկացվում է ծառայողական
քննություն:

Խնդրում ենք հայտնել մեզ ծառայողական քննության արդյունքների մասին:

Հարգանքով,

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն
իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան

0078, ք. Երևան, Դալարյան փող. 41^ա

№ 6376
« 29 » 01 2009թ.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում
վերահսկողություն իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ պարոն Ա. Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան

Ձեր 25.12.2008թ. հրատապ հաշվետվության կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ
արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի
3-րդ մասնաշենքի 36 խցում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ իրականացվում է
քրեական հետապնդում, որի կապակցությամբ մանրամասն տեղեկություններ կարող եք
ստանալ նախաքննություն իրականացնող մարմնից կամ ՀՀ վիսպվոր դատախազությու-
նից:

Հարգանքով՝

Վերահսկողության վարչության պետի
ժամանակավոր պաշտոնակատար

Լ. Միմոնյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԶՎ ԷՐԵՔՈՒՆՈՒ ԶՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ք. Երևան Մ.Նոյրնազու 162, հեռ. 57-39-00

N 7/10 - 550

« 13 » փետրվարի 2009թ.

«ՁՁ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական Դիտորդների խմբի նախագահ պարոն

Ա.Դանիելյանին

«ՁՁ ոստիկանության ՔԳՎ էրեբունու քննչական բաժնում քննվող N 12100409 քրեական գործով կարիքն առաջանալու կապակցությամբ, 2009թ. փետրվարի 18-ին ժամը 11:00-ին Արման Դանիելյանին, ժամը 12:00-ին Ա. Սաքունցին, ժամը 13:00-ին Է. Մարուքյանին, ժամը 14:00-ին Ավետիք Իշխանյանին, ժամը 15:00-ին Լուսինե Հարությունյանին, ժամը 16:00-ին Միքայել Բաղդասարյանին, ժամը 17:00-ին Միքայել Արամյանին խնդրվում է ներկայանալ էրեբունու քննչական բաժնի N 26 սենյակ 2008թ. դեկտեմբերի 23-ին «ՁՁ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի թիվ 36 խցի դատավարտյալների հետ տեղի ունեցած միջադեպի շուրջ ցուցմունք տալու համար:

էրեբունու քննչական բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ

Ա.Ս.Սկրտչյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՐԱՐԱՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԻԵԿԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/1-485
« 17 » 02 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ԻՇԽԱՆՅԱՆԻՆ

Ձեր թիվ-35 առ 30.01.2009թ. գրությանն ի պատասխան

Հարգելի պարոն Իշխանյան,

Ձեր կողմից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված գրությանն ի պատասխան տեղեկացնում ենք, որ այն, արդարադատության նախարարի հանձնարարությամբ քննարկվել է քրեակատարողական վարչությունում և որոշվել է մերժել խնդրանքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում նախնական կալանքում գտնվող Սարգիս Հացպանյանի նկատմամբ հարուցված քրեական գործը գտնվում է նախաքննության ավարտման փուլում, երբ հարկ է սեղմ ժամկետներում իրականացնել մի շարք դատավարական գործողություններ: Լյս պայմաններում դեռևս հնարավոր չէ ստեղծել համապատասխան պայմաններ՝ լրագրող Վահան Իշխանյանին, նախնական կալանքում գտնվող Սարգիս Հացպանյանի հետ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում տեսակցելու համար:

Հարգանքով՝

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ՎԱՊԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՆԵԻ ՊԵՏ

ԱՐՄԵՆ ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ 4837
17 02 2009թ.

0078 երևան, Պալատան 4/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ
պարոն Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ 41-Ն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների տեսակները, լրակազմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» և 2008 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 211-Ն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 27-ի թիվ 41-Ն հրամանում լրացում կատարելու մասին» հրամաններով քրեակատարողական հիմնարկների ընդհանուր լրակազմը նախատեսված է 4396 կալանավորված և դատապարտված անձանց պահելու համար:

2009 թվականի փետրվարի 2-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվում են ընդհանուր թվով 4023 անձ:

Ըստ քրեակատարողական հիմնարկների, դրանցում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակի պատկերը հետևյալն է

Քրեակատարողական հիմնարկ	Լրակազմը	02.02.2009թ. դրությամբ պահվող անձանց թիվը
«Գորիս»	170	163 (- 7)
«Արթիկ»	373	279 (- 94)
«Սևան»	548	466 (- 82)

«Կոշ»	640	545 (- 95)
«Էրեբունի»	391	580 (+ 189)
«Արուվյան»	250	231 (- 19)
«Նուբարաշեն»	840	966 (+ 126)
«Վարդաշեն»	154	200 (+ 46)
«Վանաձոր»	245	215 (- 30)
«Դատապարտյալների հիվանդանոց»	460	284 (- 176)
«Երևան-Կենտրոն»	60	49 (- 11)
«Սեղրի»	50	38 (- 12)
«Հրազդան»	215	7 (- 208)

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից նախատեսված լրակազմից ավել անձինք են պահվում «Էրեբունի», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում: Այդ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվի ավելացումը ունի օբեկտիվ պատճառներ:

1. Համեմատած 2008 թվականի հունվարի 1-ի հետ 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թիվը անել է 426-ով, իսկ տարբեր պատճառներով նախնական կալանքից և պատիժը կրելուց ազատվածների թիվը 287-ով:
2. Ելնելով «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց առանձնահատկություններից՝ նրանց տեղաբախշումը այլ քրեակատարողական հիմնարկներ հնարավոր չէ:
3. «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկը միակն է, որը ամբողջությամբ նախատեսված է կիսաբաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պատիժը կրող դատապարտյալների համար: Բացի «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկից, նույն պայմաններում պատիժը կրող դատապարտյալների համար նախատեսված է 142 տեղ նաև «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում: Սակայն, «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում կիսաբաց պայմաններում պատիժը կրող դատապարտյալների թվաքանակը լրացված է և, նկատի ունենալով այդ քրեակատարողական հիմնարկի խցիկային կառուցվածքը, լրացուցիչ տեղերի ավելացումը այստեղ գրեթե անհնարին է: «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում, հաշվի առնելով դրա հանրակացարանային կառուցվածքը, լրացուցիչ տեղերի ավելացումը ավելի մեղմ ազդեցություն է գործում այնտեղ պահվող անձանց բնակելի տարածքներով ապահովված լինելու վրա:
4. «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում այսօրվա դրությամբ պահվում են տեղաբաշխված և տարբեր քրեակատարողական հիմնարկներ տեղափոխման սպասող 131 դատապարտյալներ, սակայն ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից դատապարտյալների տեղափոխումները պատշաճ կերպով չեն իրականացվում: Բացի դա 20 անձի վերաբերյալ օրենքով նախատեսված ժամկետների խախտումով դատարանների կողմից չեն ուղարկվել դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելու կարգադրությունները: Այսպիսով, նկատի ունենալով վերը նշված հանգամանքները, կարելի է եզրակացնել, որ տեղափոխումների պատշաճ և

Ժամանակին կազմակերպման և դատարանների կողմից անհարգի ձգձգումների բացակայության դեպքերում, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը գերծ կմնա դատապարտյալների գերբնակեցումից:

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ Մ 937
23 02 2009թ.

0078 Երևան, Դաղարան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

*ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ծրագրերի ղեկավար՝
Մ.Բաղդասարյանին*

Ի պատասխան 2եր 2009թվականի հունվարի 20-ի գրության

Հարգելի պարոն Բաղդասարյան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից քրեակատարողական հիմնարկներ կատարած այցելությունների հիման վրա կազմված 2007թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության կապակցությամբ հայտնվում է, որ՝

«Գորիա» քրեակատարողական հիմնարկ

քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների ընդհանուր թիվը «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների տեսակները, քակավմերը, ինչպես նաև կալանավորվածների և դատապարտյալների համար մեկ անձի հաշվարկով բնակելի տարածքները սահմանելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 2008թվականի մայիսի 27-ի թիվ 41-Ն հրամանին համապատասխանեցնելու հարցը կարծարժվի հրատապ հաշվետվության կապակցությամբ ներկայացվող առաջարկությունում:



«Գորիս» քրեակատարողական հիմնարկի և Միջազգային Կարմիր Խաչի կողմից հիմնարկի խցեղում իրականացվել են կոսմետիկ բնույթի նորոգման աշխատանքներ առանց հիմնական կրող կոնստրուկցիաների ուժեղացմամբ: Ինչ վերաբերվում է հիմնարկությունն այլ շինություն տեղափոխելու հնարավորությանը, ապա այդ կապակցությամբ 2007թվականից Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացվել քրեակատարողական համակարգի ՄԺՇ ծրագրերի հայտեր, որտեղ ընդգրկված է նաև «Գորիս» քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման նպատակով տարածքի ձեռքբերման և նախագծա-հաշվարկային փաստաթղթերի կազմման համար անհրաժեշտ գումարի հայտը:

Հիմնարկում նախատեսված է հացադուլ հայտարարած կալանավորված, դատապարտված անձանց պահման համար հատուկ սենյակ:

«Արթիկ» քրեակատարողական հիմնարկ

2007թվականի հուլիսին «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի պետը, անվտանգության ապահովման բաժնի պետը ազատվել են քրեակատարողական ծառայությունից, իսկ հիմնարկի պետի տեղակալը ենթարկվել է կարգապահական տույժի և 2007թվականի սեպտեմբերին փոխադրվել է այլ պաշտոնի հիմնարկում տեղ գտած թերությունների համար: Բոլոր քրեակատարողական հիմնարկների պետերին հանձնարարվել է հատուկ հսկողություն սահմանել դիմում-բողոքներն օրենքով սահմանված կարգով ըստ հասցեատերերի ուղարկումն ապահովելու վերաբերյալ:

2007թվականին իրականացվել է նոր ջրագծերի մոնտաժում և ջրահավաք ավազանի կապիտալ նորոգում, որի սկզբնական շրջանում շահագործման հետ կապված խոչընդոտ էր ավազային շերտի նստվածքը, սակայն որոշ ժամանակ շահագործելուց հետո համակարգն ամբողջությամբ մաքրվել է և ջրի մաքրությունը համապատասխանում է սանիտարական նորմերին:

2007թվականին իրականացվել են «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի նոր վարչական մասնաշենքի գազամատակարարման և ջեռուցման աշխատանքները: Բոլոր հանրակացարանային մասնաշենքերը ապահովված են կենտրոնական տաք ջրամատակարարման և ջեռուցման համակարգերով: Համակարգը շահագործվում է 20.12.2007թվականից համապատասխան ծառայությունների հետ պայմանագրեր կնքելուց հետո: Համակարգը գործում է անխափան:

Ձեռնարկվում են միջոցներ բժշկական հաստիքների համալրման համար: Ներկայումս 9 հաստիքներից թափուր են 2.5-ը (այդ թվում՝ 1 գլխավոր, 1 առաջատար մասնագետների և 1 0.5 դրույք վարձու բժշկի հաստիքները):

«Սևան» քրեակատարողական հիմնարկ

«Սևան» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում է իրականացնել կապիտալ վերանորոգման աշխատանքներ: ՄԺՇ ծրագրով գումարի առկայության դեպքում կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

Ինչ վերաբերվում է դատապարտյալներին աշխատանքով ապահովելու խնդրին, ապա քրեակատարողական ծառայության համակարգում գործում է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամը, որի կանոնադրության համաձայն հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներից է դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովումը:

Ապահովված է գուգարանների սանիտարական վիճակը:

«Կոշ» քրեակատարողական հիմնարկ

«Կոշ» քրեակատարողական հիմնարկում 2007թվականին իրականացվել է արտատարածքային ջրագծի կապիտալ նորոգում: Հիմնարկը ապահովված է նաև երկրորդ սնուցման աղբյուրով և կուտակային ջրավազանով:

Տարեցտարի ձեռք են բերվում նոր սարքեր-սարքավորումներ: Ձեռնարկվում են միջոցներ բժշկական հաստիքների համալրման համար: Ներկայումս 9-ը հաստիքներից թափուր են 5-ը (այդ թվում՝ 1 գլխավոր, 3 երրորդ կարգի մասնագետների և 1 վարձու բժշկի հաստիքները):

«Էրեբունի» քրեակատարողական հիմնարկ

Ինչպես «Էրեբունի», այնպես էլ «Նուբարաշեն», «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկները և հարակից բազմաբնակարան բնակելի շենքերը և շինությունները սնուցվում են Էրեբունի համայնքում կենտրոնացված մեկ ջրավազանից, որի ծավալները ոչ բավարար լինելու պատճառով վերոհիշյալ բոլոր ջրապատողները ջրամատակարարվում են ժամանակային գրաֆիկով:

Տարեցտարի ձեռք են բերվում նոր սարքեր-սարքավորումներ:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկ

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կանանց տեղամասի հանրակացարանային մասնաշենքում առանձնացված են լոգասենյակներն ու գուգարանները, որոնք հիմնադրված են:

Նախկին մեկուսարանի շենքը այլևս չի գործում, այն տեղափոխվել է մախկին դպրոցի մասնաշենք, որը հիմնովին վերակառուցվել է մեկուսարանի մասնաշենքի: Նոր մասնաշենքն ապահովված է բոլոր կոմունալ - կենցաղային պայմաններով, ունի նաև կենտրոնացված տաք ջրամատակարարում և ջեռուցման համակարգ: Շենքում առկա է 4 լոգասենյակ, խցերն ապահովված են մեկուսացված և օդափոխվող սանհանգույցներով: Խցերի լուսավորությունը համապատասխանում է քաղաքաշինության նորմերին:

Անցակետի վերակառուցմամբ հիմնարկն ապահովվել է երկարատև և կարճատև տեսակցության սենյակներով: Հանձնուքի սենյակը կապիտալ նորոգվել է, այցելուների համար ստեղծված են բարենպաստ պայմաններ: Մասնաշենքն ապահովված է բոլոր կոմունալ-կենցաղային պայմաններով և ունի կենտրոնացված տաք ջրամատակարարում և օջառուցման համակարգ:

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ

Ինչպես «Նուբարաշեն, այնպես էլ մյուս քրեակատարողական հիմնարկներում մշտական հսկողություն է սահմանվել հիմնարկում գործող բաղնիք-լվացքատան աշխատանքների, ինչպես նաև նշված օբյեկտում առաջացած ֆինանսական մեծ ծախսեր չպահանջող թերությունները հիմնարկի աշխատակիցների ուժերով շտկելու նկատմամբ: Կատարվում են անհրաժեշտ աշխատանքներ դատապարտյալներին և կալանավորված անձանց անկողնային պարագաներով ապահովելու, նրանց սանիտարական վիճակի, դատապարտյալներին, կալանավորված անձանց տրվող ճաշերի պատրաստման քազմագնաության և որակի ուղղությամբ:

«Կանաձոր» քրեակատարողական հիմնարկ

Ձեռնարկվում են համապատասխան միջոցներ «Կանաձոր» քրեակատարողական հիմնարկի բժշկական հաստիքների համալրման համար: Ներկայումս 9 հաստիքներից թափուր են 2.5-ը (այդ թվում՝ 1 գլխավոր, 1 առաջատար մասնագետների և 0.5 դրույթ վարձու բժշկի հաստիքները):

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ

«Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում կատարվում են շինարարական աշխատանքներ և նախատեսվում է ցմահ դատապարտյալների համար խցեր:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններ կատարելու կապակցությամբ կնշակվի և կներկայացվի ««Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» նախագիծը:

Քրեակատարողական ծառայողները վերապատրաստվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում, ինչպես նաև մասնակցում են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին և դասընթացներին:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքների մասին հաղորդումները իրավապահ մարմիններին ներկայացնելը կարգավորվում է «Ձեռքակալված և կալանավորված

անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածով: Բացի այդ քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել է կալանավորված անձին կամ դատապարտյալին ընդունելիս նախնական բժշկական զննության ընթացքում արձանագրված և համապատասխան մատյանում գրանցված մարմնական վնասվածքների կամ վնասվածքների հետքերի վերաբերյալ անհապաղ գրավոր տեղյակ պահել ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությանը և քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Հարգանքով՝



A. Դամբարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐԱՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԳԻՆԱԿԵՐՈՒՄ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-008
19.02.2009թ.

ՀՀ Արդարադատություն նախարար
պարոն Գ. Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔԿԿ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդների խումբը բողոք է ստացել «Վարդաշեն»
ՔԿԿ-ում պահվող կալանավորված անձ Սարգիս Հացպանյանից: Բողոքում նա նշում
է, որ երկու գրահրատարակչություններից ստացել է թարգմանության պատվերներ,
որոնց դիմաց ստացված վարձատրությամբ նա կկարողանար հոգալ իր ընտանիքի
ապրուստը: Պատվերները կատարելու համար Հացպանյանը դիմել է հիմնարկի
վարչակազմին խնդրելով, որ թույլատրվի հարազատների կողմից իրեն փոխանցել իր
շարժական համակարգիչը: Չնայած, որ կալանավորված անձանց աշխատանքի
իրավունքը ամրագրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու
մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածով, իսկ շարժական համակարգիչները ընդգրկված չեն
Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության
քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և
ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով նախատեսված արգելված իրերի
ցանկում, Սարգիս Հացպանյանի խնդրանքը մերժվել է:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն փաստը, որ ներկայումս
բազմաթիվ ազատազրկվածներ իրենց մոտ ունեն համակարգիչներ, գտնում ենք, որ
Սարգիս Հացպանյանին համակարգիչ ունենալ արգելելը անհիմն է և կարող է դիտվել
որպես խտրական վերաբերմունք:

ՀՀ ԱՆ ՔԿԿ-ներում և մարմիններում հասարակական
վերահսկողություն իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ՝

Ա. Դանիելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

№ 4976
25.02.2009թ.

0078 Երևան, Չապարյան 41/ա, հեռ. 344-677
Էլ փոստ info@mej.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներում
և մարմիններում հասարակական դիտորդների
խմբի նախագահ պարոն Ա. Դանիելյանին

հասցե՝ ք. Երևան, Այգեստան 11 փողոց, տուն 43

Ի պատասխան Ձեր՝ 2009թ. փետրվարի 19-ի
09-008 բովանդակ գրության

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարի հանձնարարությամբ ուսումնասիրվել է Ձեր
վերոնիշյալ գրությամբ ներկայացված հրատապ հաշվետվությունը, որի վերաբերյալ
հայտնում ենք հետևյալը:

Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի «ՀՀ արդարադատության
նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու
վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 1543-Ն
որոշմամբ հաստատված կարգի Ձև 2-ի, շարժական համակարգիչները դիտարկվում են
որպես արգելված առարկաներ: Դա պայմանավորված է նրանով, որ վերը նշված Ձև 2-ի
16-րդ կետի համաձայն արգելված առարկա է համարվում նաև ցանկացած տեսակի այլ
առարկա, որը ընդգրկված չէ նշված 16-րդ կետով նախատեսված ցանկում: Իսկ շարժական
համակարգիչը նշված ցանկում նախատեսված չէ:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը, պետք է նշել, որ Սարգիս Հացպանյանի՝
համակարգիչ ունենալու արգելքը բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից:

Հարգանքով
Նախարարի տեղակալ՝

Ն. Առուստամյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՀԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԶԻ ԶՎ ԷՐԵՐՈՒՆՈՒ ՔՆՆՀԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ք. Երևան Մ.Սիրյանցու 162, հեռ. 57-39-00

40/31-10-412
10.03.09թ.

N 7/10-009

«1/» մարտի 2009թ.

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Զ.ՔՈՒՇԿՅԱՆԻՆ

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական Դիտորդների Խմբի նախագահ պարոն

Հարգարժան պարոն նախարար

Ա. Դանիելյանին

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի վիրաբուժական բաժանմունքում բուժվող դատապարտյալ Գառնիկ Գեորգիի Սկրտչյանի /ծնված 1962թ./ մոտ ախտորոշվել է՝ «ՕԴ-անոֆտալմիա, ՕՏ-արտահայտված էկզոֆտալմ, եղջրաթաղանթի թարախային խոց»: Համաձայն Ս.Սալայանի անվան Հանրապետական ակնաբուժական կենտրոնի բժիշկ Հ.Միրոյանի խորհրդատվության կարիք ունի վիրահատության՝ ձախ աչքի մշտական արյունային թլեֆառոռաֆիա:

ՀՀ ոստիկանության ՔԳՎ էրեբունու քննչական բաժնում քննվող թիվ 12100409 քրեական գործի նախաքննության ընթացքում 12.02.2009թ. վկա Միքայել Վռամի Բաղդասարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ լրացուցիչ տեղեկություններ կհայտնի 23.12.2008թ. ծառայողների կողմից ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի այլ խցերի կալանավորների նկատմամբ բռնություն գործադրելու մասին:

Խնդրվում է Ձեր աջակցությունը վերը նշված վիրահատությունը կատարել պետպատվերի շրջանակներում Ս.Սալայանի անվան Հանրապետական ակնաբուժական կենտրոնում:

Մ.Բաղդասարյանը պատշաճ կարգով բազմիցս հրավիրվել է էրեբունու քննչական բաժնի, սակայն չի ներկայացել:

Խնդրում եմ Ձեր աջակցությունը պարտավորեցնել Մ.Բաղդասարյանին 2009թ. մարտի 13-ին ժամը 16:00-ին ներկայանալ էրեբունու քննչական բաժնի 26 սենյակ ավագ քննիչ՝ Հ.Աշոտյանի մոտ:

ՊԵՏ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Տ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Էրեբունու քննչական բաժնի պետ
ոստիկանության գնդապետ

Ա. Ս. Սկրտչյան

ՊԵՏԻ ԲՈՒԺ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Ռ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

40/31-10-420
10.03.09թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ԳԵՆԵՐԱԼ-ՍԱՅՈՐ
Ա.ԳԻԶԻՐՅԱՆԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-90, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

№ 40/31-10-420
"16" 03 2009թ.

ՀՀ ԱՆ «ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԻՎԱՆՂԱՆՈՑ»
ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԵՏ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
Տ.ՆԱՎԱՍՏԱՐԿՅԱՆԻՆ

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿ հիմնարկի վիրաբուժական բաժանմունքում բուժվող դատապարտյալ Գառնիկ Գեորգիի Սկրտչյանի /ծնված 1962թ./ մոտ ախտորոշվել է՝ «OD-անոֆտալմիա, OS-արտահայտված էկզոֆտալմ, եղջրաթաղանթի թարախային խոց»: Համաձայն Ա.Մալայանի անվան Հանրապետական ակնաբուժական կենտրոնի բժիշկ Յ.Սիրոյանի խորհրդատվության կարիք ունի վիրահատության՝ ձախ աչքի մշտական արյունային բլեֆառոռաֆիա:
Խնդրվում է Ձեր թույլտվությունը վերը նշված վիրահատությունը կատարել պետպատվերի շրջանակներում Ա.Մալայանի անվան Հանրապետական ակնաբուժական կենտրոնում:

Ի պատասխան Ձեր 10.03.2009թ. թիվ 40/31-10-420 գրության՝ հայտնվում է, որ թույլատրվում է ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բուժվող դատապարտյալ Գառնիկ Գեորգիի Սկրտչյանին 12 ժամով տեղափոխել «Ա.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ՝ վիրահատության նպատակով:
Դատապարտյալ Գ.Սկրտչյանի տեղափոխումը և պահպանումը հանձնարարվում է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Տ.Նավասարդյանին:

ՊԵՏ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
Տ.ՆԱՎԱՍՏԱՐԿՅԱՆ

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
Վ.ՔՈՉԱՐՅԱՆ

Կատարող Ռ.Միքայելյան

Կատ. Գ.Խաչատրյան

496
16 03 09

N 09-010
02.03.2009թ.

ՀՀ Արդարադատություն նախարար
պարոն Գ. Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամներ Մ.Արամյանը, Մ. Բաղդասարյանը, Լ. Հարությունյանը և Գ. Շահնագարյանը 2009 թվականի փետրվարի 22-ին այցելություն են կատարել «Մեդրի» քրեակատարողական հիմնարկ:

«Մեդրի» ՔԿՀ-ն Հայաստանի միակ հիմնարկն է, որտեղ դատապարտյալները պահվում են բացառապես բաց ուղղիչ հիմնարկի պայմաններում: Հիմնարկը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղից 7 կիլոմետր հեռավորության վրա: Բաց տիպի ուղղիչ հիմնարկի որոշ դատապարտյալներ բնակվում են նաև Նոնաձոր գյուղում: Հիմնարկի վարչական շենքը գտնվում է Նոնաձոր գյուղում: Խմբի այցելության պահին հիմնարկում վարչակազմի ոչ մի աշխատակից չկար:

Հիմնարկը տեղակայված է մոտ 60մ² բնդիանուր մակերեսով ունեցող երկաթգծի նախկին կայարանի շենքում որը բաժանված է երկու մասերի: Մի մասը ծառայում է դատապարտյալների համար որպես բնդիանուր ննջարան, իսկ մյուս հատվածը հարմարեցված է որպես պահեստային, խոհանոցային և ճաշարանային մաս:

Հիմնարկի ղուգարանը գտնվում է դրսում շենքից 10մ հեռավորության վրա: Դա կիսախարխուլ վիճակում է և ամբողջովին կեղտով լցված: Զուգարանի անմիջապես դիմացը գտնվում է 800 լիտր տարողությամբ ջրի տարա, որն էլ դատապարտյալների խմելու և կենցաղային ջրի միակ աղբյուրն է հանդիսանում: Նշենք, որ ջուրը բերվում է 15 օրը մեկ անգամ: Հիմնարկում բացակայում են լողանալու, լվացք անելու, անգամ լվացվելու տարրական հարմարությունները:

Հակասահիտարական անմիջապես անվիճակում էր նաև խոհանոցը, լրակազմով նախատեսված 50 հոգու համար կար բնդամներ 1 հնամաշ սառնարան, սննդի պահեստավորման ոչ մի հարմարություն չկար: Դատապարտյալները դժգոհում են կրծողների առատությունից, իսկ տարվա տաք եղանակներին թունավոր սողուններից և միջատներից:

Ըստ ԱՆ պաշտոնական տվյալների 02.02.09 դրությամբ հիմնարկում պահվում էին 38 դատապարտյալ: Հանրակացարանում ներկա էին 9 դատապարտյալ, ևս երեքը բնակվում էին Նոնաձոր գյուղում: Ներկա 9 դատապարտյալների մեծ մասը ծանոթ էին Խմբի անդամներին դեռևս 2008 թվականի ընթացքում կատարված երկու այցելություններից:

Բոլոր դատապարտյալները, բացառությամբ մեկի, ունեն «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի հետ կերպով աշխատանքային պայմանագրեր: Սեզոնային աշխատանքների ժամանակ դատապարտյալները ներգրավվում են գյուղատնտեսական աշխատանքների մեջ և վարձատրվում են ամսական 12000-14000 դրամ, որը չի համապատասխանում Հայաստանում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձին: Սեզոնային աշխատանքների ընթացքում դատապարտյալները ստիպված են լինում աշխատել առավոտյան 7-ից մինչև երեկոյան ժամը 11-ը, ինչը աշխատանքային օրենսդրության կոպիտ խախտում է:

Դատապարտյալների կողմից իրենց անձնական հաշիվներում գտնվող գումարներից օգտվելու հստակ մեխանիզմ չի գործում: Դատապարտյալները նշեցին նաև, որ իրենց աշխատավարձերի ցուցակներում իրենց անուն, ազգանունները, իրենց կողմից դրված ստորագրությունները կատարվում են թանաքով, իսկ աշխատավարձերի չափերը և վճարվող գումարները գրվում են մատիտով, որը ՀՀ-ում ընդունված հաշվապահական հաշվառման մասին իրավական նորմերի կոպիտ խախտում է և կարող է չարաշահումների տեղիք տալ: Բացի այդ դատապարտյալների կողմից ցանկացած դիմում գրելը վարչակազմի կողմից դիտվում է, որպես կանոնակարգի խախտում: Օրինակ դատապարտյալներից մեկի արձակուրդ գնալու խնդրանք դիմումը պատճառ է դարձել, որ նրան որպես պատիժ Նոնաձոր գյուղից տեղափոխեն նախկին կայարանի շենք:

«Մեդրի» ՔԿՀ-ն չունի բժիշկ: Հիմնարկության բուժկետը գտնվում է Նոնաձոր գյուղում, որի հեռավորությունը թույլ չի տալիս միակ հիմնարկի և գյուղի բուժակին շտապ բուժօգնություն ցույց տալ: Բուժակի այցելությունները շատ հազվադեպ են լինում: Հանրակացարանի շենքում, որ պահվում են դատապարտյալները, չկան առաջին անհրաժեշտության դեղերն ու բժշկական միջոցները, այն դեպքում երբ մոտակա բուժկետը գտնվում է հանրակացարանից 7 կմ հեռավորության վրա:

Անձնական հիգիենայի պիտույքներով և անկողնային պարագաներով դատապարտյալները ապահովված չեն: Ննջասենյակում տեղադրված մահճակալները շատ հին են և գտնվում են մաշված, խարխուլ վիճակում: Ննջասենյակը տարացվում էր փայտյա վառարանով: Սակայն դա չի կարող ապահովվել սենյակի անհրաժեշտ ջերմաստիճանը քանի որ պատուհանների ապակիների մեծ մասը կոտրված են և փակված են պոլիէթիլենային թաղանթով: Դատապարտյալների նրքքին տեղաշարժը վարչակազմի կողմից կամայականորեն սահմանափակված էր, մինչ դեռ համաձայն ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի 103-րդ հոդվածի, բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է ցերեկային ժամերին տեղաշարժվել ուղղիչ հիմնարկի տարածքում: Դատապարտյալները իրավունք չունեն առանց հիմնարկի պետի թույլտվության տեղաշարժվել հիմնարկի տարածքում: Օրինակ առանց թույլտվության չեն կարող գնալ գյուղ և գնել սննդամթերք, այն դեպքում երբ ուղղիչ հիմնարկի վարչակազմը գտնվում է այդ գյուղում:

Դատապարտյալներից մեկը ամուսնացել է գյուղում ապրող բնակիչներից մեկի հետ, սակայն նա առանց թույլտվության չի կարող գնալ իր կնոջ մոտ: Առանց թույլտվության գյուղ գնալը, ըստ պետի կողմից դիտվում է որպես ներքին կանոնակարգի խաղախախտում և հաճախ պատժվում 10-օրյա պատժախցով, որի կրումը իրականացվում է «Գորիա» ՔԿՀ-ում:

Հիմնվելով վերոգրյալի վրա խումբը գտնում է, որ «Մեդրի» քրեակատարողական հիմնարկում անմարդկային պայմաններ են, այնտեղ պահվող դատապարտյալներին անհրաժեշտ է անհապաղ տեղափոխել այլ հիմնարկներ և արգելել նոր մարդ հիմնարկ ընդունելը մինչև հիմնարկի պայմանները չհամապատասխանեցվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

Ա. Դանիելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ Կ-1852
«6» 04 2009թ.

0078 Երևան, Շաղապան 41/ա, հեռ. 344-677
Էլ. փոստ info@pmg.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում
և մարմիններում հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդների խմբի
նախագահ

Պարոն Ա. Դանիելյանին

Ձեր 2009թ. մարտի 2-ի հրատապ հաշվետվության
քննարկման արդյունքների մասին

Հարգելի պարոն Դանիելյան,

Նախ, շնորհակալություն եմ հայտնում Ձեր կողմից կատարված վերահսկողական քննության աշխատանքի և դրանով իսկ համակարգին ցուցաբերած աջակցության համար: Ստորև իմ կողմից հանգամանորեն ներկայացված են հրատապ հաշվետվության քննարկման արդյունքները: Միաժամանակ, Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ հաշվետվությունում, ցավոք, տեղ են գտել ակնհայտ անհիմն և, ըստ իս, հապճեպ արված եզրահանգումներ, ինչը, կարծում եմ, ճանաչվելու է մտամաբույր փաստաթղթերի ներգրեցության իրական հնարավորությունը: Հավանաբար, եզրահանգումների համար հիմք են ընդունվել միայն որոշ դատապարտյալների ապատեղեկատվությունը, ինչն ընդունվել է իբրև անբեկանելի ճշմարտություն:

Կարծում եմ, հետագայում հարկ կլինի աշխատանքները կազմակերպելիս, առավել համարժեքորեն ու հետևողականորեն կիրառել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության արդարադատության մարտարի 2005թ. դեկտեմբերի 2-ի թիվ ԹՀ-66-Ն հրամանով սահմանված «Զբեկատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման» Կարգով:

Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ մաս վեճանայելու վերոհիշյալ կարգը՝ Ձեր կողմից ներկայացված նկատառումներին համապատասխան:

Ձեր կողմից 2009թ. մարտի 2-ին ներկայացված հրատապ հաշվետվության մեջ նշված հանգամանքները պարզելու նպատակով կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով հաշվետվության մեջ նշված հանգամանքների մի մասը հիմնավորվել է, իսկ մյուս մասը՝ ոչ: Մասնավորապես, դատապարտյալների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դեպքեր չեն արձանագրվել:

Դատապարտյալների կացարանն, իրոք, գտնվում է շենքային վատ պայմաններում, շենքը կարիք ունի հիմնական վերանորոգման, անհրաժեշտ է մաս հիմնարկն ապահովել համապատասխան կահույքով, խոհանոցային և կենցաղային պարագաներով, սակայն ինչպես սենյակների, այնպես էլ հարակից տարածքի սահմանարկան վիճակը բավարար է: Սուղաման արդյունքներով պարզվել է, որ կացարանի պատռահաններին բացակա կամ կտրոկված ապակիներ չեն եղել, ծնոանը կացարանը տաքացվել է փայտե վառարանով, իսկ կացարանի ջերմաստիճանը եղել է բավարար:

Նոմաձոր գյուղը և հարակից տարածքները կոյուղի չունեն, կայարանի շենքում պահվող դատապարտյալների օգտագործման համար ջուրը տարվում է շարժական տարայով, սակայն ջրի քանակի ու որակի մասին դատապարտյալների կողմից բողոքներ չեն եղել, ջուրը քարմնացվում է ոչ քե 15 օրը, այլ շաբաթը մեկ անգամ:

Դատապարտյալները լոգանք ընդունում են առնվազն շաբաթը մեկ անգամ՝ հիմնարկի պետի տան բակում գտնվող լոգարանում, այդ կապակցությամբ նույնպես որևէ դժգոհություն դատապարտյալները չեն հայտնել:

Դատապարտյալների կողմից առավոտյան ժամը 7.00-ից մինչև երեկոյան ժամը 23.00-ն աշխատելու հանգամանքը նույնպես չի համապատասխանում իրականությանը, նրանք իրենց բացատրություններում նշել են, որ աշխատանքները հիմնականում կատարել են առավոտյան ժամը 8.00-9.00-ից մինչև 11.00-12.00-ը, սաստիկ շոգի պատճառով հանգստացել են մինչև ժամը 17.00-18.00-ը, որից հետո շարունակել են աշխատանքները՝ ևս 2 ժամ:

Ինչ վերաբերվում է դատապարտյալների ներքին տեղաշարժի սահմանափակմանը, ապա դա չի համապատասխանում իրականությանը: Ըստ դատապարտյալների բացատրությունների, իրենք ցերեկային ժամերին հիմնարկի տարածքում տեղեւարժվում են առանց որևէ սահմանափակման, իսկ Նոմաձոր գյուղ գնալու համար ստանում են հիմնարկի պետի թույլտվությունը: Դատապարտյալները գյուղ գնում են հիմնականում խանութից գնումներ կատարելու կամ լոգանք ընդունելու նպատակով: Նկատի ունենալով, որ կայարանի տարածքից մինչև Նոմաձոր գյուղ հազվադեպ է մեքենա գնում, իսկ ճանապարհը բավականին անհարմար և հեռու է, գյուղ հիմնականում գնում են հիմնարկի պետի հետ՝ վերջինիս մեքենայով: Տվյալ դեպքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից պահպանվել են ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 103-րդ հոդվածի պահանջները, հասնաձայն որի բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է տեղաշարժվել գիշերային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում, իսկ ցերեկային ժամերին՝ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում, և ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ՝ դրանից դուրս: Նոմաձոր գյուղը չի կարող համարվել քրեակատարողական հիմնարկի տարածք, ուստի ցերեկային ժամերին գյուղ գնալու համար դատապարտյալները պարտավոր են ստանալ հիմնարկի պետի թույլտվությունը:

Ներկայումս ՀՀ ԱՆ «Մեղրի» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալներից որևէ մեկը Նոմաձոր գյուղում կին չունի: Այդպիսի փաստ եղել է 2008թվականին. նախկին դատապարտյալ Հ.Դովլաթյանը պայմանական վաղաժամկետ ազատվելուց մի քանի օր առաջ ամուսնացել է Նոմաձոր գյուղի բնակչուհիներին մեկի հետ և նրանց ամուսնության կազմակերպման համար մեծ է եղել հիմնարկի վարչակազմի աջակցությունը (այդ ամուսնության մասին եղել է նաև հեռուստառեպորտաժ):

Բաց տիպում պահվող դատապարտյալներն իրավունք ունեն իրենց նոտ ունենալ գումար և քանկարժեք իրեր, ուստի աշխատավարձերը նրանք ստանում են առձեռն և անձնական հաշիվներ բացելու կարիք չկա:

Ըստ դատապարտյալների կողմից տրված բացատրությունների՝ անձնական հիգիենայի պիտույքներ և անկողնային պարագաներ սահմանված կարգով և չափով ստանում են հիմնարկի պետից: Ուսումնասիրությունների ժամանակ դատապարտյալների կացարանում բոլորին հասանելի տեղում դրված են եղել օճառ, լվացքի փոշի, ատամի մածուկ, խոզանակներ և հիգիենայի այլ պարագաներ:

Դատապարտյալների կացարանում առկա են եղել նաև առաջին անհրաժեշտության դեղորայք և պարագաներ: Դատապարտյալներն իրենց բացատրություններում նշել են, որ քրեակատարողական հիմնարկի բուժօրյալը պարբերաբար այցելում է, կարիքի դեպքում ցույց է տալիս համապատասխան օգնություն և հատկացնում դեղորայք: Քրեակատարողական հիմնարկի բուժօրյալը, ոչ քե Նոմաձոր գյուղի անամաբուժժ է, այլ հանդիսանում է նշված համայնքի բուժկետի բուժօրյալը:

Հիմնարկի վարչակազմի կողմից՝ դատապարտյալների դիմումներ գրելու և ուղարկելու իրավունքի սահմանափակումների դեպքեր չեն եղել և որևէ մեկը դիմում գրելու

համար կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել: Դատապարտյալների անձնական գործերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի պետի բացատրությամբ պարզվել է, որ դատապարտյալ Արմեն Արտավազյի «Դազարյանը 19.07.2008թ. կարգապահական տույժի է ենթարկվել Նոմաձոր գյուղում գտնված ժամանակ ոգելից խմիչք ձեռք բերելու և օգտագործելու համար: Կարգապահական տույժը կրելուց հետո այդ դատապարտյալը տեղափոխվել է կայարանի նախկին շենք՝ հետագայում մեծամասիվ խախտումները բացատրելու նպատակով, ինչը չի կարող դիտվել որպես «պատիժ», քանի որ դատապարտյալների հիմնական մասն առանց որևէ կարգապահական խախտման պահվում են: այդ կացարանում, բացի այդ, մեծամասնությանը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ:

Աշխատավարձերի ցուցակներում աշխատավարձի չափերը մատիտով նշված լինելու հանգամանքը չի հիմնավորվել: Դատապարտյալներն իրենց բացատրություններում նշել են, որ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ 2008թ. կնքած աշխատանքային պայմանագրերի համաձայն կատարել են գյուղատնտեսական աշխատանքներ: Աշխատավարձի չափն, ըստ ամիսների տատանվում է՝ 14500 դրամից մինչև 25000 դրամ, ինչը կախված է կատարված աշխատանքի ծավալներից: Որոշ դատապարտյալներ նշել են, որ ամսվա մի մասը կարճատև մեկնումների մեջ գտնվելու կամ հիվանդ լինելու պատճառով ամիսը չեն աշխատել, ուստի ստացել են սահմանված աշխատավարձից պակաս աշխատավարձ: Աշխատավարձի ցուցակներում անճշտություններ, մատիտով գրառումներ որևէ մեկը չի նկատել, այդ մասին նույնպես դիտորդների հետ չեն խոսել: Առավելագույն 25000 դրամ ստացել են հիմնականում բերքահավաքի ամիսներին: 2008թվականի հոկտեմբեր ամսվա աշխատավարձը մինչ օրս չեն ստացել:

Ըստ «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գլխավոր տնօրեն Թ.Պողոսյանի ներկայացրած տեղեկանքների ու փաստաթղթերի, դատապարտյալների հետ երկկողմանի համաձայնությամբ, կատարված աշխատանքների դիմաց վարձատրությունը կատարվել է իրականացրած աշխատանքների գնահատմամբ և աշխատած ժամերի հաշվարկով՝ հիմք ընդունելով նվազագույն աշխատավարձի սահմանը: 2008թվականի հոկտեմբեր ամսվա համար (12 անձանց շուրջ 260000 դրամի սահմանում) աշխատավարձը չի տրվել դատապարտյալների կողմից աշխատանքներն անբարեխիղճ և անփութ կատարելու պատճառով, որի արդյունքում հիմնադրամը կրել է լուրջ վնասներ: 2008թվականին դատապարտյալներին վճարվել է 2227500 դրամ աշխատավարձ, 2007 թվականին՝ 1238415 դրամ: Համաձայն 2008թվականի նոյեմբերի 11-ի «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գլխավոր տնօրենի տեղակալ Ղ.Ղազարյանի զեկուցագրի՝ դատապարտյալների կողմից բերքահավաքն ընթանցել է անխնայ, անփութ կերպով, բերքի զգալի քանակություն թափվել է ծառերի տակ և փչացել, ծառերի ճյուղերի մի մասը բերքահավաքի ընթացքում կտրտվել են: Չդատար առումները չմարբերել և ռոզգուժել ոչ պրոդուկտիվ կատարելու պատճառով ծառերի մի մասը չորացել են: Այգիներում աշխատանքի ընդգրկված դատապարտյալներն իրենց պարտականությունները կատարել են անբավարար:


Ծառայողական քննության արդյունքներով քրեակատարողական վարչությունում կազմակերպվել է քննարկում հասարակական դիտորդների հետ, որի ընթացքում ներկայացվել են ծառայողական քննությանը հիմնավորված փաստերը:

Հարկ են համարում նշել նաև, որ ՀՀ ԱՆ «Մեղրի» քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալների համար կենցաղային բավարար պայմաններ ստեղծելու նպատակով հանձնարարվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ հիմնարկին անշարժ գույքով, կահույքով, խոհանոցային և կենցաղային պարագաներով ապահովելու համար:

Մասնավորապես, հանձնարարվել է սեղմ ժամկետում ապահովել հիշյալ անշարժ գույքի պետական գրանցման ապահովումը (պարզվում է տարիներ շարունակ անշարժ գույքը սահմանված կարգով չի ստացել պետական գրանցում և դեռևս նախարարության հաշվեկշռում չի գտնվում), ինչը հնարավորություն կտա օրինական կարգով ապահովելու այդ շինությունների վերանորոգման աշխատանքների բնականոն ընթացքը: Խնդիրն այն է, որ քանի դեռ շինությունը պատշաճ կարգով գրանցված չէ, հնարավոր չէ հաստատություններ իրականացնել պետական բյուջեից:

Ձեր կողմից բարձրացված մյուս հարցադրումները ևս կլուծվեն հնարավորինս սեղմ ժամկետում:

Հարգանքով՝


Գ. Դանիկյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԸՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՊԵՏ**

ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 63
55

Հեռ./ֆաքս 38-01-

բջջային 094-56-80-02
Էլ. Փոստ: pr@moj.am

15.04.2009թ.

**«ԱՐՄԵՆԻԱՆՈՒ» ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԽՆԲԱԳԻՐ ԶՈՆ ՀՅՈՒՉԻՆ**

Ձեր 2009թ. փետրվարի 19-ին ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված գրության կապակցությամբ հայտնվում է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող Սերգեյ Պետրոսյանը, Ստեփան Ներսիսյանը, Կարեն Բոյաջյանը, Արամ Առաքելյանը, Արթուր Կոստանյանը, Արթուր Համբարձումյանը, Իգոր Օհանյանը – Արսեն Արծրունին հրաժարվել են տեսակցել լրագրող Վահան Իշխանյանի հետ:

ԱՐՄԵՆ ԲԱԲԱՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

**GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA**

N 09-015
17.05.2009թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ.Դանիելյանին

Հարգելի պարոն նախարար,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2009 թվականի հունիսի 5-ի նիստին որոշում ընդունվեց հաստատել «Մեդրի» ՔԿՀ-ի վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը:

Կից ուղարկում եմ նիստի արձանագրության քաղվածքը և ընթացիկ հաշվետվությունը:

ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդների
խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11 փ, 43 շ.

Aygestan 11th str., 43 build, Yerevan 0025, RA

Tel / fax: (+37410) 55 96 34

e-mail: pmg.armenia@hra.am





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ Ա 3442
 « 26 » 06 2009թ.

0076 երևան, Գալստյան 41/ա, հեռ. 380-389
 էլ. փոստ info@pmg.am

Հայաստանի Հանրապետության
 արդարադատության նախարարության
 քրեակատարողական հիմնարկներում և
 մարմիններում հասարակական վերահսկողություն
 իրականացնող հասարակական
 դիտորդների խմբի նախագահ
 պարոն Ա. Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր 2009թ. մայիսի 17-ի թիվ 09-015 գրության կապակցությամբ տեղեկացվում է, որ նկատի ունենալով ՀՀ արդարադատության նախարարության «Մեղրի» քրեակատարողական հիմնարկում առկա խնդիրների յուրահատկությունը և դրանց լուծման համար անհրաժեշտ ձեռնարկվելիք միջոցառումների համընդհանուր բնույթը՝ ներկայումս քրեակատարողական համակարգի զարգացման հեռանկարային ծրագրի շրջանակներում քննարկվում է «Մեղրի» քրեակատարողական հիմնարկի հետագա գործունեության նպատակահարմարության հարցը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Գ. ԳԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՐԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
 ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
 OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
 OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-017
 13.07.2009թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
 պարոն Գ. Դանիելյանին

Հրատապ հաշվետվություն

Հարգելի պարոն նախարար

Ֆրանսիայի քաղաքացի Սարգիս Գևորգի Հացպանյանը դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: Նա մեղադրվում է ՀՀ քր. օր-ի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ /Մուտ մատնություն/: Այժմ նա գտնվում է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿԶ-ում:

2009թ. հունիսին ՀՀ Ազգային Ժողովի կողմից, համաներում հայտարարելու մասին ընդունված որոշման 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն պատժից ազատվում են նաև ՀՀ պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցները: Սարգիս Հացպանյանի վերաբերյալ առկա են բազմաթիվ մարդկանց վկայություններ՝ տրված ԼՂՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Ռ. Հուսնունցի, Մահապարտների «Արծիվ» գումարտակի «X» կործանիչ զասակի և «Վլադիմիր Բալայանի» անվան ջոկատի մարտիկների կողմից առ այն, որ Սարգիս Հացպանյանը 1991-1993թթ. իրենց հետ միասին մասնակցություն է ունեցել ռազմական գործողություններին և մասնակցել է մի շարք բնակավայրերի պաշտպանության մարտերին, բացի այդ 1993թ. նրան տրվել է սպայի վկայական: Ինչպես նաև իր քրեական գործում կան փաստեր, որ նա, ԼՂՀ ՊԲ հրամանատարի, թիվ 85 առ 29.10.1996թ. հրամանով, պարզևատրվել է «COLT SPECIAL 38» տեսակի, W 03409 սերիայի ատրճանակով, իսկ 1993թ. ՀՀ Ռազմական ոստիկանության կողմից առգրավվել է ՊՄ տեսակի, թիվ 4249 OS սերիայի ատրճանակ, որը հաշվառված է եղել ԼՂՀ ՊԲ թիվ 49971 գործամատում և ամրակցված է եղել Սարգիս Հացպանյանին: Չնայած այս ամենին նրա նկատմամբ համաներում չի կիրառվել և Ս. Հացպանյանը մինչև օրս գտնվում է անազատության մեջ:

Խնդրում եմ հայտնել կիրառվելու է արդյո՞ք համաներում Սարգիս Հացպանյանի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՉԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԿՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

Կից ներկայացնում եմ

1. Տեղեկանքների և վկայությունների պատճեններն առ այն, որ Ս.Հացպանյանը մասնակցել է ռազմական գործողություններին:
2. Նրան տրված սպայական վկայականի պատճենը:
3. Ս.Հացպանյանի վերաբերյալ քրեական գործում առկա գրությունները, որտեղ նշված է, որ Ս.Հացպանյանը պարզևատրվել է ատրճանակով և իրեն ամրակցված է եղել ատրճանակ:

N 09-029
27.07.2009թ.

ՀՀ Պաշտպանության նախարար՝
պարոն Ա.Օհանյանին

ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների
Խմբի նախագահ՝



Ա. Դանիելյան

Դ Ի Մ ՈՒ Ս

Հարգելի պարոն նախարար,

Ֆրանսիայի քաղաքացի Սարգիս Գեորգի Հացպանյանը դատապարտվել է ազատազրկման 3 տարի 6 ամիս ժամկետով: Նա մեղադրվում է ՀՀ քր. օր-ի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ /Սուստ մատնություն/: Այժմ նա գտնվում է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ում:

2009թ. հունիսին ՀՀ Ազգային Ժողովի կողմից, համաներում հայտարարելու մասին ընդունված որոշման 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն պատժից ազատվում են նաև ՀՀ պաշտպանության համար մղված մարտական գործողությունների մասնակիցները: Սարգիս Հացպանյանի վերաբերյալ առկա են բազմաթիվ մարդկանց վկայություններ՝ տրված ԼՂՀ Ազգային Ժողովի փոխնախագահ Ռ.Հուսեյնցի, Մահապարտների «Արծիվ» գումարտակի «X» կործանիչ դասակի և «Վլադիմիր Բալայանի» անվան ջոկատի մարտիկների կողմից առ այն, որ Սարգիս Հացպանյանը 1991-1993թթ. իրենց հետ միասին մասնակցություն է ունեցել ռազմական գործողություններին և մասնակցել է մի շարք բնակավայրերի պաշտպանության մարտերին, բացի այդ 1993թ. նրան տրվել է սպայի վկայական: Ինչպես նաև իր քրեական գործում կան փաստեր, որ նա, ԼՂՀ ՊԲ հրամանատարի, թիվ 85 առ 29.10.1996թ. հրամանով, պարզևատրվել է "COLT SPECIAL 38" տեսակի, W 03409 սերիայի ատրճանակով, իսկ 1993թ. ՀՀ Ռազմական ոստիկանության կողմից առգրավվել է ՊՄ տեսակի, թիվ 4249 OS սերիայի ատրճանակ, որը հաշվառված է եղել ԼՂՀ ՊԲ թիվ 49971 գործամասում և ամրակցված է եղել Սարգիս Հացպանյանին: Չնայած այս ամենին նրա նկատմամբ համաներում չի կիրառվել և Ս.Հացպանյանը մինչև օրս գտնվում է անազատության մեջ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԻԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 Երևան, Մայրաքաղաքի մարզ, հեռ. 050-339
Ի պրոսպեկտի ուղիղությամբ

№ Կ 3899
22.07.2009թ.

2009 թվականի հուլիսի 13-ին հրատապ հաշվետվությամբ Հասարակական Դիտորդների խումբը դիմել է Արդարադատության նախարարին, խնդրելով տեղեկացնել, կիրառվելու է արդյո՞ք համաներում Սարգիս Հացպանյանի նկատմամբ:

Արդարադատության նախարարության 2009 թվականի հուլիսի 22-ի Ե3899 գրությունով մեզ պատասխանել են՝ «Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի թիվ Ն-152-4 որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները դատապարտյալ Սարգիս Հացպանյանի վրա կտարածվեն ՀՀ պաշտպանության նախարարությունից համապատասխան պաշտոնական տեղեկատվությունը ստանալուց հետո:

Խնդրում են, հաշվի առնելով կից ներկայացված փաստաթղթերը՝ քննարկել ՀՀ Պաշտպանության համար տեղի ունեցած մարտերին՝ Սարգիս Հացպանյանի մասնակցության փաստը, և դրա վերաբերյալ տրամադրել մեզ համապատասխան գրություն:

Կից ներկայացնում են

1. Տեղեկանքների և վկայությունների պատճեններն առ այն, որ Ս.Հացպանյանը մասնակցել է ռազմական գործողություններին:
2. Նրան տրված սպայական վկայականի պատճենը:
3. Ս.Հացպանյանի վերաբերյալ քրեական գործում առկա գրությունները, որտեղ նշված է, որ Ս.Հացպանյանը պարզևատրվել է ատրճանակով և իրեն ամրակցված է եղել ատրճանակ:
4. Արդարադատության նախարարությանից ստացած 2009 թվականի հուլիսի 22-ի Ե3899 գրությունը:

Հայաստանի Հանրապետության արդարադատություն
նախարարության քրեակատարողական հիմնարկներում և
մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ
Պարոն Ա. Գամիելյան

Ի պատասխան Ձեր՝ 13.07.2009թվականի
N 09-017 թվակիր գրության

«Համաներում հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 2009թվականի հունիսի 19-ի թիվ Ն-152-4 որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթները պատապարտյալ Սարգիս Գևորգի Հացպանյանի վրա կտարածվեն ՀՀ պաշտպանության նախարարությունից համապատասխան պաշտոնական տեղեկատվությունը ստանալուց հետո:

ՀՀ ԱՆ ՔԿԸ Հասարակական վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների
Խմբի նախագահ

Ա. Դանիելյան

Հարգանքով՝

Պ. Գամիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԴԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԿԱԿԵՐՈՒՄ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒՄԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 09-019
16.07.2009 թ.

ՀՀ Գլխավոր դատախազ,
պարոն Ա. Հովսեփյանին

Հարգելի պարոն դատախազ,

Սույն թվականի հունվարի 14-ին ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբը նամակ էր ուղղել Ձեր, ուր խնդրում էր հայտնել թե հարուցվել է արդյո՞ք քրեական գործ 2008 թվականի դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկվածների հանդեպ տեղի ունեցած բռնությունների կապակցությամբ:

ՀՀ Գլխավոր դատախազության կողմից 2009 թվականի հունվարի 21-ի N17/6-15 մեզ ուղարկված գրությունում նշվում է, որ նյութերը ուղարկվել են Էրեբունու քննչական բաժին թիվ 12100409 քրեական գործին կցելու նպատակով: Արդյունքների մասին խոստացվել էր հայտնել լրացուցիչ:

Խնդրում եմ հայտնել դատապարտյալների նկատմամբ բռնություն կիրառելու վերաբերյալ իրականացված նախաքննության արդյունքները:

Հարգանքով,

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն
Իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Գ Լ Խ Ա Վ ՈՐ Դ Ա Տ Ա Ն Ա Ջ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

375010, ք. Երևան, Վ. Մարգարյանի փող. 5

N 17-1/09
«23» հուլիսի 2009թ.

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ պարոն Ա.Դանիելյանին /քաղ. Երևան, Այգեատան 11 փող. 43 տուն/

Ձեր 16.07.09թ.
թիվ 09-019 գրությանը

Հարգելի պարոն Դանիելյան

Ի լրումն մեր 21.01.2009թ. թիվ 17/6-15 գրությանը հայտնվում է, որ հասարակական դիտորդների խմբի «հրատապ հաշվետվությունը» Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 36 խցում կատարված բռնությունների վերաբերյալ, ցուցումով ուղարկվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժին, վարույթում քննվող թիվ 12100409 քրեական գործի շրջանակներում համատեղ ընթացքը որոշելու համար:

Նախաքննությամբ հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները 2008թ. դեկտեմբերի 23-ին «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ 36 խցում ոչ պլանային միջոցառում իրականացնելիս գործել են իրենց վերապահված փազորությունների շրջանակներում և քննիչի 28.04.2009թ. որոշմամբ, նրանց նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառարանությամբ:

Նույն գործով մեղադրանք է առաջադրվել թիվ 36 խցի դատապարտյալ Արթուր Հրանտի Տոնոյանին, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 316 հոդվածի 2-րդ մասով / իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը/, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Էրեբունու և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի Էրեբունու և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 18.06.2009թ. դատավճռով Ա.Տոնոյանը դատապարտվել է ազատազրկման:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետի պաշտոնակատար, արդարադատության երկրորդ դասի խորհրդակցական

Վ.Ավետիսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵՄԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՆԵՐԻ ԽՈՒՄԲ**

**GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA**

N 09-018
13.07.2009թ.

ՀՀ Արդարադատություն նախարար
պարոն Գ. Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամներ՝ Լ.Հարությունյանը, Գ.Շահնազարյանը, Մ.Բաղդասարյանը և փորձագետ՝ Լ.Գասպարյանը 2009 թվականի հունիսի 9-ին և 24-ին այցելություն կատարեցին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ:

Հունիսի 9-ին խմբի անդամները այցելեցին բուժմասում գտնվող կալանավոր Արթուր Հովսեփյանին, որը հիվանդ էր շաքարային դիաբետով և ստանում էր 62 միավոր ինսուլին, III կարգի հաշմանդամ է, տառապում է անսիզապահության, կոնյուկտիվիտով (թարախային արտադրությամբ), դիստալ պոլիոէրոպատիայով, ստորին վերջույթների անգիոպատիայով, գտնվում էր անկողնային վիճակում, գիտակցությունը պարզ էր, հարցերին պատասխանում էր: Նախապես համաձայնություն ստանալով Ա. Հովսեփյանից՝ խմբի անդամները փորձեցին ծանոթանալ հիվանդության պատմագրին և բժշկական քարտին, քանի որ, համաձայն ՀՀ կառավարության 26 մայիսի 2006թ. N825-ն որոշման գլուխ 7 կետ 55-ի, հիվանդը, որ գտնվում է բուժմասում և պետք է ունենար հիվանդության պատմագիր: Պարզվեց, որ ազատագրվածի հիվանդության պատմագիր գոյություն չունի, իսկ ամբուլատոր քարտում բժշկի կողմից վերջին գրառումը կատարվել էր 05.03.2009թ.:

Դեղորայքների բացթողման տեսքում վերջին 3 օրերի համար հիվանդին բուժակի ստորագրությամբ տրվել էր միայն ինսուլին: Բժիշկը հավաստիացնում էր, որ հիվանդի աչքերը մշակում են տետրացիկլինի քսուլով, բայց ոչ մի փաստաթղթով դա չէր հիմնավորվում: Հիվանդը տառապում է նաև զարկերակային հիպերտենզիայով, որի համար «Էրեբունի» Բժշկական Կենտրոնի էնդոկրինոլոգիական բաժանմունքի 02.03.2009 թ. էպիկրիզում նշված էին մի շարք դեղեր, սակայն դրանք հիվանդին տրվելու վերաբերյալ ոչ մի փաստաթղթային գրառում չկար:

Նույնը վերաբերվում էր ազատագրված Հրանտ Բայրամյանին, որը ստանում էր բժշկի կողմից տրված դեղորայք, ինչը բժշկական քարտում հիմնավորված չէր: Այդ քարտում վերջին

գրառումը կատարվել էր 2007 թվականին: Բուժակի ստորագրությամբ տրվել էր 5 օրվա համար նախատեսված դեղորայք, բայց անցել էր 8 օր, և հիվանդի մոտ դեռ կային այդ դեղերը:

Հունիսի 24-ի այցից պարզվեց, որ Հովսեփյան Արթուրը դեռևս գտնվում է բուժմասում: Ինչպես նախորդ այցի ժամանակ, այնպես էլ հունիսի 24-ի այցի ժամանակ, բացված չէր հիվանդության պատմագիր, և որևէ գրառում չկար բժշկական քարտում: Միայն բժշկական քարտում նշվեց, որ հիվանդին տեղափոխում են «Արմենիա» ԲԿ՝ առողջական վիճակի վատթարացման պատճառով: Նրա վիճակը ծանր էր նույնիսկ 09.06.2009թ. այցի ժամանակ: 24.06.2009թ. այցի ժամանակ բուժ մասում գտնվող Հայկ Վարդանյանի համար, որը տառապում էր աչքի հիվանդությունով, նույնպես բացված չէր հիվանդության պատմագիր, այնինչ ազատագրվածը նշում էր, որ հունվար ամսից գտնվում է բուժմասում: Համաձայնություն ստանալով ազատագրվածից՝ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրման համար, խմբի անդամները պարզեցին, որ բժշկական քարտում վերջին գրառումը կատարվել էր 25.03.09թ. Ըստ նրա փաստաթղթերի, որոնք կցված են հաշվետվությանը, ազատագրվածի հիվանդությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության 26.05.2006թ. N 825-Ն որոշման «Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդություններ»-ի 26-րդ կետին:

Խնդրում ենք հայտնել, ինչպիսի՞ գործողություններ են իրականացվում ազատագրվածներ՝ Հրանտ Բայրամյանի և Հայկ Վարդանյանի բուժման կամ պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությամբ տառապելու պատճառով պատիժը դադարեցնելու ուղղությամբ:

Հիմնվելով վերոգրյալի վրա՝ խումբը գտնում է նաև, որ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բուժմասում լիաբժեք չի կազմակերպվում հիվանդների բժշկական փաստաթղթերի վարման մեխանիզմը: Վերը նշված բացթողումների հետևանքով դժվարանում է հիվանդի հետագա բուժումը և բուժման կազմակերպումը: Բացի այդ, բժշկական քարտերում և հիվանդության պատմագրերում ազատագրվածի առողջության մասին գրանցումներ չկատարելը կարող է խոչընդոտել ծանր հիվանդությունների պատճառով պատիժը կրելու դադարեցման հիմնավորմանը:

ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ Լ 3995
2009թ.

0078 Երևան, Պապարյան 41/ա, հեռ. 344-677
էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԳԻՏՈՐԳՆԵՐԻ ԽՄԻՒ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ս.ք. հունիսի 9-ին և 24-ին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում կատարած ստուգման արդյունքներով հրատարակ հաշվետվությունը, շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ ԱՆ ՔԿ վարչությունում:

Ստորև ներկայացվում են ՔԿ վարչության մեկնաբանությունները հաշվետվության մեջ տեղ գտած թերությունների վերաբերյալ.

Հաշվետվությունում նշված է, որ կալանավոր Ա. Հովսեփյանը, գտնվելով «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի ստացիոնարում, չունի հիվանդության պատմագիր, իսկ ամբուլատոր քարտում բժշկի կողմից վերջին գրառումը կատարվել է 05.03.09թ-ին:

Կալանավոր Արթուր Բարկենի Հովսեփյանը տառապում է «Շաքարային դիաբետ 2-րդ տիպ միջին ծանրության: Գիարեոկ հեպատո-, կարդիո-, ռետինոննցեֆալոպաթիա, դիստալ պոլինեյրոպաթիա, ստորին վերջույթների անգիոպաթիա: Ջարկերակային հիպերտենզիա, ԱՇԱ 2-րդ աստիճանի» հիվանդությունով, կալանքը կրելու ընթացքում մշտապես գտնվել է ինչպես «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի բժիշկների, այնպես էլ քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի մասնագետների դիմամիկ հսկողության ներքո: «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում առկա է շուրջ 4 հիվանդության պատմագրեր (բացված 02.09.08թ., 12.01.09թ., 03.03.09թ և

05.03.09թ), որոնք վկայում են Ա.Հովսեփյանի նկատմամբ բժշկական անմիջական հսկողության մասին:

Նեղ մասնագիտական ստացիոնար բուժօգնություն ստանալու նպատակով Ա.Հովսեփյանը 20.02.09թ-ին տեղափոխվել է «Լրեբունի», իսկ 24.06.09թ-ին «Արմենիա» բժշկական կենտրոններ, որտեղ անցկացնելով համապատասխանաբար 10 և 21 մահճակալ/օր տեղափոխվել է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնար՝ բուժումը շարունակելու համար:

Կալանավոր Ա. Հովսեփյանը ենթարկվել է ինչպես հրավիրված բժիշկ-մասնագետի (Էնդոկրինոլոգ Ա. Խանամիրյանի), այնպես էլ բժշկական սպասարկման բաժնի պետ՝ Վ. Մանուչյանի, գլխավոր մասնագետ Ա. Բոսնոյանի խորհրդատվությունների և հետազոտությունների, ինչի մասին կալանավորի բժշկական քարտում կան բազմաթիվ գրառումներ: Հիվանդության պատմագիր չլինելու փաստի կապակցությամբ հայտնվում է, որ այն համընկել է հիվանդին «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից մեկ քաղաքացիական բժշկական հաստատությունից մյուսը տեղափոխելու պահի հետ, որի ընդացքում 1,5 ամիս գրառումները կատարվել են բժշկական քարտում:

Կալանավոր Ա. Հովսեփյանի համար ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշանակվել է փորձաքննություն, որը պետք է իրականացնի կալանավորված անձանց համար ստեղծված առողջապահության նախարարության միջգերատեսչական համեմատողովը:

Ներկայումս դատապարտյալ Ա. Հովսեփյանը գտնվում է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում, բացված է հիվանդության թվով 5-րդ պատմագիրը, նրա առողջական վիճակը գնահատվում է հարաբերական կայուն և նա շարունակում է գտնվել բժշկական դիմամիկ հսկողության ներքո:

Գիտորդների հաշվետվությունում նշված է, որ դատապարտյալ Հ. Բայրամյանի մոտ հայտնաբերվել է դեղորայք, որի մասին բժշկական քարտում չկար հիմնավոր գրառումներ:

Գատապարտյալ Հրանտ Խաչիկի Բայրամյանը «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում վերցված է դիապալետեր հսկողության «Նեյրոցիրկուլյատոր դիստոնիա» ախտորոշմամբ և գլխացավ ուներալու կապակցությամբ նրան 09.06.09թ. բուժակի կողմից տրվել է երկու հաբ պարացետամոլ, որը հիվանդը դեռ չէր հասցրել ընդունել: Գատապարտյալ Հ. Բայրամյանը նշված հիվանդությունով չի կարող ազատվել պատժի հետագա կրումից, բանի որ «Նեյրոցիրկուլյատոր դիստոնիա» հիվանդությունը ընդգրկված չէ ՀՀ կառավարության կողմից 26.05.2006թ.-ին թիվ 825-Ն որոշմամբ ընդունված պատժի կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում:

Դիտորդների խմբի հաշվետվությունում նշված է նաև, որ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում էր գտնվում դատապարտյալ Հ.Վարդանյանը, որի համար չեք վարվում հիվանդության պատմագիր:

Դատապարտյալ Հայկ Մուրեցի Վարդանյանը տառապառում է «ՕԾ-ցանցեմու հետքորբորային մակրոլոխտրոֆիա: ՕՏ-ցանցեմու հետքորբորային տոտալ շերտազատում, ապակենման մարմնի դեստրուկցիա, բարդացած ոչ հասուն կատարակտով» հիվանդությամբ:

09.06.09թ-ին «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոնում կատարված հետազոտության արդյունքում Հ. Վարդանյանին բժիշկ նեղ մասնագետների կողմից որևէ բուժում չի նշանակվել, նրան տրվել են միայն խորհուրդներ, ուստի Հ. Վարդանյանի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում գտնվելը պայմանավորված էր միայն դինամիկ հսկողությամբ: Դատապարտյալ Հ. Վարդանյանի վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության բժշկաաշխատանքային հանձնաժողովի կողմից նշանակված է կրկնակի հետազոտություն «Մ.Վ.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ-ում, ինչի մասին կա ս.թ. հուլիսի 16-ի վարչության կողմից տրված թույլտվությունը և որի արդյունքներից ելնելով կորոշվի հիվանդության պատճառով Հ. Վարդանյանի պատժի հետագա կրումից ազատելու հարցը:

Միաժամանակ հայտնվում է, որ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի բժշկական անձնակազմին հանձնարարվել է դիտորդների խմբի հաշվետվությունում արձանագրված թերությունները մեկշաբաթյա ժամկետում վերացնել:

Հարգանքով՝


Գ.Գանիկյան

Կատ. Ա.Սարկիսով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/3-2604
11.08.2009

Մուտք- 6323-

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Գանիկյանին

Հարգելի պարոն Գանիկյան,

Ձեր 23.07.2009թ. թիվ 09-024 գրությանը հայտնում ենք, որ դատապարտյալ Արման Բաբաչանյանը սույն թվականի օգոստոսի 4-ին Լցնտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ ազատվել է պայմանական վաղաժամկետ:

Պատի ժ/պ, արդարադատության գնդապետ



Ռ.Հովհաննիսյան

կատ. Ս.Մանուկյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/8-2638
12 08 2009թ.

Մուտք-7734

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյանին

Ձեր 03.08.2009թ. թիվ 09-032 գրությանը հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում Լիբանանի քաղաքացի՝ Արսեն Գալաջյանը և Սիրիայի քաղաքացի՝ Հովակիմ Բաբայանը չեն պահվում:

Պետի ժ/պ.արդարադատության գնդապետ՝

Ռ.Հովհաննիսյան

կատ.Ս.Մանուկյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/8-3001
24 09 2009թ.

ՀՀ ԱՆ ՔԿ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ
ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀՄՄՈՐՈՎԱԿԱՆ ԳԻՏՈՐԳԱԿԱՆ ԽՄԲԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրած Ձեր 15.09.2009թ. թիվ 09-036 գրության կապակցությամբ հայտնվում է, որ ս.ք. հունվարի 1-ից առ այսօր ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են 12 մահվան դեպքեր, որոնց վերաբերյալ ծառայողական քննություններ չեն կատարվել:

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Վ. ԶՈՉԱՐՅԱՆ

Կատ. Ա.Սարգիսով



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 165275
« 09 » 10 2009թ.

0078 Երևան, Չալաչյան 41/ա, հեռ. 244-677
էլ. փոստ info@raj.am

**ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդական խմբի նախագահ՝
Պարոն Ա. Դանիելյանին**

Ի պատասխան Ձեր 2009թ. սեպտեմբերի 7-ի
և 2009թ. հոկտեմբերի 6-ի համապատաս-
խանաբար 09-037 և 09-041 բլակիր նամակների

Հարգելի պարոն Դանիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի հրատապ հաշվետվության բնագրի մասը, ինչը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համեմատարարվել էր քրեակատարողական վարչությանը, պարզվել է, որ Ձեր պնդումն այն մասին, թե «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում խախտվել է կալանավորված Նիկոլ Փաշինյանի իրավունքները, հիմնավորված չէ:

Հայտնում ենք, որ կալանավորված անձ Նիկոլ Փաշինյանը «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում է գտնվում 2009 թվականի հուլիսի 1-ից: Քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո Ն. Փաշինյանը բողոքել է ատամի ցավից: Այդ կապակցությամբ 2009 թվականի հուլիսի 10-ին քրեակատարողական հիմնարկի կողմից հրավիրվել է ատամնաբույժ, սակայն կալանավորը հրաժարվել է օգտվել նրա ծառայություններից:

Ն. Փաշինյանի խնդրանքով նրա պաշտպանը հրավիրել է «Էր-Դենտ» ատամնաբուժական կենտրոնի ատամնաբույժ Ա. Մանուկյանին, որը խորհուրդ է տվել բուժումը կազմակերպել պոլիկլինիկայում: 2009 թվականի օգոստոսի 28-ին Ն. Փաշինյանը տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի ատամնաբուժական բաժանմունք և զննվել է Ա. Մանուկյանի կողմից, սակայն ատամների բուժման աշխատանքները կատարվողվածի նախընտրված բժշկի կողմից չի կատարվել, բաժանմունքում ղեկնույթ ռեժիմը համալիրի քաղաքացիության պատճառով: «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կողմից առաջարկվել է ռեժիմը հետազոտությունը անցկացնել մոտակա քաղաքացիական կլինիկայում, ինչից հրավիրված բժիշկը հրաժարվել է:

Կալանավորված անձ Ն. Փաշինյանին համակարգիչ տրամադրելու վերաբերյալ պաշտպան Տ. Մուրադյանի դիմումը մերժելու կապակցությամբ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման պահանջների դիմադրանք՝ կալանավորված անձին արգելվում է իր մոտ ունենալ կամ խցում

պահել ցանկացած տեսակի հեռահաղորդակցության, կապի միջոց, ֆոտոխցիկ, տեսախցիկ, վիդեո-ատոլո ձայնագրող սարքեր և նկարահանող այլ տեխնիկա:

Ինչ վերաբերվում է Ձեր այն պնդմանը, ըստ որի «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում սահմանափակվել է կալանավորված Ն. Փաշինյանի մասուլից օգտվելու իրավունքը, ապա այն ևս հիմնավորված չէ, մասնավորապես՝ հարկ է նկատել, որ 2009 թվականի օգոստոսի 13-ին փաստաբան Տ. Մուրադյանից ստացվել է դիմում, որով վերջինս խնդրել է Նիկոլ Փաշինյանի համար ձևակերպել բաժանորդագրություն «Հայկական ժամանակ», «Հրապարակ» և «Առավոտ» օրաթերթերից օգտվելու համար: Բաժանորդագրությունը սահմանված կարգով կատարվել է և կալանավոր Ն. Փաշինյանը 2009 թվականի օգոստոսի 13-ից դարձել է նշված օրաթերթերի բաժանորդ:

Ձեր կողմից ներկայացված հաջորդ հարցադրման կապակցությամբ, ըստ որի վարչակազմը չի ընդունել Նիկոլ Փաշինյանի փաստաբանների կողմից գրված դիմումները, որով նրանք ցանկացել են օրաթերթերը հիմնարկի վարչակազմի միջոցով հանձնել կալանավորին, հայտնում ենք, որ այդ դիմումները սահմանված կարգով ընդունվել են, և առկա են կալանավորված անձի անձնական գործում:

Հարկ է նկատել, որ 2009 թվականի օգոստոսի 20-ին Ն. Փաշինյանի եղբայր Արտակ Փաշինյանը դիմում է ներկայացրել «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետին, որով խնդրել է կալանավորին փոխանցել «Հայկական ժամանակ», «Հրապարակ», «Ժամանակ» և «168 ժամ» օրաթերթերը, սակայն Ն. Փաշինյանը հրաժարվել է դրանք ստանալ: Նշված օրաթերթերը 2009 թվականի օգոստոսի 21-ին վերադարձվել են կալանավորի պաշտպան Տ. Մուրադյանին: Պաշտպան Տ. Մուրադյանը ևս 2009 թվականի օգոստոսի 20-ին դիմում է ներկայացրել «Հայկական ժամանակ», «Հրապարակ» և «Առավոտ» օրաթերթերը կալանավորին հանձնելու խնդրանքով, սակայն Ն. Փաշինյանը կրկին հրաժարվել է ստանալ վերհիշյալ օրաթերթերը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը տեղակայված է ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում, չունի առանձին անցագրային կետ և այնտեղ մուտք գործելու համար անհրաժեշտ է անցնել ազգային անվտանգության ծառայության անցագրային կետով: Բացի այդ քրեակատարողական հիմնարկն ունի ընդամենը երկու տեսակցության սենյակ և լինում են դեպքեր, որ նշված սենյակների զբաղվածության պատճառով տեսակցության ելած անձինք ստիպված են լինում սպասել: Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների ծրագրով նախատեսվում է նոր և միջազգային չափանիշներին համապատասխան քրեակատարողական հիմնարկի կառուցում, որից հետո «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի գործունեությունը դադարեցվելու է:

«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ Արայիկ Ոսկանյանը նշված քրեակատարողական հիմնարկում է գտնվում 2009 թվականի մայիսի 30-ից և մինչև 2009 թվականի սեպտեմբերի 3-ը բժշկական օգնություն ստանալու խնդրանքով նա վարչակազմին չի դիմել: 2009 թվականի սեպտեմբերի 3-ին կալանավորը դիմել է բժիշկին՝ գանգատվելով սրտոքի հատվածում ցավերից: Ա. Ոսկանյանին խորհուրդ է տրվել փաստաբանի միջոցով ստանալ էպիկրիզի պատճենը, որից հետո կկազմակերպվի վիրաբույժ բժիշկ մասնագետի հետ կոնսուլտացիա: Կալանավորված անձ Ա. Ոսկանյանը համաձայնվել է:

Ռոբերտ Նազարյան անուն ազգանունով կալանավորված անձ կամ դատապարտյալ 2009 թվականի հունվարի 1-ից առ այսօր «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի հաշվառումներով չի անցել:

Հարգանքով՝

Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ



N 09-042
15.10.2009թ.

ՀՀ Արդարադատություն նախարար
պարոն Գ. Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2009թ. հոկտեմբեր 9-ին Հասարակական դիտորդների խումբը դիմում է ստացել «Երևան կենտրոն» ՔԿՀ-ում պահվող Լիկոլ Փաշինյանի պաշտպաններ Լուսինե Սահակյանից և Երվանդ Վարդանյանից, որտեղ նշված է ՔԿՀ-ի ղեկավարի կողմից իր պաշտպանյալի իրավունքների խախտման դեպքերի մասին: Մասնավորապես հանձնարարի միջոցով Փաշինյանին համակարգիչ ստանալը արգելվում է, ինչպես նաև փաստաբանների հետ առանձնատեսակցություններից առաջ և հետո Փաշինյանի խուզարկության ընթացքում հիմնարկի աշխատակազմի կողմից փորձ է արվում ծանոթանալ նրա մոտ գտնվող գրավոր նյութերի թվանշանային (դիմումը կից ներկայացվում է): Իսկ 09.10.09 փաստաբան Ե. Վարդանյանի նկատմամբ Փաշինյանի տեսակցության ընթացքում սենյակ է մտել հիմնարկի պետը և փորձել է ծանոթանալ սենյակին դրված գրավոր նյութերին:

Հասարակական դիտորդների խմբի 10.10.09թ այցելության ընթացքում նշված փաստերը հաստատվեցին ինչպես Փաշինյանի, այնպես էլ հիմնարկի պետի կողմից:

Հիմնարկի ղեկավարությունը իր գործողությունները բացատրում էր Լուսինե և Երվանդի նկատմամբ:

1. ՉԼրբակաված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 13 կետով, ըստ որի ազատազրկվածին չի թույլատրվում իր մոտ ունենալ պետական գաղտնիք պարունակող փաստաթղթեր:
2. Կասկածով, որ Փաշինյանը փաստաբանների միջոցով վարում է անձնական նամակագրություն:

Հասարակական դիտորդների խումբը գտնում է, որ հիմնարկի աշխատակիցների փորձերը ծանոթանալ ազատազրկվածների մոտ եղած փաստաթղթերի թվանշանային չև ըստ օրենսդրության պահանջներից հետևյալ պատճառներով.

1. Չնայած տվյալ դեպքում պարզ չէ, թե ինչ պետական գաղտնիք կարող է պարունակվել քրեական գործի նյութերում, այդուամենայնիվ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները նույնպես իրավունք չունեն ծանոթանալ այդ գաղտնիքին, և էթե կա այդպիսի կասկած պետք է հրավիրել համապատասխան լիազորություններ ունեցող ծառայությունների աշխատակիցներին:
2. Տվյալ դեպքում անձնական նամակագրության գաղտնիությունը պաշտպանված է ՉԼրբակաված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքով, որի 17-րդ

հոդվածի համաձայն՝ նամակագրություն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության թուղթանոցային ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով: Նամակագրության գրաքննություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: Տվյալ պարագայում չկա գրաքննության մասին դատարանի որոշում: Այդուամենայնիվ, էթե նույնիսկ այդպիսի որոշում լիներ, մինևուն է, գրաքննությունը պետք է կատարվեր նախաքննությունը վարող մարմնի կողմից:

Հասարակական դիտորդների խումբը նաև գտնում է, որ հիմնարկի պետը, փորձելով ծանոթանալ 09.10.09 փաստաբան Ե. Վարդանյանի նկատմամբ Փաշինյանի տեսակցության ընթացքում սենյակին դրված գրավոր նյութերին, խախտել է ՀՀ օրենսդրության մի շարք կետեր, որոնք առնչվում են կալանավորված անձի իրավունքներին և փաստաբանական գործունեության երաշխիքներին հետևյալ պատճառաբանությամբ.

1. Փաշինյանի փաստաբանների միջոցով անձնական նամակագրության վարույթ չի կարող սահմանափակվել միայն այն պնդմամբ, որ դա պետք է կատարվի կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով: Քանի որ ՉԼրբակաված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կալանավորված անձն իրավունք ունի՝ իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես նաև առաջարկներով կարող է օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, գանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին:
2. Կենտրոն քրեակատարողական հիմնարկի պետը փորձելով ծանոթանալ 09.10.09 Փաստաբան Ե. Վարդանյանի և Փաշինյանի տեսակցության ընթացքում սենյակին դրված գրավոր նյութերին խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետը, որի համաձայն մեղադրյալն իրավունք ունի առանձին, խորհրդակցական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տեղության սահմանափակման: Նույն իրավունքը երաշխավորված է նաև պաշտպանին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն:
3. Ավելին, ՉԼրբակաված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 141-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է պաշտպանին և օրինական ներկայացուցչին անարգել թույլատրել ներկայանալ կալանավորված անձին, ապահովել նրանց առանձին, խորհրդակցական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու հնարավորությունը՝ առանց դրանց թվի և տեղության սահմանափակման: Տվյալ պարագայում ակնհայտ է, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը չի ապահովել կալանավորված

անձի և նրա պաշտպանի առանձին խորհրդապահական կարգով տեսակցելու հնարավորությունը:

4. Հարկ ենք համարում նաև նշել, որ քրեակատարողական հիմնարկի պետի նման միջամտության արդյունքում խախտվել է նաև Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը, որի համաձայն արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կուսակցությունների և հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների միջամտությունը փաստաբանական գործունեությանը: Փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ:
5. Ավելին, քրեակատարողական հիմնարկի պետի փորձերը ծանոթանալու փաստաբանի և նրա պաշտպանյալի հանդիպման ժամանակ սեղանին դրված նյութերին վտանգում է փաստաբանական գաղտնիքի հիմնարար սկզբունքը: Փաստաբանության մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկություններ, որը վստահորդը փոխանցել է փաստաբանին, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները, որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն և որոնք հայտնի չեն հանրությանը:

Ելնելով վերոգրյալից խնդրում ենք համապատասխան միջոցներ ձեռնարկել նշված խախտումները կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու և հետագայում դրանք բացառելու ուղղությամբ:

ՀՀ ԱՆ ՔԿԶ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

Ա.Դանիելյան

ՀՀ Երևան 0025, Այգեասան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am



ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ Յ-5804
«04» 11 2009թ.

0078 Երևան, Դալարյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

*Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության քրեակատարողական հիմնարկներում
և մարմիններում հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Դանիելյանին*

*Ի պատասխան Ձեր 2009թվականի հոկտեմբերի 15-ի
09-042թվակիր գրության*

Ձեր կողմից ներկայացված հրատապ հաշվետվության կապակցությամբ կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ սույն թվականի հոկտեմբերի 9-ին ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձ Նիկոլ Վովայի Փաշինյանի պաշտպան Երվանդ Վարսյանը Ն.Փաշինյանի հետ հերթական տեսակցության ժամանակ վերջինիս է փոխանցել նամակներ, ինչը նկատել է այդ պահին ծառայողական պարտականությունները կատարող հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի աշխատակիցը և անմիջապես զեկուցել հիմնարկի պետին:

Նշվածը փաստաբանը հերքել է և պարզաբանել, որ Ն.Փաշինյանին է փոխանցել քրեական գործին վերաբերող փաստաթղթեր, սակայն Ն.Փաշինյանը հայտնել է, որ փոխանցվածը նամակ է մորաքրոջից: Ուստի պարզելով, որ փոխանցվածը քրեական գործին չի վերաբերում, այլ ընդամենը նամակ է, ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկի պետ Ն.Ջաբրյանը փաստաբան Ե.Վարսյանին հիշեցրել է, որ

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 4-րդ մասի համաձայն նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով և փաստաբանը փոստատար չէ, որից հետո Ե.Վարոսյանը և Ն.Փաշինյանը պատռել են իրենց մոտ եղած նամակները և նետել աղբարկղ:

Տվյալ դեպքում և առհասարակ Ն.Փաշինյանի ու նրա պաշտպանների տեսակցություններն անցկացվում են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, ըստ որի ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը պաշտպանի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:

Հրատապ հաշվետվությամբ ներկայացվում է, որ նամակագրությունը կարող է կատարվել նաև պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով՝ հղում կատարելով «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի 3-րդ կետին, որի համաձայն ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ հիշյալ հոդվածը վերաբերվում է կալանավորված անձի՝ իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով դիմելու իրավունքին, այլ ոչ թե նամակագրությանը:

Հարկ է նշել նաև, որ սույն թվականի սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում 35 աշխատանքային օրերից պաշտպանները Ն.Փաշինյանին այցելել են 32 օր, առանձին օրեր՝ 2 և ավելի անգամ, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից չի խոչընդոտվել տեսակցությունների տրամադրումը:

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկի պետ Ն. Ջաքարյանի կողմից հերքվել է նաև հասարակական դիտորդների խմբի 2009թվականի հոկտեմբերի 10-ի այցելության ժամանակ գրությունում նշված խախտումների փաստն իր կողմից ընդունելու վերաբերյալ պնդումը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի կողմից 2009թվականի հոկտեմբերի 15-ի հրատապ հաշվետվությամբ ներկայացված հանգամանքները չեն հիմնավորվել:



Գ. Դանիելյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/1-Վ-Վ-Մ-170
ՕԲ 12 2009 թ.

**ԱԶԱՏ ԵԿՐՈՊԱ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՈԱԴԻՈԿԱՅԱՆԻ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՂԵԿԱՎԱՐ
ՍՂԱՍԻ ԵՆՈՔՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում գտնվող Սասուն Միքայելյանի հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Հաշվի առնելով քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածության ներկայիս վիճակը՝ կապված մի շարք անհետաձգելի ծառայողական գործառնությունների հետ, ինչպես նաև ելնելով դատապարտյալի բուժման գործընթացով պայմանավորված հանգամանքներից՝ հայտնում ենք, որ ներկայումս հնարավոր չէ կազմակերպել լրագրող Անուշ Մարտիրոսյանի հանդիպումը դատապարտյալի հետ:

Հարգանքով՝

ՀԱՍՏՈՒԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՆՔԻ ՊԵՏ  ԱՐՄԵՆ ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/1-Վ-Վ-3788
ՍԿ 12 2009 թ.

**«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍՏՈՒԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ Ա.ԴԱՆԻԵՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Դանիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գտնվող Սաշա Դավթյանի հետ տեսակցելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Հաշվի առնելով քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածության ներկայիս վիճակը՝ կապված մի շարք անհետաձգելի ծառայողական գործառնությունների հետ՝ հայտնում ենք, որ ներկայումս հնարավոր չէ կազմակերպել տեսակցություն կալանավորված անձ Ս. Դավթյանի հետ:

Հարգանքով՝

ՀԱՍՏՈՒԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՆՔԻ ՊԵՏ  ԱՐՄԵՆ ԲԱԲԱՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Աջափնյա 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

№ 10/1-4-114
« 21 » 01 2009 թ.

ՀՀ ԱՆ ՔԿ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՍՔԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Պատճենը՝ ՀՀ ԱՆ «ՆՈՒՐԱՐԱՇԵՆ» ՔԿ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԵՏ
արդ. գնդապետ Տ. ՆԱԿԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,


Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել են Ձեր թիվ 2009-64 առ 10.12.2009թ. և թիվ 09-055 առ 29.12.2009թ. գրությունները, որոնց վերաբերյալ տեղեկացնում ենք, որ ծառայության ներկայիս զբաղվածության պայմաններում հնարավոր է կազմակերպել «Մարդու իրավունքները Հայաստանում» ինտերնետային թերթի լրագրող ժաննա Ալեքսանյանի տեսակցությունը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավոր Սաշա Դավթյանի հետ՝ վերջինիս հետ հարցազրույց անցկացնելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հանդիպումը տեղի կունենա ս.թ. հունվարի 29-ին, ժամը 15⁰⁰-ին:

Լսնդրում ենք ներկայանալ անձնագրով:

Հարգանքով՝

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ՎԱՊԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔԻ ՊԵՏ

 ԱՐՄԵՆ ԲԱԲԱՅԱՆ

Կատարող՝ Լիանա Անդրեասյան
հեռ.՝ 443698



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ 6250
« 25 » 01 2009 թ.

0078 Երևան, Զաքարյան 41/ա, հեռ. 344-677
Էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական խմբի նախագահ՝

Պարոն Ա. Դանիելյանին

Ի պատասխան Ձեր 2009թ. դեկտեմբերի 21-ի
09-052 քվակիր նամակի

Հարգելի պարոն Դանիելյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական խմբի հրատապ հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պատասխան գրությունը:

Առդիր՝ « 3 » քերթ:

Հարգանքով՝


Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/12 - 60
« 15 » 01 2009 թ.

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Գ.Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի N 09-052 հրատապ հաշվետվությունում շարադրված փաստերի ուսումնասիրության արդյունքներով պարզվեց.

2009թ-ի դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամներ Միքայել Բաղդասարյանի և Գայանե Շահնազարյանի կողմից ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկի դատապարտյալ Անդրանիկ Ժորայի Պողոսյանի ահազանգի հիման վրա այցելություն է կատարվել «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկ:

Անդրանիկ Ժորայի Պողոսյանը, ծնված 12.02.1975թ. Երևան քաղաքում, հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին ոչ ոք, չի աշխատել, նախկինում չդատապարտված, բնակվել է ք. Երևան, Ավան-Առինջ 12շ, բն 32 հասցեում: Արգելաբքի տակ է 2006թ-ի մայիսի 1-ից, Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 11.08.2006թ-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քր. օր-ի 112h 2մ 14կ-ով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում 8 տարի ժամանակով: ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 11.09.2006թ-ի դատավճռով առաջին ատյանի դատարանի դատավճիռը

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության Նախ-Ս
ՄՈՒՏԵ ՆՈՒՄ 685/09/
« 15 » 01 2009 թ.

բողմվել է անփոփոխ, իսկ ամբաստանյալի վերաքննիչ բողոքը առանց բավարարման: 05.05.2006թ-ից դատապարտյալ Ա. Պողոսյանը պատիժը կրել է ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում: 09.03.2009թ-ին իր դիմումի համաձայն իր կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու պատճառով դատապարտյալը տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկ: Պատժի կրման ընթացքում դատապարտյալ Ա. Պողոսյանը ներքին կանոնակարգը խախտելու համար երեք անգամ ենթարկվել է կարգապահական տույժի:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 21.12.2009թ-ի թիվ N 09-052 հրատապ հաշվետվությունում նշված է, որ այցելության ընթացքում խմբի անդամները հանդիպել են քրեակատարողական հիմնարկի պետին և հացադուլի մեջ գտնվող դատապարտյալ Անդրանիկ Պողոսյանին: Վերջինս գտնվել է հացադուլի մեջ այն բանի համար, որ գրավոր դիմել է ՔԿ հիմնարկի պետին օրենքով սահմանված կարգով իրեն կարճաժամկետ մեկնում տրամադրելու խնդրանքով, սակայն դիմումը մերժվել է առանց պատճառաբանության: Դատապարտյալը իր կարճաժամկետ մեկնման անհրաժեշտությունը հիմնավորել է նրանով, որ հայրը պետք է վիրահատվի և ցանկանում է հորը տեսակցել և ներկա գտնվել վիրահատության ժամանակ: Դիտորդական խումբը գտնում է, որ դատապարտյալ Ա. Պողոսյանի կարճաժամկետ մեկնում գնալու իրավունքը անիրավաչափ սահմանափակվել է և ՔԿ հիմնարկի պետը չի պատճառաբանել իր որոշումը:

Հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 190-րդ կետի համաձայն կարճաժամկետ մեկնում տրամադրելու համար համապատասխան որոշումն ընդունվում է դատապարտյալի գրավոր դիմումի և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերը փաստող անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

ՔԿ հիմնարկի պետի կողմից մերժում ստանալուց հետո դատապարտյալ Ա. Պողոսյանը մույնաբովանդակ խնդրով 14.12.09թ-ին դիմել էր ՀՀ վարչապետին: Նշված դիմումը 18.12.2009թ-ին ստացվել է ուսումնասիրվել է քրեակատարողական վարչությունում և պատասխան գրությամբ դատապարտյալին հայտնվել է, որ դրական վարքագիծ դրսևորելու, ինչպես նաև օրենքով նախատեսված համապատասխան բժշկական փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կարող է կրկին դիմել ՔԿ հիմնարկի պետին:

Ինչ վերաբերում է դատապարտյալ Պողոսյանին կարճաժամկետ մեկնում չտրամադրելու որոշմանը, ապա ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկի պետը իր 09.12.2009թ-ի պատճառաբանված որոշմամբ մերժել է դատապարտյալի դիմումը, քանի որ

դատապարտյալը հավաստի փաստաթղթեր չի ներկայացրել ծնողի առողջության վատթարացման և վիրահատական միջամտության անհրաժեշտության վերաբերյալ: Բացի այդ, ՔԿ հիմնարկի պետը նկատի է ունեցել, որ դատապարտյալը իր կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու պատճառով ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկից տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկ, ինչպես նաև պատժի կրման ընթացքում չի դրսևորել դրական վարքագիծ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկի պետը գործել է իր իրավասությունների շրջանակներում:

Հարգանքով՝

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ



Ա.ԳԻԶԻՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԿԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Աղջակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ցուցու (374 10) 44-29-04

№ 40/1-4-433
24.02.2019

«Ազատություն» ծաղիկայանի
Երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալ Ռոման Մնացականյանին տեսակցելու և վերջինիս հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ Ձեր գրությունները:

Տեղեկացնում ենք, որ դատապարտյալ Ռոման Մնացականյանը հրաժարվել է տեսակցել և հարցազրույց տալ Ձեր ծաղիկայանի լրագրող Անուշ Մարտիրոսյանի հետ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ



Արսեն Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/1-Ա-Վ-Ս-3
«24» 02 2019/Բ

«Ազատություն» ռադիոկայանի
Երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալ Մուշեղ Սաղաթելյանին տեսակցելու և վերջինիս հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Հաշվի առնելով քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածության ներկայիս վիճակը՝ կապված մի շարք անհետաձգելի ծառայողական գործառնությունների հետ՝ հայտնում ենք, որ ներկայումս հնարավոր չէ թույլատրել լրագրողի մուտքը «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ

Արսեն Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/1-Ա-Վ-33
«24» 02 2019/Բ

«Ազատություն» ռադիոկայանի
Երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալ Ռոման Մնացականյանին տեսակցելու և վերջինիս հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ Ձեր գրությունները:

Տեղեկացնում ենք, որ դատապարտյալ Ռոման Մնացականյանը հրաժարվել է տեսակցել և հարցազրույց տալ Ձեր ռադիոկայանի լրագրող Անուշ Մարտիրոսյանի հետ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ

Արսեն Բաբայան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 40/7 - 455
«25» 02 2009 թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Պարոն Ա.Գանիելյանին

Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված 03.02.2010թվականի Չեր 10-05 բվակիր գրության

Հարգելի պարոն Գանիելյան

Կից ուղարկվում է 2007, 2008 և 2009թվականներին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով վարչական ու անկախ հանձնաժողովների և դատարանների որոշումների մասին տվյալներ պարունակող ցուցակը:

Միաժամանակ հայտնվում է, որ քրեակատարողական վարչությունում հաշվառում չի տարվում, թե պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացում քրեական օրենսգրքի որ հոդվածներով դատապարտվածներն են առավել հաճախ ազատվում պայմանական վաղաժամկետ կամ որ հոդվածներով դատապարտվածներն են առավել հաճախ մերժվում:

Առդիր 1 թերթ:

Հարգանքով՝

Արդարադատության գեներալ-մայոր

Ա.Գիլիլյան

Ց ՈՒ Ց Ա Կ

2007, 2008, 2009 թվականներին ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից դատապարտյալներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով վարչական և անկախ հանձնաժողովի նիստերի, ինչպես նաև դատարանի որոշումն ազատվածների վերաբերյալ

ՀԻՄՆԱՀՐԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովի նիստերին ներկայացվել է			Անկախ հանձնաժողովին պայմանական վաղաժամկետ ազատման է ներկայացվել			Անկախ հանձնաժողովի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատմանը հավանություն է տրվել			Դատարանի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատվել է		
	2007	2008	2009	2007	2008	2009	2007	2008	2009	2007	2008	2009
«Նուբարաշեն» ՔԿՏ	233	320	257	178	212	138	55	50	48	53	43	40
«Լրևբունի» ՔԿՏ	432	679	737	286	302	274	68	70	74	63	59	61
«Վարդաշեն» ՔԿՏ	83	175	138	72	133	103	20	35	28	19	32	19
«Վանաձոր» ՔԿՏ	58	129	123	54	86	67	25	46	32	24	43	32
«Աթոլյան» ՔԿՏ	139	167	213	134	143	187	20	26	58	19	23	49
«Արթիկ» ՔԿՏ	146	269	289	116	149	140	41	69	51	39	65	47
«Լոռ» ՔԿՏ	462	605	746	359	265	309	126	117	132	125	117	131
«Սևան» ՔԿՏ	460	574	617	293	228	241	77	96	103	77	83	90
«Գորիս» ՔԿՏ	65	103	79	59	77	43	21	27	10	21	24	10
«Մեղրի» ՔԿՏ	43	71	45	52	64	23	15	17	6	15	17	4
«Դատ. հիվ.» ՔԿՏ	117	197	173	110	139	86	32	34	24	29	28	15
«Հրազդան» ՔԿՏ	-	-	39	-	-	16	-	-	3	-	-	3
«Երևան-Կենտրոն» ՔԿՏ	1	-	2	1	-	2	1	-	-	1	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	2239	3289	3458	1714	1798	1629	501	587	569	485	534	501

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կալանավորվածների և դատապարտյալների հաշվառման բաժին

16.02.2010թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԿԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

ՄՆ 40/1-41-ժ-Ն-4
25.02 2010 թ.

«Ազատություն» ռադիոկայանի
երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում գտնվող Աշոտ Մանուկյանին տեսակցելու և վերջինիս հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Տեղեկացնում ենք, որ դատապարտյալ Ա. Մանուկյանը սպառել է օրենքով նախատեսված տեսակցությունների նվազագույն քանակը:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ

Ա. Բաբայան

Արսեն Բաբայան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԿԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ *Կ 963*
26.02 2010 թ.

0078 Երևան, Ֆախրյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

**«Հ Ա Ն քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ»
Պարոն Ա. Դանիելյանին**

*Ի պատասխան Ձեր 2010թ. փետրվարի 3-ի
10-04 թվակիր նամակի*

Հարգելի պարոն Դանիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հրատապ հաշվետվության քննարկմամբ, ինչը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից համաձայնագրվել էր քրեակատարողական վարչությանը, հայտնում ենք, որ սույն թվականի փետրվարի 2-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում բուժվող դատապարտյալներ Հայկ Վարդանյանի և Մյասնիկ Հակոբյանի զննության և ներկայացված բժշկական փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից, ախտորոշումը ճշտելու նպատակով, որոշվել է կազմակերպել լրացուցիչ հետազոտություն:

2010 թվականի փետրվարի 16-ին դատապարտյալ Հ.Վարդանյանը լրացուցիչ հետազոտվել է «Գապեկա» ակնաբուժական կլինիկայում, որի կապակցությամբ հայտնում ենք, որ Հ.Վարդանյանի հիվանդության ախտորոշումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժամիտարանական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այլ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման հավելված 2-ով հաստատված պատիժը կրելու խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

Ինչ վերաբերվում է Մ.Հակոբյանին, ապա նա 2010 թվականի փետրվարի 3-ին կտրականապես հրաժարվել է միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից նշանակված հետազոտումից, որի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն, սակայն 2010 թվականի փետրվարի 23-ին դատապարտյալը տվել է իր

գրավոր համաձայնությունը առաջարկված հետազոտության համար և համապատասխան հետազոտություն անցկացնելուց հետո միայն հանձնաժողովը կկայացնի որոշում:

Իմ կողմից երկու ամիսաց վերաբերյալ էլ գործընթացները վերցված են հսկողության տակ, մասնավորապես, իմ օգնականը հանդիպել է դատապարտյալ Մ.Հակոբյանի հետ, որը հայտարարել է, որ վերջինս գործնականում ոչ թե հրաժարվում է բժշկական զննություն անցնելուց, այլ ի վիճակի չի լինում, քանի որ նախապես իրեն չեն հայտնում ակնկալվող բժշկական հետազոտության մասին:

Հարգանքով՝


Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

№ 40/246-624
« 15 » 03 2019

«Ազատություն» ռադիոկայանի
երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի հետ հարցազրույց անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ այցելելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Հաշվի առնելով քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածության ներկայիս վիճակը՝ կապված մի շարք անհետաձգելի ծառայողական գործառնությունների հետ՝ հայտնում ենք, որ ներկայումս հնարավոր չէ թույլատրել լրագրողի մուտքը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ


Արսեն Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Աջակոմյայ 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

№ 40/1-Ա-62 7
« 15 » 03 2016 թ.

«Ազատություն» ռադիոկայանի
երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է դատապարտյալ Գաբրիել Գաբրիելյանի հետ հարցազրույց անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ այցելելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Հաշվի առնելով քրեակատարողական ծառայության ծանրաբեռնվածության ներկայիս վիճակը՝ կապված մի շարք անհետաձգելի ծառայողական գործառնությունների հետ՝ հայտնում ենք, որ ներկայումս հնարավոր չէ թույլատրել լրագրողի մուտքը «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ

Ա. Գաբրիելյան

Արսեն Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Աջակոմյայ 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

№ 40/1-Ա-62-2017
« 23 » 03 2016 թ.

«Ազատություն» ռադիոկայանի
երևանյան բյուրոյի ղեկավար
պարոն Ա. Ենոքյանին

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է դատապարտյալ Ռոման Մնացականյանի հետ հարցազրույց անցկացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ այցելելու վերաբերյալ Ձեր գրությունը:

Տեղեկացնում ենք, որ դատապարտյալ Ռոման Մնացականյանը հրաժարվել է տեսակցել և հարցազրույց տալ Ձեր ռադիոկայանի լրագրող Անուշ Մարտիրոսյանի հետ:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ

Ա. Գաբրիելյան

Արսեն Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

Պ 40/1-Ա-Ճ-Չ 15, 16
30.03 2014

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՈԱԴԻՈՎԱՅԱՆԻ
ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԴԵԿԱՎԱՐ
պարոն Ա. ԵՆՈՔՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ենոքյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալներ Շմավոն Գալստյանին և Ժորա Սափեյանին տեսակցելու և վերջիններիս հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ Ձեր գրությունները:

Տեղեկացնում ենք, որ դատապարտյալներ Շ. Գալստյանը և Ժ. Սափեյանը հրաժարվել են տեսակցել և հարցազրույց տալ Ձեր ռադիոկայանի լրագրողին:

Հարգանքով՝

ՀԱՍՏՈՂԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՆԵՐԻ ՊԵՏ

ԱՐՍԵՆ ԲԱՎԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N Պ 40/1-Ա-Չ-901
09.04 2014

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ»
ՀԿ նախագահ Ա. Դանիելյանին
Պատճենը՝ ՀՀ ԱՄ «Նուբարաշեն» ԲԿ հիմնարկի պետ,
արդ. գնդապետ, Տ. Նավասարդյանին

Հարգելի պարոն Դանիելյան,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում ստացվել և քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր գրությունը՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող ցմահ դատապարտյալներին այցելելու նպատակով ս.թ. ապրիլի 9-ին ժամը 15⁰⁰-ին FIDH ներկայացուցիչ Ջորան Պուսիչի (Zoran Pusic) մուտքը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ թույլատրելու վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ Քրեակատարողական վարչությունը չի առարկում:

Խնդրում ենք ներկայանալ անձնագրով:

Հարգանքով՝

Հասարակայնության հետ
կապերի բաժանմունքի պետ

Արսեն Բավայան



**ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՐԱԴԴԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ 4 1986
07 05 2010թ.

0078 Երևան, Գալստյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

**ՀՀ ԱՆ ՔԿ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՍԿՈՒՄԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ԳԱՆԻԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գանիեյան

Ձեր 22.04.2010թ թիվ 10-12 հրատապ հաշվետվության կապակցությամբ հայտնվում է, որ ՀՀ ԱՆ «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Արա Ռազմիկի Մարությանը «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ է տեղափոխվել 14.11.2008թ-ին: Նշված ժամանակահատվածում հիվանդը երեք անգամ հետազոտվել և համապատասխան բուժումներ է ստացել «Էրեբունի» և մեկ անգամ «Արմենիա» բժշկական կենտրոններում:

Համաձայն 02.04.2010թ-ի «Էրեբունի» բժշկական կենտրոնի կողմից ներկայացված վերջին էպիկրիզի՝ Ա.Մարությանի մոտ առկա է «Շարքային դիաբետ տիպ 2, ինսուլինապահանջ ձև, ծանր աստիճանի դիաբետիկ հեպատոպաթիա, էնցեֆալոպաթիա, դիստալ պոլինեյրոպաթիա, ստորին վերջույթների անգիոպաթիա, դիաբետիկ անգիոռետինոպաթիա, պրեպրոլիֆերատիվ ֆազա, ողնաշարի օստեոխոնդրոզ L4-S2 հատվածի, անոթա-արմատիկային համախտանիշ աջից, ենթատոր ընթացք, սրացման փուլ, արտահայտված ցավային համախտանիշով, ձգված ընթացք: Չարկերակային հիպերտենզիա ԱՇԱ-0-1, խրոնիկական բրոնխիա: Թիթեռանման փսորիազ, միջին ծանրության, պրոգրեսիվ ստադիայում: Կատառալ լարինգիտ: Քրի միջնապատի ծռում»:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերը նշված բուժաստատություններից ստացված էպիկրիզներում առկա են հակասություններ, հիվանդի վերջնական ախտորոշումը ճշտելու և հակասությունները շտկելու նպատակով առաջիկայում նախատեսվում է Ա.Մարությանի բժշկական փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ԱՆ բժշկաաշխատանքային հանձնաժողովի (ԲԱՀ-ի) քննարկմանը:

Հարգանքով՝

Գ. Գանիեյան



**ՆԱՅԱՍՄԱՆԻ ՆԱՐԱԴԴԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ 4 2437
44 08 2010թ.

0078 Երևան, Գալստյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

**ԳՅ ԱՆ ՔԿԳ-ՆԵՐՈՒՄ և մարմիններում հասարակական
վերահսկողություն իրականացնող հասարակական
դիտորդների խմբի նախագահ
Պարոն Ա. Գանիեյանին**

*Ի պատասխան Ձեր 2010 թվականի
հուլիսի 26-ի 10-13 թվակիր գրության*

Չայտնում եմ Ձեզ, որ քրեակատարողական ծառայության խնդիրն է քրեակատարողական հիմնարկում գտնվող անձանց անվտանգության ապահովումը:

ԳՅ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող ցմահ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ սահմանված է պատշաճ հսկողություն և ապահովված է անվտանգությունը, ինչպես համապատասխան խցերում, այնպես էլ հիմնարկի ամբողջ տարածքում:

Ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալներ Սողոմոն Քոչարյանի, Առաքել Գաբրիելյանի և Սմբատ Խաչատրյանի միջև ծագած վիճարկության և ծեծկռուքի արդյունքում վերջիններիս անվտանգությունը ապահովելու նպատակով ցմահ ազատազրկման դատապարտված Ա. Գաբրիելյանը տեղափոխվել է այլ խուց: 2010թ-ի հունիսի երկուսին կատարված միջադեպի փաստով նախապատրաստվել են նյութեր, որոնք ենթակայության կարգով ուղարկվել են ԳՅ ոստիկանության ՔԿՎ Երևան քաղաքի էրեբունու քննչական բաժին մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար, որի մասին գրավոր տեղեկացվել է ցմահ դատապարտված Ա. Քոչարյանին:

Հարգանքով՝

Գ. Գանիեյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ 62438
18 08 2010թ.

0078 երևան, Չապարյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ ՔԿԴ-Ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ
Պարոն Ա. Գանիեյանին

Ի պատասխան Ձեր 2010 թվականի հուլիսի 26-ի 10-14 թվակիր գրության

Հայտնում եմ Ձեզ, որ հրատապ հաշվետվության մեջ նշված փաստերը ուսումնասիրվել և բննարկվել են քրեակատարողական վարչությունում: Փաստերի հանգամանքները պարզելու նպատակով կատարվել են ընդունելություններ, վերցվել են բացատրություններ ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի քիվ 14 խցի կալանավորված անձանցից, որի արդյունքում պարզվել է, որ նրանց իրավունքների լիարժեք պահպանումը պարզապես կողմնակա է:

Ինչ վերաբերվում է կալանավորված անձ Գևորգ Հայրապետյանի լրատվամիջոցներից հասցեագրված նամակների և դիմումների փոխանցելը մերժելուն, անձնական գործի ուսումնասիրությանը պարզվել է, որ հիմնարկում գտնվելու ժամանակահատվածում նա հիմնարկի վարչակազմի միջոցով 30/երեսուն/ նամակներ է ուղարկել իր հարազատներին և այլ անձանց, ինչպես նաև 25/քսանհինգ/ դիմումներ է ուղարկել տարբեր գերատեսչական հիմնարկներ և լրատվամիջոցների /ՀՀ նախագահին, ՀՀ զվխավոր դատախազին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, «Ազատություն» ռադիոկայանին, «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Չորրորդ իշխանություն» օրաթերթերին և այլն/, որոնց ուղարկման և ստացման վերաբերյալ անորոշորոշ առկա են կալանավորի անձնական գործում և նրա կողմից ներկայացված փաստաթղթերը նամակների չուղարկելու վերաբերյալ, հիմնավոր չեն:

Կալանավորված անձ Գ.Հայրապետյանի կողմից ներկայացված այն փաստարկները, որ խցի կալանավորված անձանց նամակները կարդացվել և գրաբնութային են ենթարկվել, չի հիմնավորվել և հերքվել է խցի կալանավորված անձանց բացատրություններով:

Քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները գործել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վարքերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 19-րդ գլխի 175-րդ կետի համաձայն:

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը գործել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հարգանքով՝


Գ. Գանիեյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

№ 62491
27 08 2010թ.

0078 երևան, Չապարյան 41/ա, հեռ. 380-389
Էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ ՔԿԿ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԻԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. ԳԱՆԻԵՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գանիեյան

Ձեր 03.08.2010թ. քիվ 10-14 հրատապ հաշվետվության կապակցությամբ հայտնվում է, որ դատապարտյալ Արա Ռազմիկի Մարտյանը «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ է տեղափոխվել 14.11.2008թ. -ին «Նուբարաշեն» ՔԿՀ-ից:

Համաձայն 02.04.2010թ. -ի «Էրեբունի» բժշկական կենտրոնի կողմից ներկայացված վերջին էպիկրիզի՝ դատապարտյալ Ա.Մարտյանի մոտ առկա է «Շաքարային դիաբետ տիպ 2, ինսուլինապահանջ ձև, ծանր աստիճանի» Դիաբետիկ հեպատոպաթիա, էնցեֆալոպաթիա, դիտալ պոլիմիոլոպաթիա, ստորին վերջույթների անգիոպաթիա: Դիաբետիկ անգիոռետինոպաթիա, պրեսպորիֆերատիվ ֆազա: Ողնաշարի օստեոխոնդրոզ L4-S2 հատվածի, անոթա-արմատիկային համախտանիշ աջից, ենթատուր ըմբացք, սրացման փուլ, արտահայտված ցավային համախտանիշով, ձգված ըմբացք: Ջարկերակային հիպերտենզիա ԱՇԱ-0-1 /NHA/: Խոլեստերոլային բրոնխիտ: Թիբեռանման փտրիազ, միջին ծանրության, պրոգրեսիվ ստադիայում: Կատառալ լարինգիտ: Քրի միջնապատի թեղում:

Պատիժը կրելու ընթացքում դատապարտյալ Ա.Մարտյանը երբ անգամ հետազոտվել և բուժվել է «Էրեբունի» և մեկ անգամ «Արմենիա» բժշկական կենտրոններում: Վերոգրյալ բժշկական կենտրոններից ստացված էպիկրիզներում առկա են իրար չհամընկնող տվյալներ՝ չեն համապատասխանում հիվանդության զարգացման աստիճանը, հիվանդությանը բնորոշ բարդությունները: Հակասությունները շտկելու նպատակով Ա.Մարտյանի բժշկական փաստաթղթերը ներկայացվել են բժշկական աշխատանքային հանձնաժողովի բննարկմանը:

01.06.2010թ. -ին բժշկական աշխատանքային հանձնաժողովի առաջարկությամբ հանձնարարվել է կատարել նյարդավիրաբույժի խորհրդատվություն: Նշանակվել է ՄՈՏ-հետազոտություն, որը կատարվել է 24.06.2010թ. -ին: Նույն օրը նյարդավիրաբույժ պրոֆեսոր Մ.Եղունյանի խորհրդատվությամբ վիրահատական միջամտության անհրաժեշտությունը գտնվել է ոչ նպատակահարմար:

21.07.2010թ.-ին ակնարկովի կողմից դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի զննման ժամանակ անգիտեցողությամբ նշաններ չեն հայտնաբերվել:

Ախտորոշման մեջ բացակայում է 26.05.2006թ.-ի կառավարության թիվ 825-Ն որոշման թիվ 2 հավելվածում նշված շաքարային դիարեոլին բնորոշ բարդությունների զարգացման աստիճանը:

Հիվանդի վերջնական ախտորոշումը ճշտելու համար անհրաժեշտ է դատապարտյալ Ա.Մարտիրոսյանի բժշկական հետազոտությունը կազմակերպել երրորդ, այլընտրանքային մասնագիտացված բժշկական հաստատության պայմաններում՝ պետության կողմից անվճար բժշկական օգնության շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ուղեգրի հիման վրա:

Հարգանքով՝


Գ. Դանիելյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

01/3105-10 10 09 2010

0078, ք.Երևան, Շալաջյան 41ա, հեռ.380389
էլ. փոստ info@moj.am

*ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդներին խմբի նախագահ
պարոն Ա. Դանիելյանին*

/ք.Երևան, Այգեատան 11 փող., տուն 43/

*Ի պատասխան Ձեր 2010թ. սեպտեմբերի 3-ի
թիվ 10-17 գրությանը*

Հարգելի պարոն Դանիելյան,

Վերը նշված գրությամբ բարձրացված հարցի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քաղաքացի՝ Մարգիս Մանուկի Պողոսյանը գտնվում է ԱՄՆ-ի իրավապահ մարմինների կողմից «diffusion» տեսքով միջազգային հետախուզման մեջ ԱՄՆ-ի Վիրջինիան նահանգի արևելյան տարածքի դատարանի որոշման հիման վրա՝ բանկային խարդախության փորձի մեղադրանքով: Որոնողական աշխատանքների իրականացման արդյունքում վերջինս հայտնաբերվել է, ձերբակալվել, այնուհետև պահվել է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» ՔԿԶ-ում, ինչի համար հիմք են հանդիսացել կալանքի որոշման մասին պաշտոնական գրագրությունները: Ձերնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ ԱՄՆ-ի իրավասու մարմիններից պահանջվող փաստաթղթերի բնօրինակները ստանալու ուղղությամբ: Այդ փաստաթղթերը չեն տրամադրվել, ուստի Մարգիս Պողոսյանը ազատ է արձակվել: Ըստ գլխավոր դատախազության տեղեկատվության, ներկայումս ստացվել է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման բնօրինակը:

Հարգանքով՝



Գ. Դանիելյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 540/4-2765
11 10 2010 թ.

ԴԳ Արդարադատության նախարար
պարոն Գ. Դանիելյանին


Հարգելի պարոն՝ Դանիելյան

Հասարակական դիտորդների խմբի 18.09.2010թ-ի 10-21 թվակիր հրատապ հաշվետվության վերաբերյալ հայտնվում է, որ 17.09.2010թ-ին հասարակական դիտորդների խմբի անդամներ Սիքայել Արամյանի և Արման Դանիելյանի այցելությունը «Կոչ» քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտի հնարավոր չի եղել ապահովել այն պատճառով, որ նրանք այցելել են քրեակատարողական հիմնարկ ոչ թե ժամը 21-45-ին այլ 22-00-ից հետո, երբ քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահի ժամանակավոր պաշտոնակատար Ֆահրադ Մարտիրոսյանը զբաղված է եղել քրեակատարողական հիմնարկում դատապարտյալներին քուն հայտարարելու միջոցառման աշխատանքներով, բացի այդ մի խումբ դատապարտյալների այդ թվում դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի միջանձնային հարաբերությունների կարգավորմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներով և բավարար ուժեր չի ունեցել քրեակատարողական հիմնարկ այցելած դիտորդների խմբին հիմնարկի բնակելի գոտի ուղեկցելու և նրանց անվտանգությունը ապահովելու համար: «Կոչ» քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահի ժամանակավոր պաշտոնակատար Ֆ. Մարտիրոսյանը տվյալ իրավիճակում գործել է ճիշտ:

Հարգանքով՝

Գեներալ - Գնդապետ

Գ. Հարությունյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

01/3614-10 15 10 10

0078 Երևան, Դալայան 41", հեռ. 380389
էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Դանիելյանին

Հարգելի պարոն Դանիելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2010 թվականի սեպտեմբերի 18-ի հրատապ հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պարզաբանումները:

Առդիր՝ «1» թերթ

Հարգանքով՝

Գ. Դանիելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆ-ԿԵՆՏՐՈՆ»
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԵՏ

ք. Երևան, Նալբանդյան 104
հեռ. 529537

N Ե - 40/32- F - 575

« 25 » հոկտեմբերի 2010թ.

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ
և ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ
ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ
ԽՄԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

Ձեզ է ուղարկվում ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում
պատիժը կրող դատապարտյալ Հովիկ Լևոնի Բաբայանի դիմումը:

Առդիր՝ դիմումը -- 1 թերթ:

Հարգանքով՝

Արդարադատության գնդապետ


Վ. Զաքարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

01/4161-10 09 11 10

0078 Երևան, Հալաբյան 41*, հեռ. 380389
էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիպորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Սաքունցին

Ի պատասխան Ձեր 2010 թվականի հոկտեմբերի 25-ի
10-32 թվակիր գրության

Հարգելի պարոն Սաքունց,

Հայտնում ենք, որ կալանավորված անձանց և դատապարտյալներին բժշկական
օգնություն ցուցաբերելու կարգը սահմանված է «Կալանավորված անձանց և
դատապարտյալների բուժսանիտարական և բուժանխարգելիչ օգնությունը
կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու
և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու
մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-
ի թիվ 825-Ն որոշմամբ: Նշված որոշման որևէ կոնկրետ դրույթի առնչությամբ
պարզաբանում ստանալու անհրաժեշտության դեպքում, պատրաստ ենք աջակցելու:

Միաժամանակ, առաջարկում եմ հարկ եղած դեպքում ներկայացնել Ձեր
նկատառումները՝ նշված և ոլորտին առնչվող մյուս իրավական ակտերի բարելավման
կտրվածքով:

Հարգանքով՝


Գ. Դանիելյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Տ Ա Խ Ա Ջ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

№ 21/32-570-10
15 11 2010 թ.

0010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փող. 5

*«Հայաստանի Հելսինկյան կոմիտե»
իրավապաշտպան ՀԿ մախազահ
պարոն Ա. Իշխանյանին*

ք. Երևան, Պուշկինի 3ա

✓ *«Հելսինկյան քաղաքացիական
ասամբլեայի Վանաձորի
գրասենյակ» ՀԿ մախազահ
պարոն Ա. Սարունցին*

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին հասցեագրած Ձեր 19.10.2010թ. գրության տեղեկացվում է, որ Սարգիս Մանուկի Պողոսյանը 02.08.2010թ. ձերբակալվել է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից և 05.08.2010թ. տեղափոխվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, քանի որ հետախուզվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների իրավապահ մարմինների կողմից ԱՄՆ քրեական օրենսգրքի 18:1344, 1349 հոդվածներով՝ բանկային խարդախություն կատարելուն օժանդակելու մեջ, այսինքն՝ Ս. Պողոսյանը մեղադրվում է օտարերկրյա պետության տարածքում հանցագործություն կատարելու մեջ, որի հետ Հայաստանի Հանրապետությունը կապված է փոխադարձության կարգով քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու պայմանավորվածությամբ:

Նրա վերաբերյալ ԱՄՆ Ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից լրացված է հետախուզական քարտ, ինչպես նաև առկա է կալանքի սանկցիա թիվ 3.07CR041 տրված 05.04.2007թ. ԱՄՆ Վիրջինիա նահանգի Արևելյան Ռիչմոնդի շրջանային դատարանի կողմից: Միջազգային իրավական համագործակցությունն այլ պետությունների իրավապահ մարմինների հետ իրականացվում է միջազգային-իրավական փաստաթղթերի հիման վրա, այսինքն կոնվենցիոն հիմքով, ինչպես նաև ինստիտուցիոնալ, տվյալ դեպքում Ինտերպոլի շրջանակներում, որին 1992թ. անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը: Ելնելով վերոնշյալից՝

պարզարանվում է, որ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 05.08.2010թ. գրությունը հիմնված է եղել ԱՄՆ իրավապահ մարմինների կողմից ուղարկված փաստաթղթերի վրա:

Ինչ վերաբերվում է Ս. Պողոսյանին դատարան չտանելու Ձեր պնդմանը, ապա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով: Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի "գ" ենթակետը վերաբերվում է անձի օրինական կալանավորմանը կամ ձերբակալմանը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու՝ նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

Մինչդեռ Ս. Պողոսյանի կալանավորումն իրականացվել է նույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի ոչ թե «գ», այլ «զ» ենթակետի հիմքով, որը, այլի հետ մեկտեղ (inter alia), վերաբերվում է այն անձի օրինական կալանավորմանը կամ ձերբակալմանը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան հանձնելու հարցի ուսումնասիրման և վերջնական որոշման կայացման նպատակով:

Այս հիմքով անձին ձերբակալելու կամ կալանավորելու համար վերոնշյալ Կոնվենցիան չի սահմանում անձին անհապաղ դատավորի մոտ տանելու պարտադիր պահանջ:

Տեղեկացնեմ, որ Եվրոպական կոնվենցիաներն այստեղ կիրառելի են, քանի որ պարբերաբար կիրառվելով մեծ թվով պետությունների կողմից, դրանք դարձել են միջազգային պրակտիկա և կիրառելի են նաև ԱՄՆ համար, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ:


Հարկ է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը հաղորդակցություն է իրականացրել ԱՄՆ իրավասու մարմինների հետ Ս. Պողոսյանի հայտնաբերման կապակցությամբ, ինչպես արտաքին գործերի նախարարության, Ինտերպոլի, այնպես էլ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության միջոցով:

ԱՄՆ իրավասու մարմիններն ուղարկել են նրա վերաբերյալ որոշակի դատավարական փաստաթղթեր /այդ թվում կալանքի սանկցիա՝ տրված ԱՄՆ Վիրջինիա նահանգի Արևելյան Ռիչմոնդի շրջանային դատարանի կողմից/, սակայն նկատի ունենալով, որ հանձնման գործընթացում իրականացվող ստուգումների ընթացքում համապատասխան

հարցում էկատարվել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, որտեղից ստատվել է Ս.Պողոսյանի ՀՀ քաղաքացի լինելու հանգամանքը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը նրան ազատ է արձակել և պահանջ է նրա նկատմամբ ԱՄՆ-ում հարուցված քրեական գործը ՀՀ-ում ԱՄՆ տարածքում կատարած հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Միջազգային-իրավական կապերի բաժնի պետ, արդարադատության առաջին դասի խորհրդակց

Կատարող Ե. Ավսյան
511-587


Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԽՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 10-39
16.11.2010թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ.Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն նախարար,

Նոյեմբերի 11 ահազանգ ստանալով «Կոշ» ՔԿՀ-ից այն մասին, որ հարձակում է տեղի ունեցել դատապարտյալ Նիկոլ Փաշինյանի վրա, Հասարակական դիտորդների խմբի երկու անդամները՝ Թեմիկ Խալափյանը և Լուսինե Հարությունյանը, անմիջապես մեկնել են «Կոշ» ՔԿՀ, և նրանց այցի պահին Նիկոլ Փաշինյանը գտնվելիս է եղել հերթապահ մասում: Վերջինս հայտարարել է, որ զինքը իր վրա հարձակում են գործել սև դիմակներով երկու անձ, ոտքերով հարվածել են իրեն և հասցրել բազմաթիվ մարմնական վնասվածքեր: Արտաքին զննման ժամանակ դիտորդները նկատել են ձախ ձեռքի միջնատնտին առկա քերծվածք: ՔԿՀ հերթապահ բժշկի կողմից կազմվել է 5 արձանագրություն, որին իր անհամաձայնությունն է հայտնել դատապարտյալը: Դիտորդները պահանջել են կատարել դատաբժշկական փորձաքննություն: Այնուհետև դիտորդները գրուցել են Ն.Փաշինյանի խցակիցների հետ, վերջիններս վստահեցնում էին, որ ոչինչ չէին տեսել, արթնացել են միայն հերթապահների սենյակի լույսը միացնելուց հետո: Դիտորդները գրուցել են նաև հարևան խցակիցների հետ, վերջիններս նույնպես ոչինչ չեն հայտնել: Դիտորդները նաև գրուցել են հերթապահ անձակազմի հետ: Առանձնագրույց են ունեցել նաև Ն.Փաշինյանի անձնական իրերը բնակելի գոտուց դուրս բերած դատապարտյալի հետ, որը նույնպես ասաց, որ ինքը քնած է եղել և ոչինչ չի տեսել ու չի լսել: Անձնական իրերի միջից Ն.Փաշինյանը ցույց է տվել իր զինքնազենը, որի վրա կային մի քանի արյան հետքեր: Դիտորդները պահանջել են բացի դատաբժշկական փորձաքննությունից նաև հետաքննություն:

Խնդրում եմ տալ խնդրի հետ կապված պարզաբանումներ:
Կանխավ շնորհակալ եմ,
ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների
Խմբի նախագահ
Ա.Սաքունց



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՀՀ, ք. Սրբաճ 0061, Աղջակունքայ 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

№ 840/Ց - 3271
« 29 » 11 2008 թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՆԵՐՈՒՄ ԵՎ
ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄՈՂ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԳՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՍԱՔՈՒՆՅԻՆ

Հարգելի պարոն Սարունց

Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված Ձեր 17.11.2010թ. թիվ 10-39 գրության՝ հայտնվում է, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական սպասարկումը կանոնակարգվում է ՀՀ կառավարության «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժամիտարարական և բուժկամիտարարելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ:

Բժշկական սպասարկման բաժինները իրենց գործունեության ընթացքում ուղղորդվում են նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(98)7 հանձնարարականի դրույթների և սկզբունքների ինչպես նաև Եվրոպական բանտային կանոնների և Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների համապատասխան:

Միաժամանակ հայտնվում է, որ կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական սպասարկման որոշ հարցեր կանոնակարգվում են նաև ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի հրամաններով և հանձնարարականներով, որոնց պատճենները կից ներկայացվում է:

Առդիք՝ 7 (յոթ) թերթ.

Հարգանքով՝

ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ա.Սարկիսով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ**

ՀՐԱՄԱՆ

«22» հունվարի 2007թ.

թիվ ՔՀ-5Ա

ք. Երևան

ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» թիվ 1636-Ն որոշման 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց ծանր հիվանդության հետևանքով, բացի հոգեկան առողջական վիճակին վերաբերվող խնդիրներից, պատժից ազատելու նպատակով բժշկական փորձաքննություն կազմակերպելու համար.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել բժշկական փորձաքննության հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ալեքսանդր Մարկիսով

Հանձնաժողովի նախագահ,

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Գող խաչատրյան

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի տեղակալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ռաֆայել Միքայելյան

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ

„ 12 „ 11 2009թ.

թիվ 280-Ն

ք. Երևան

Արսեն Բաբայան

ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոնի Երևան քաղաքի փորձագետ

ՀՐԱՄԱՆ

Քրեակատարողական ծառայությունում բժշկական աշխատանքային հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին

Վարդան Մովսիսյան

ՀՀ ոստիկանության բժշկական վարչության պետ

Ի կատարումն «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժամիտարանական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշման 1-ին բաժնի 2-րդ գլխի 13 կետի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել բժշկական աշխատանքային հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ - Հրաչիկ Գասպարյան, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ (թերապևտ).

հանձնաժողովի անդամներ - Սպարտակ Գևորգյան, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ (առողջապահության կազմակերպիչ).

- Կարո Առուստամյան, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ (թերապևտ).

- Հովսեփ Հովսեփյան, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի վիրաբուժական բաժանմունքի պետ.

- Մամբրե Նանայան, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ (հոգեբույժ-նյարդաբան).

բժշկական մատենավար - Արմեն Դուկասյան, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի ինֆեկցիոն բաժանմունքի գլխավոր մասնագետ.

2. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով, նրա պարտականությունների կատարումը կարող է հանձնարարվել հանձնաժողովի անդամներից որևէ մեկին՝ հանձնաժողովի նախագահի նախապես ներկայացմամբ:

3. Հանձնաժողովի նախագահին՝

ա) սպահովել բժշկական փորձաքննության կատարումն օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում.

բ) **աներաժեշտության դեպքում բժշկական փորձաքննությունների կատարմանը ներգրավել պահանջվող բժշկական որակավորում ունեցող հանրապետության առաջատար մասնագետներին:**

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005թվականի հոկտեմբերի 17-ի թիվ ՔՀ-62-Ա հրամանը:

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2. Բժշկական աշխատանքային հանձնաժողովին՝

կատարել ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշման 1-ին բաժնի 2-րդ գլխի թիվ 14, 15, 16, 17, 18, 19 կետերի, 2-րդ բաժնի 7-րդ գլխի 58 կետի 3-րդ ենթակետի, 11 գլխի 76 և 13 գլխի 82 կետերի պահանջները:

3. Բժշկական աշխատանքային հանձնաժողովի նախագահին՝

հանձնաժողովի նիստեր հրավիրել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում յուրաքանչյուր շաբաթվա մեկ օր:

4. Համաձայն ՀՀ կառավարության 24.05.2006թ. թիվ 825-ն որոշման 1-ին բաժնի 2-րդ գլխի թիվ 14-րդ կետի սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին:

5. Հրամանը ծանոթացնել քրեակատարողական վարչության համապատասխան ստորոբաժանումների և քրեակատարողական հիմնարկների պետերին:

12.11.2009թ. թիվ 280-Ն

Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

„02„, 08 2006թ.

թիվ 83-Լ

ք. Երևան

Քրեակատարողական հիմնարկներում դեղորայքի և բժշկական պարագաներից օգտվելու մասին

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում դեղորայքի և բժշկական պարագաների հսկողությունից դուրս շրջանառության և օգտագործման դեպքերը կանխելու և բացառելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժումն իրականացնել բացառապես հիմնարկում առկա դեղորայքով և բժշկական պարագաներով:

2. Խիստ հսկողություն սահմանել դեղամիջոցների և բժշկական պարագաների անթույլատրելի ճանապարհով քրեակատարողական հիմնարկներ ներթափանցման բացառման գործընթացի նկատմամբ:

3. Բացառիկ դեպքերում դեղորայքի և բժշկական պարագաների մուտքը քրեակատարողական հիմնարկ թույլատրել միայն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի թույլտվությամբ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել քրեակատարողական հիմնարկների պետերին

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀՀ ԱՆ ՔԿՎ ԲԱԲ կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կալանավորված անձանց և դատապարտյալների տեղափոխումը ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ կատարվում է առանց ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի համաձայնության՝ խախտելով ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժամիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգի» 59-րդ կետի պահանջները:

Նմանօրինակ դեպքերը բացառելու նպատակով

Հանձնարարվում է՝

1. Կալանավորված անձանց և դատապարտյալներին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխումը, բացառությամբ անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալու դեպքերի, կատարել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կարգազերծով:
2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին՝ սույն հանձնարարականի 1-ին կետի պահանջների խախտման յուրաքանչյուր դեպք դարձնել քննարկման առարկա, խախտողներին ներկայացնելով կարգապահական տույժի:
3. Սույն հանձնարարականի կատարման հսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի տեղակալ Վ.Քոչարյանի վրա:

ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ, ԳԵՆԵՐԱԼ-ՍԱՅՈՐ

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

30.04.2009թ. թիվ 40/8-1412

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների մահվան դեպքերի տարեկան քննարկումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության բժշկական աշխատանքային հանձնաժողովի (ԲԱՀ) կողմից տեղի է ունենում յուրաքանչյուր տարվա սկզբին՝ վերլուծելով նախորդ տարվա մահվան բոլոր դեպքերը:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 26.05.2006թ. «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժամիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշման մեջ կանոնակարգված չեն վերլուծության արձանագրության կազմումը և ժամկետները, անհրաժեշտություն է առաջացել մահվան յուրաքանչյուր առանձին դեպքով հրավիրել ԲԱՀ-ի նիստ, որի նպատակով

Հ անձնարարում եմ՝

1. ԲԱՀ-ի նախագահին՝
 - մահվան յուրաքանչյուր առանձին դեպքով հրավիրել ԲԱՀ-ի նիստ՝ ներգրավելով համապատասխան ՔԿ հիմնարկի բժշկական սպասարկման ստորաբաժանման ղեկավարին և բուժող բժշկին: Արդյունքները ներկայացնել քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին:
2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին՝
 - քննարկման և վերլուծության արդյունքների վերաբերյալ զեկուցել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին:
3. Սույն հանձնարարականի կատարման հսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի տեղակալ արդարադատության գնդապետ Վ.Քոչարյանի վրա:

ՀՀ ԱՆ ՔԿ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,
ԳԵՆԵՐԱԼ-ԳՆԴԱՊԵՏ
40/8-2350 26.08.2010թ.

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԿԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 53
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N Ե 40/7 - 3269
28 / 11 2010 թ.

*Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարար
պարոն Գ. Դանիելյանին*

*Ի պատասխան Գիտորդական
խմբի 17.11.2010 թվականի
10-38 թվակնի հրատապ հաշվետվության*

Հարգելի պարոն Դանիելյան

Հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից ուսումնասիրվել են Դիտորդական խմբի հրատապ հաշվետվության մեջ նշված հանցամասերը, որոնց արդյունքում պարզվել է հետևյալը.

2010 թվականի նոյեմբերի 11-ին դատապարտյալ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ նույն օրը ժամը 02:50 սահմաններում հատուկ նշանակության ջոկատի զինվորների կողմից ինքը ենթարկվել է հարձակման, որի ընթացքում հարվածներ են հասցրել իրեն: Նույն օրը ժամը 03:20-ին «Կոչ» քրեակատարողական հիմնարկի հեթաթախ մատուց բժշկական սպասարկման բաժնի ծառայողի կողմից դատապարտյալ Ն.Փաշինյանը ենթարկվել է մարմնական զննության, որի արդյունքում արձանագրվել է, որ վերջինիս մարմնի վրա բռնության հետքեր չկան:

Ավելորդ չէ նշել, որ 11.11.2010 թվականին Դիտորդական խմբի անդամները (Թեմիկ Խալաֆյան և Լուսինե Հարությունյան՝ ժամը 6:30-9:20, 11:40-12:00) երկու անգամ հանդիպել են դատապարտյալ Ն.Փաշինյանին, սակայն նրա մարմնական վնասվածքների մասին ոչինչ չի արձանագրվել և հրապարակվել:

Նույն օրը դատապարտյալ Ն.Փաշինյանին հանդիպելու նպատակով «Կոչ» քրեակատարողական հիմնարկ են այցելել նաև Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցները, սակայն դատապարտյալը հրաժարվել է հանդիպել նրանց հետ:

Դատապարտյալ Ն.Փաշինյանին ս.թ. նոյեմբերի 11-ին երեք օր ժամանակով տրամադրվել է երկարատև տեսակցություն իր կնոջ հետ, որի ավարտից մեկ օր անց՝ 15.11.2010 թվականին Դիտորդական խմբի անդամները (Լատիա Գասպարյան և Լուսինե Հարությունյան՝ ժամը 19:15-20:30) հանդիպել են դատապարտյալին և իբր «արձանագրել» մարմնական վնասվածքներ, որոնք ըստ դատապարտյալի առաջացել են «ժայտնի դեպքերից ժամեր անց»:

«Կոչ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որն անց է կացվել 11.11.2010 թվականին ժամը 13:30-ի սահմաններում: Ըստ դատաբժշկական փորձագետի թիվ 253 եզրակացության

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության նախարար
Պ. Զեյնաբյան
4850
28.11.2010

դատապարտյալ Ն.Փաշինյանի վրա առկա է եղել «ձախ դատակի դիտույլ ֆալսեգի շրջանի քերական, հասցվել է բուք առարկայով, որն առողջության քայքայման հատկանիշներ չի պարունակում»: Համաձայն «Կոչ» քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից կազմած արձանագրության, իրենց ներկայությամբ դատապարտյալ Ն.Փաշինյանն ինքն է պոկել իր մատի մաշկը և արյունը քսել հագուստին՝ ասելով. «տեսեք ձեր գլխին ինչ եմ սարքելու, մեկ է՝ ինձ են հավատալու, ոչ թե ձեզ»:

Դատաբժշկական փորձագետն իր գրավոր բացատրության մեջ նշել է, որ փորձաքննության ժամանակ ուսումնասիրել է դատապարտյալի գործնականում ամբողջ մարմինը և բացի նշված վնասվածքից այլ վնասվածքներ չեն եղել: Փորձագետը բացառել է դատապարտյալի կողմից նշված ժամին մարմնական վնասվածքների ստացման պարագայում դրանք իր կողմից չնկատելու և չարձանագրելու հանգամանքը:

Նկատի ունենալով վերոգրյալ փաստերը, գտնում են, որ Հրատապ հաշվետվության մեջ նշված «փաստերն» իրականությանը չեն համապատասխանում:

Հարգանքով՝

Գեներալ-գնդապետ

Հ.Հարությունյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ԿՕ1/4561-10
26.11.2010

0078 Երևան, Հալաբյան 41^ա, հեռ. 380389
էլ. փոստ info@moj.am

**ՀՀ ԱՆ քրեակարարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիտորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Սաքունցին**

Ի պատասխան Ձեր 2010 թվականի նոյեմբերի 17-ի
10-38 թվակիր գրության

Հարգելի պարոն Սաքունց,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական խմբի հրատապ
հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության քրեակատարողական վարչության կողմից կատարված
ուսումնասիրությունների արդյունքները:

Առդիր «2» թերթ

Հարգանքով՝

Գ. Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՉԻՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՎՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԿԱՐԱԿԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

N 10-38
16.11.2010թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ. Դանիելյանին

Հարգելի պարոն նախարար,
Մեր կողմից ՔԿՀ-ների ուսումնասիրությամբ պարզվեց, որ կան նաև այլ իրավական
ակտեր, մասնավորապես, ՀՀ ԱՆ Վարչության հրամանը բժշկական ծառայության
կազմակերպման կարգի վերաբերյալ:
Կարևորելով և ողջունելով ոլորտի վերաբերյալ իրավական ակտերի բարելավմանը
ուղղված խմբի առաջարկությունները և Ձեր աջակցությունը՝ միաժամանակ հայտնում ենք, որ
առանց վերը նշված ենթաօրենսդրական ակտերի չեն կարող լիարժեք առաջարկություններ
ներկայացնել:
Վերը նշվածով դիմում ենք Ձեզ՝ ստանալու ՔԿՀ-ներում առողջական խնդիրներով
ամբողջ իրավական փաթեթը:

Կանխավ շնորհակալ եմ,

ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների
Խմբի նախագահ՝

Ա.Սաքունց

ՀՀ, ք. Երևան 0061, Ալյզետյան 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N ԵԿՈ/Դ - 326 9
« 24 » 11 2010 թ.

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարար
պարոն Գ. Դանիելյանին

Ի պատասխան Դիտորդական
խմբի 17.11.2010 թվականի
10-38 թվակիր հրատապ հաշվետվության

Հարգելի պարոն Դանիելյան

Հայտնվում է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության քրեակատարողական վարչության կողմից ուսումնասիրվել են
Դիտորդական խմբի հրատապ հաշվետվության մեջ նշված հանգամանքները, որոնց
արդյունքում պարզվել է հետևյալը.
2010 թվականի նոյեմբերի 11-ին դատապարտյալ Նիկոլ Փաշինյանը հայտարարել
է, որ նույն օրը ժամը 02:50 սահմաններում հատուկ նշանակության ջոկատի գնվորների
կողմից ինքը ենթարկվել է հարձակման, որի ընթացքում հարվածներ են հասցրել իրեն:
Նույն օրը ժամը 03:20-ին «Կոչ» քրեակատարողական հիմնարկի հերթապահ մատուց
բժշկական սպասարկման բաժնի ծառայողի կողմից դատապարտյալ Ն.Փաշինյանը
ենթարկվել է մարմնական զննության, որի արդյունքում արձանագրվել է, որ վերջինիս
մարմնի վրա բռնության հետքեր չկան:
Ավելորդ չէ նշել, որ 11.11.2010 թվականի Դիտորդական խմբի անդամները (Թեմիկ
Խալաֆյան և Լուսինե Հարությունյան՝ ժամը 6:30-9:20, 11:40-12:00) երկու անգամ
հանդիպել են դատապարտյալ Ն.Փաշինյանին, սակայն նրա մարմնական վնասվածքների
մասին ոչինչ չի արձանագրվել և հրապարակվել:
Նույն օրը դատապարտյալ Ն.Փաշինյանին հանդիպելու նպատակով «Կոչ»
քրեակատարողական հիմնարկ են այցելել նաև Հայաստանի Հանրապետության Մարդու
իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցները, սակայն դատապարտյալը
հրաժարվել է հանդիպել նրանց հետ:
Դատապարտյալ Ն.Փաշինյանին ս.թ. նոյեմբերի 11-ին երեք օր ժամանակով
տրամադրվել է երկարատև տեսակցություն իր կնոջ հետ, որի ավարտից մեկ օր
անց՝ 15.11.2010 թվականին Դիտորդական խմբի անդամները (Լուսինե Գապարյան և
Լուսինե Հարությունյան՝ ժամը 19:15-20:30) հանդիպել են դատապարտյալին և իբր
«արձանագրել» մարմնական վնասվածքներ, որոնք ըստ դատապարտյալի առաջացել են
«ժայտնի դեպքերից ժամեր անց»:
«Կոչ» քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից նշանակվել է
դատաբժշկական փորձաքննություն, որն անց է կացվել 11.11.2010 թվականին ժամը 13:30
-ի սահմաններում: Ըստ դատաբժշկական փորձագետի թիվ 253 եզրակացության

Հայաստանի Հանրապետության
Արդարադատության նախարար
N ԵԿՈ/Դ - 326 9
« 24 » 11 2010 թ.

դատապարտյալ Ն.Փաշինյանի վրա առկա է եղել «ճախ դատակի դիտարկ ֆալանգի շրջանի քերծվածք, հասցվել է բուք առարկայով, որն առողջության քայքայման հատկանիշներ չի պարունակում»: Համաձայն «Կոշ» քրեակատարողական հիմնարկի ծառայողների կողմից կազմած արձանագրության, իրենց ներկայությամբ դատապարտյալ Ն.Փաշինյանն ինքն է պոկել իր մատի մաշկը և արյունը քսել հագուստին՝ ասելով. «տեսեք ձեր գլխին ինչ եմ սարքելու, մեկ է՝ ինձ եմ հավատալու, ոչ թե ձեզ»:

Դատաբժշկական փորձագետն իր գրավոր բացատրության մեջ նշել է, որ փորձաքննության ժամանակ ուսումնասիրել է դատապարտյալի գործնականում ամբողջ մարմինը և բացի նշված վնասվածքից այլ վնասվածքներ չեն եղել: Փորձագետը բացառել է դատապարտյալի կողմից նշված ժամին մարմնական վնասվածքների ստացման պարագայում դրանք իր կողմից չնկատելու և չարձանագրելու հանգամանքը:

Նկատի ունենալով վերոգրյալ փաստերը, գտնում եմ, որ Հրատապ հաշվետվության մեջ նշված «փաստերն» իրականությանը չեն համապատասխանում:

Հարգանքով՝

Գեներալ-գնդապետ

Հ.Հարությունյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0078 երևան, Հայաստան 41^ա, հեռ. 380389
Էլ. փոստ info@moj.am

401/4567-10
26.11.2010

**ՀՀ ԱՆ քրեակարողական հիմնարկներում և մարմիններում
հասարակական վերահսկողություն իրականացնող
հասարակական դիպորդների խմբի նախագահ՝
Պարոն Ա. Սաքունցի**

Ի պատասխան Ձեր 2010 թվականի նոյեմբերի 17-ի
10-38 թվակիր գրության

Հարգելի պարոն Սաքունց,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական խմբի հրատապ հաշվետվության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Առդիր «2» թերթ

Հարգանքով՝

Գ. Դանիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 10-37
16.11.2010թ.

ՀՀ Արդարադատության նախարար՝
պարոն Գ.Դանիելյանին

ՀՐԱՏԱՊ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն նախարար,

Խնդրում եմ հայտնել, թե որ փուլում է գտնվում հետևյալ ազատազրկվածների բուժումը
և բուժ.հետազոտությունները՝

«Նուբարաշեն» ՔԿՀ՝ Վասիլյան Գագիկ (վիրահատման կարիք), Մխոյան Համլետ
(վիրահատման կարիք), Թովմասյան Հայկ (հետազոտման և բուժման կարիք), Խաչատրյան
Կարապետ (հետազոտման և բուժման կարիք), Ավագ Թադևոսյան (հետազոտման և
բուժման կարիք):

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ՝ Սասուն Միքայելյան (հետազոտման և
բուժման կարիք):

«Արթիկ» ՔԿՀ՝ Քարամյան Աշոտ (հետազոտման և բուժման կարիք):

Կանխավ շնորհակալ եմ,

ՀՀ ԱՆ ՔԿՀ Հասարակական վերահսկողություն
Իրականացնող Հասարակական Դիտորդների
Խմբի նախագահ

Ա.Սաքունց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

№ 6-2953
26 . 11 2010թ.

0078 Երևան, Դավաթյան 41/ա, հեռ. 344-677
էլ. փոստ info@moj.am

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ
ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄՈՂ ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 16.11.2010թ թիվ 10-37 գրության՝ կից ներկայացվում է
գրությունում նշված կալանավորված անձանց և դատապարտյալների առողջական
փնտհի վերաբերյալ տեղեկանքները:

Հարգանքով՝


Գ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Սասուն Մեխակի Միքայելյանի առողջական վիճակի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Սասուն Մեխակի Միքայելյանը վերոնշյալ հիմնարկ է տեղափոխվել 13.03.2008թ, որտեղ գտնվելիս մշտապես եղել է ինչպես վերոնշյալ հիմնարկի այնպես էլ ՀՀ ԱՆ ՔԿ վարչության բժշկական անձնակազմի ուշադրության ներքո:

Դատապարտյալ Սասուն Միքայելյանը առողջական վիճակը ուսումնասիրելու նպատակով ս.թ. հունվարի 26-ին «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկ է գործուղվել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի թերապևտիկ բաժանմունքի գլխավոր մասնագետ, սրտաբան Հ.Հեքիմյանը, որի եզրակացությամբ զննման պահին Ս.Միքայելյանը մասնագիտական բուժման կարիք չի ունեցել:

2009թ. հունվարի 27-ին Ս.Միքայելյանի առողջական վիճակը կրկին ուսումնասիրվել է ինչպես շտապ օգնության, այնպես էլ «Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ-սրտաբանների կողմից:

Համաձայն շտապ օգնության սրտաբան Գ.Պողոսյանի եզրակացության ախտորոշվել է «Մրտի իշեմիկ հիվանդություն. հետինֆարկտային կարդիոսկլերոզ»: Հաշվի առնելով Ս.Միքայելյանի բավարար առողջական վիճակը՝ կարիք չի եղել ստացիոնար բուժման:

«Էրեբունի» բժշկական կենտրոնի բժիշկ-սրտաբանի հետազոտման արդյունքում Ս.Միքայելյանի մոտ ախտորոշվել է «Զարկերակային հիպերտենզիա: ՆԿ I աստիճան»: Ըստ սրտաբան Շ.Ղուլիջանյանի՝ Ս.Միքայելյանը զննման պահին ստացիոնար բուժման կարիք չի ունեցել: Խորհուրդ է տրվել շարունակել բուժումը «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկում՝ ամբուլատոր պայմաններում:

2009թ. փետրվարի 2-ին ՀՀ ԱՆ ՔԿ վարչության կողմից կազմակերպվել է Ս.Միքայելյանի խորհրդատվություն ՀՀ առողջապահության նախարարության բժիշկ-սրտաբանի և նյարդաբանիկողմից՝ առողջական վիճակը լրացուցիչ անգամ հետազոտելու նպատակով:

2009թ մարտի 3-ին Ս.Միքայելյանը խորհրդատվություն է ստացել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի թերապևտիկ բաժանմունքի պետ Լ.Մարկոսյանի կողմից ախտորոշել է «Մրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային կարդիոսկլերոզ, աբերոսկլերոտիկ նոպաներով, ֆունկցիոնալ դաս 1-2,

խրոնիկական հեպատոխոլեստիտ, ուղեղի արյան շրջանառության դինամիկ խանգարում»: Բժշկի կողմից նշանակվել է ամբուլատոր բուժում և տրվել են խորհուրդներ:

08.05.2009թ. Ս.Միքայելյանին զննել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի թերապևտիկ բաժանմունքի գլխավոր մասնագետ, սրտաբան Հ.Հեքիմյանը, որը հիվանդի մոտ հայտնաբերել է նաև «Ռեֆլյուքս գաստրիտ», որի համար նշանակել է ամբուլատոր բուժում:

21.05.2009թ «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում Ս.Միքայելյանը ենթարկվել է գլխուղեղի ռենտգեն տոմոգրաֆիկ հետազոտության, որի արդյունքում նրա մոտ ախտորոշվել է «Ժրոնիկական ձախակողմյան հայմոռիտ, երկկողմանի էտմոիդիտ: Առողջորոշվել է հիդրոցեֆալիա: Անոթային էնցեֆալոպատիա»: Նշված հիվանդության կապակցությամբ պրոֆեսոր Ա.Շուքուրյանի կողմից նշանակվել է բուժում:

22.05.2009թ «Էրեբունի» բժշկական կենտրոնում Ս.Միքայելյանը հետազոտվել է նյարդաբան Գ.Մելիքյանի կողմից, որը ախտորոշել է «Ասթենոնյարդային համախտանիշ» և նշանակել է բուժում:

03.09.2009թ Ս.Միքայելյանը հետազոտվել է քիթ-կոկորդ-ականց բժշկի կողմից, որը ախտորոշել է «Ժրոնիկական ֆարինգոտոնզիլիտի սրացում» և նշանակել է բուժում, որը Ս.Միքայելյանը ստացել է «Երևան-Կենտրոն» ՔԿ հիմնարկում:

12.09.2009թ. Ս.Միքայելյանը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում ենթարկվել է լաբորատոր-գործիքային հետազոտության, որի արդյունքում նրա մոտ ախտորոշվել է «Մրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային կարդիոսկլերոզ Ա6, պարոսիսիզմալ տախիկարդիայի նոպաներով: Քրոնիկ պրոստատիտ: Քրոնիկ ֆարինգիտ: Հետտրոմբոֆլեբիկ համախտանիշ»:

Վերոգրյալ հիվանդությունների առկայության դեպքում նպատակահարմար է գտնվել Ս.Միքայելյանին 12.09.2009թ.-ին տեղափոխել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ «Մրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային և աբերոսկլերոտիկ կարդիոսկլերոզ: Լարվածության ստենոկարդիա ֆ.դ. 2-րդ, Ա-1» ախտորոշմամբ: Ստացիոնարում օրյելիտիվ զննման, կատարված լաբորատոր և գործիքային քննությունների, համապատասխան մասնագետների խորհրդատվությունների արդյունքում հաստատվել է կլինիկական ախտորոշումը՝ «Մրտի իշեմիկ հիվանդություն, հետինֆարկտային կարդիոսկլերոզ: Լարվածության ստենոկարդիա ֆ.դ. 2-րդ, Ա-1, ճարպային հեպատոզ: Ողնաշարի կրծքային հատվածի օստեոքոնդրոզ: Դիսցիդրուլատոր էնցեֆալոպաթիա ասթենոնկրոտիկ համախտանիշով»: Նշանակվել է կոմպլեքս դեղորայքային բուժում:

Չնայած տարվող բուժմանը 20.11.2009թ.-ին արձանագրվել է Ս.Միքայելյանի առողջական վիճակի կտրուկ վատթարացում: Կատարված լրացուցիչ հետազոտությունների, «Արմենիա» բժշկական կենտրոնի նյարդաբանության բաժնի վարիչ Վ.Պետրոսյանի և LOR օրգանների պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության բաժնի վարիչ Ա.Մինասյանի խորհրդատվությունների արդյունքում ախտորոշվել է «Զքի միջնապատի ծռում, երկկողմանի քրոնիկ էքոնոդիտ, ձախակողմյան քրոնիկ հայմոռիտ, սլիպ-ապնոտ, հիպերտրոֆիկ ռինիտ»: Նշանակվել է վիրահատություն մասնագիտացված կլինիկայի պայմաններում:

04.12.2009թ.-ին Ս.Միքայելյանը տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն և նախավիրահատական բուժումից հետո՝ 16.12.2009թ.-ին ընդհանուր անզգայացմամբ կատարվել է վիրահատություն. «Երկկողմանի ռադիկալ ֆրոնտոտոմիա, էքոնոդեկտոմիա, ստորին կոնխոտոմիա, ձախակողմյան ռադիկալ հայմոռոտոմիա, ուվուլ-պալատոֆարինգոպլաստիկա, արտաքին քթի հետվիրահատական սպիակ կոնզոլմենտատի հեռացում, ձախ 2-րդ կտրիչի սպիկոտոմիա»:

28.12.2009թ.-ին Ս.Միքայելյանը դուրս է գրվել «Արմենիա» բժշկական կենտրոնից, տեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿ հիմնարկ՝ 15-20 օրվա ընթացքում ամենօրյա հետվիրահատական պրոցեդուրաները «Արմենիա» բժշկական կենտրոնում կատարելու պայմանով: Հետվիրահատական բարդությունների հետ կապված մինչ օրս Ս.Միքայելյանը տեղափոխվում է «Արմենիա» բժշկական կենտրոնի LOR բաժանմունք շաբաթը 1-2 անգամ մասնագիտացված բուժօգնություն ստանալու նպատակով:

03.02.2010թ.-ին Ս.Միքայելյանը տեղափոխվել է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն, որտեղ նույն օրը կատարվել է կորոնարոգրաֆիա, որի արդյունքում հայտնաբերվել է սրտի առաջային պատը սնուցող զարկերակի միջին հատվածի 90% նեղացում, գոտևորդ կորոնար զարկերակի էկտատիկ լայնացում: 04.02.2010թ.-ին կենսական ցուցումներով կատարվել է վերոնշված զարկերակի միջին հատվածի ստենոտավորում CYPHER SELEKT 3.5 X 18 մմ ստենտով: 06.02.2010թ.-ին Ս.Միքայելյանը տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿ հիմնարկ, նշանակվել է դեղորայքային բուժում, ՄԻՀ երկրորդային պրոֆիլակտիկա, ամենամսյա պրոֆիլակտիկ այցելություն «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն, զանգասների դեպքում՝ լրացուցիչ այցելություն:

14.05.2010թ.-ին «Դիագնոստիկա» ՓԲԸ-ում կատարված տրեդմիլ քեսթի և 03.06.2010թ.-ին «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում կատարված հետազոտությունների արդյունքում կլինիկական ցուցումներով որոշվել է կատարել արտահերթ ռեկորոնարոգրաֆիա:

11.06.2010թ.-ին «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում կատարվել է ռեկորոնարոգրաֆիա, որի արդյունքում հայտնաբերվել է ձախ առաջային վայրէջ կորոնար զարկերակի միջին հատվածի ստենտի և առաջին բութանկյուն կորոնար զարկերակի 20 % նեղացումներ:

12.06.2010թ.-ին Ս.Միքայելյանը տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿ հիմնարկ խորհուրդներով՝ դեղորայքային բուժում, սրտաբանի դինամիկ հսկողություն, 6 ամիս հետո ռեկորոնարոգրաֆիայի և ՄԻՀ երկրորդային պրոֆիլակտիկայի անցկացում «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում,

ՀՀ ԱՆ ՔԿՎ ԲՍԲ ՊԵՏ  Ա.ՍԱՐԿԻՍՈՎ

23.11.10թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր Հայկ Վաղինակի Թովմասյանի առողջական վիճակի վերաբերյալ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր Հայկ Վաղինակի Թովմասյանը 29.09.2010թ.-ին տեղափոխվել է հիմնարկի ստացիոնար, որտեղ ենթարկվել է թոքերի կրկնակի ռենտգենոգրաֆիկ, արյան ընդհանուր և խորխի մանրադիտական եռակի հետազոտությունների: Ախտորոշվել է «Աջ թոքի վերին բլթի արցցես? Աջ վերին բլթի նորագոյացություն? Վերջույթների տետրապարեզ»: Բազմապրոֆիլ նեղ մասնագետների խորհրդատվությունների (08.10.2010թ.-ին՝ նյարդավիրաբույժի, 11.10.2010թ.-ին՝ կրծքային վիրաբույժի, 11.10.2010թ.-ին և 18.10.2010թ.-ին՝ թոքախտաբանի) արդյունքում վերջնական ախտորոշում չի կայացվել: Ստացիոնարում գտնվելու ընթացքում կալանավոր Հ.Թովմասյանը ստացել է լայն սպեկտրի հակաբակտերիալ բուժում ռենտգենաբանորեն նշված օջախի շրջակա հյուսվածքի ինֆիլտրատիվ փոփոխությունների կապակցությամբ, ինչի արդյունքում նկատվել է ինֆիլտրացիայի աննշան ներծծում, ինչպես նաև ինքնազգացողության լավացում: Մ.թ. նոյեմբերի 19-ին հիմնարկ հրավիրված համապատասխան նեղ մասնագետի կողմից իրականացվող բրոնխոսկոպիկ հետազոտության ընթացքում կալանավոր Հ.Թովմասյանի մոտ արտահայտված սրտխառնոցի և ռեֆլեկտոր փսխման պատճառով հետազոտությունը չհաջողվեց իրականացնել: Ներկայումս հետագա նեղ մասնագիտական հետազոտությունները և բուժումը կազմակերպելու համար նախատեսվում է կալանավոր Հ.Թովմասյանին տեղափոխել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ:

ՀՀ ԱՆ ՔԿՎ ԲՍԲ ՊԵՏ  Ա.ՍԱՐԿԻՍՈՎ

23.11.10թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր Ավագ Ալեքսանդրի Թադևոսյանի առողջական վիճակի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Ավագ Ալեքսանդրի Թադևոսյանի մոտ օբյեկտիվ գնման և գործիքային քննության /այդ թվում Ա.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնում/ արդյունքում ախտորոշվել է «Բարձր աստիճանի բարդացած կարճատեսություն»:

ՀՀ ԱՆ ՔԿՎ ԲՍԲ ՊԵՏ  Ա.ՍԱՐԿԻՍՈՎ

23.11.10թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԲԿՀ-ի դատապարտյալ
Գագիկ Սամվելի Վասիլյանի առողջական վիճակի վերաբերյալ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ԲԿՀ-ի դատապարտյալ Գագիկ Սամվելի Վասիլյանի հետազոտման արդյունքում ախտորոշվել է «Օտար մարմիններ /1 ջերմաչափ և մոտ 7-9 մետաղական լարեր/ աղեստամոքսային տրակտում: ՄԻԱվ-վարակ 2-րդ կլինիկական փուլ: Միզաքարային հիվանդություն: Իմունային անբավարարություն: Քրոնիկական եղնջացան: Չախակողմյան աճուկային ճողվածք»:

Դատապարտյալ Գ.Վասիլյանը ս.թ. սեպտեմբերի 18-ին «Դիագնոստիկա» ՓԲԸ մասնագետ Ս.Գ.Պողոսյանի կողմից ենթարկվել է խորհրդատվության, նույն օրը կատարվել է գաստրոսկոպիկ եղանակով թվով 4 օտար մարմինների հեռացում և խորհուրդ է տրվել հետագայում էտապային գաստրոսկոպիկ եղանակով հեռացնել մնացած օտար մարմինները: «Դիագնոստիկա» ՓԲԸ-ում գաստրոսկոպիկ եղանակով օտար մարմինները էտապային հեռացնելու համար բժիշկ-մասնագետ Ս.Գ.Պողոսյանի հետ ձեռք բերված պայմանավորվածություն համաձայն դատապարտյալ Գ.Վասիլյանը նախապատրաստված էր տեղափոխման, սակայն մետաղական օտար մարմինները ինքնաբերաբար դուրս են եկել, իսկ բժշկական ջերմաչափը մնում է ստամոքս-աղիքային տրակտում:

Ներկայումս դատապարտյալ Գ.Վասիլյանը գտնվում է բժիշկների մշտական հսկողության ներքո և նրա մոտ սուր վիրաբուժական միջամտության անհրաժեշտություն չկա /աղեստամոքսային տրակտի թափածակում/ չի նկատվում: Դինամիկ հսկողության արդյունքներից ելնելով կորոշվի նրա հետագա բուժման տակտիկան:

/ ՀՀ ԱՆ ԲԿՎ ԲՍԲ ՊԵՏ  ԱՍԱԲԿԻՍՈՎ

23.11.10թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Աշոտ Լևոնի Քարամյանի
առողջական վիճակի վերաբերյալ

Դատապարտյալ Աշոտ Լևոնի Քարամյանը «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ է ընդունվել ս.թ. հուլիսի 15-ին:

27.10.2010թ.-ին Ա. Քարամյանը տեղափոխվել է «Նուբարաշեն» ԲԿՀ:

05.11.2010թ.-ին դատապարտյալ Ա.Քարամյանը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է «Դատապարտյալների հիվանդանոց» ԲԿ հիմնարկ՝ հարկադիր բուժում ստանալու նպատակով: Կատարվել են լաբորատոր և ռենտգեն հետազոտություններ, որի արդյունքում ախտորոշվել է «Ներերակային տոքսիկոմանիա, կողեիցիզմ, ֆենոբարբիտուրային տոքսիկոմանիա: Ստորին ծնոտի օստեոմիելիտ»: Նեղ մասնագետների խորհրդատվությունների արդյունքում խորհուրդ է տրվել նարկոլոգիական կուրսը ավարտելուց հետո կատարել ստորին ծնոտի վիրահատություն:

/ ՀՀ ԱՆ ԲԿՎ ԲՍԲ ՊԵՏ  ԱՍԱԲԿԻՍՈՎ

23.11.10թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հրանտ Վոլոդյայի Մխոյանի առողջական վիճակի վերաբերյալ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավոր Հրանտ Վոլոդյայի Մխոյանը 04.07.2010թ.-ին, առողջական վիճակի վատթարացման պատճառով շտապ կարգով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղից նույն օրը հրաժարվել էր ստացիոնար բուժումից և ետ վերադարձվել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ:

07.07.2010թ.-ին կալանավոր Հ.Մխոյանը «ՄԻՀ, ձախ փորոքի սրտամկանի առաջային տարածուն կրկնակի սուր ինֆարկտ» ախտորոշմամբ կրկին շտապ կարգով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն և, ստանալով դեղորայքային բուժում, դուրս է գրվել 21.07.2010թ.-ին «ՄԻՀ, ձախ փորոքի սրտամկանի առաջային տարածուն Չ-ատամիկով կրկնակի սուր ինֆարկտ: Հետինֆարկտային կարդիոսկլերոզ: ԱՇՄԿԱ 2-րդ աստ./KILLIP/; Վերփորոքային էքստրասիստոլիա: Ջարկերակային հիպերտենզիա: Խրոնիկական բրոնխիտ» ախտորոշմամբ:

07.08.2010թ.-ին կալանավոր Հ.Մխոյանը կրկին տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ, ստանալով ստացիոնար բուժում, դուրս է գրվել 25.08.2010թ.-ին «ՄԻՀ, ձախ փորոքի սրտամկանի առաջնապատի կրկնակի սուր ինֆարկտ, ռեցիդիվ 06.08.2010թ.-ից, հետինֆարկտային ստենոկարդիա, ՄԿԱ 2-րդ, փորոքային էքստրասիստոլիա /Lown-4/: Հետինֆարկտային կարդիոսկլերոզ /2009-2010թթ./: Ջարկերակային հիպերտենզիա: Քրոնիկական բրոնխիտ:» ախտորոշմամբ:

Ս.ք. սեպտեմբերի 30-ին ժ. 01:30-ի սահմաններում առողջական վիճակի կրկին վատթարացման պատճառով ժամանած սրտաբանական բրիգադի բժշկի ցուցումով Հ.Մխոյանը տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի սրտային վերակենդանացման բաժանմունք: 15.102010թ.-ին վերադարձվել է «Նուբարաշեն» ՔԿՀ:

Ս.ք. նոյեմբերի 15-ին Հ.Մխոյանը կրկին տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: 16.11.2010թ.-ին հիվանդը դուրս է գրվել և տեղափոխվել «Նուբարաշեն» ՔԿՀ:

Համաձայն «Էրեբունի» բժշկական կենտրոնի եզրակացության Հ.Մխոյանը կարիք ունի սրտի անոթների ստենոտավորման: Թեև մեր կողմից ձեռք է բերվել առողջապահության նախարարության պետական պատվերի շրջանակներում բուժման ուղեգիրը, որը մասնակիորեն է փոխհատուցում վիրահատության համար անհրաժեշտ ծախսերը, Հ.Մխոյանը, ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, հրաժարվում է վիրահատական միջամտությունից:

ՀՀ ԱՆ ՔԿՎ ԲՍԲ ՊԵՏ
23.11.10թ.  Ա.ՍԱՐԿԻՍՈՎ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Կարապետ Ռադիկի Խաչատրյանի առողջական վիճակի վերաբերյալ

«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Կարապետ Ռադիկի Խաչատրյանը 09.06.2010թ.-ից բուժում է ստացել վերոգրյալ հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ստացիոնարում «Պարբերական հիվանդություն, խառը ձև: Երիկամների ամիլոիդոզ. Ռևմատոիդ պոլիարթրիտ սրացման շրջանում: Ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ» հիվանդությունների կապակցությամբ:

08.09.2010թ հիվանդը ենթարկվել է պրոկտոլոգի խորհրդատվության, որի կողմից ախտորոշվել է «Պարբերական հիվանդություն, արդմինալ-կրծքային ձև: Քրոնիկական կոլիտ, սրացման շրջանում: Ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ», նշանակվել է ռեկտոռոմանոսկոպիա:

Դատապարտյալ Կարապետ Խաչատրյանի մոտ ստացվող բուժման ֆոնի վրա նկատվել է պարբերական հիվանդության նույնների հաճախացում և տևողության երկարացում, տևական լուծ, արյունահոսության դրվագներ ադեստամոքսային տրակտից:

Դատապարտյալ Կարապետ Խաչատրյանը 05.11.2010թ. տեղափոխել է «Դատապարտյալի հիվանդանոց» ՔԿ հիմնարկի թերապևտիկ բաժանմունք, որտեղ առ այսօր «Պարբերական հիվանդության» նույններ չեն արձանագրվել, իսկ լաբորատոր և գործիքային հետազոտությունների օբյեկտիվ տվյալների արդյունքում «Երիկամների ամիլոիդոզ» և «Ռևմատոիդ պոլիարթրիտ» չի հաստատվել: «Ոչ սպեցիֆիկ խոցային կոլիտ»-ի սրացում ներկայումս չկա:

Ներկայումս դատապարտյալ Կարապետ Խաչատրյանը գտնվում է դինամիկ հսկողության տակ և ստանում է համապատասխան բուժում:

ՀՀ ԱՆ ՔԿՎ ԲՍԲ ՊԵՏ  Ա.ՍԱՐԿԻՍՈՎ

23.11.10թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 840/4-3609
27 12 2009 թ.

**ՀՀ ԱՆ ՔԿՀ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱԶՈՒՆՅԻՆ**

Չեր 24.11.2010թ.-ի 10-40 թվակիր գրությանը հայտնվում է, որ 2010թ.-ի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՔԿ հիմնարկներ ընդունված կալանավորված անձանց և դատապարտյալների 313 անձանց մոտ արձանագրվել են տարբեր տեսակի մարմնական վնասվածքների հետքեր, այդ թվում՝
«Նուրբարաշեն» ՔԿՀ - 245 անձ, «Վարդաշեն» ՔԿՀ - 6 անձ, «Արոլյան» ՔԿՀ - 2 անձ, «Երևան-Կենտրոն» ՔԿՀ - 2 անձ, «Գևորգյան» ՔԿՀ - 9 անձ, «Գորիս» ՔԿՀ - 5 անձ, «Վանաձոր» ՔԿՀ - 44 անձ:
Արձանագրված դեպքերը սահմանված կարգով հայտնվել են իրավասու մարմիններին, սակայն քրեական գործերի հարուցման և ծառայողական քննությունների անցկացման հետագա ընթացքի վերաբերյալ ՔԿ հիմնարկները չեն իրազեկվում:

Պետի առաջին տեղակալ
արդարադատության գնդապետ

Ռ. Յովհաննիսյան

Կատ. Վ. երիզարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 840/18-3602
27 12 2009 թ.

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱԲՆԵՐՈՒՄ ԵՎ
ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՄԲԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ՍԱԶՈՒՆՅԻՆ**

Հարգելի պարոն Սարունց

Ի պատասխան ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրած Չեր 24.11.2010թ. թիվ 10-42 գրության, հայտնվում է, որ 2009թ.-ի ընթացքում արձանագրվել է մահվան 15 դեպք (4 կալանավորված անձ և 11 դատապարտյալ): Մահվան 10 դեպքերի պատճառ է հանդիսացել հիվանդությունը, երկուսինը՝ դժբախտ պատահարը, իսկ երեքինը՝ ինքնասպանությունը:

2010թ.-ի հունվարից առ այսօր արձանագրվել է մահվան 34 դեպք (2 կալանավորված անձ և 32 դատապարտյալ): Մահվան 29 դեպքերի պատճառ է հանդիսացել հիվանդությունը, մեկինը՝ դժբախտ պատահարը, իսկ չորսինը՝ ինքնասպանությունը:

Մահվան բոլոր դեպքերով հարուցվել են քրեական գործեր:

Հարգանքով՝

ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Վ.ՔՈՉԱՐՅԱՆ

Կատ. Ա.Սարկիսով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Սրբան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

N 340/3-3626
29. 12. 2006թ.

Մուտք – ՔԿՎ 40/3-3475

ՀՀ ԱՆ ՔԿՏ հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդների
խմբի նախագահ Ա.Սարունցին

Հարգելի պարոն Սարունց,

Ի պատասխան Ձեր 24.11.2010թ. թիվ 10-41 գրության հայտնում եմ, որ 01.01.2010թ. մինչև 01.12.2010թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովի ու անկախ հանձնաժողովի նիստերին ներկայացվել և ազատվել են՝

1. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ափնի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի նիստերին ներկայացվել են թվով 834 դատապարտյալ:
2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ափնի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովը թվով 234 դատապարտյալի հավանություն է տվել:
3. Դատարանների կողմից պայմանական վաղաժամկետ ազատվել են թվով 211 դատապարտյալ, որից 15-ը ոչ մեծ ժանրության հանցագործություն կատարած անձինք: Էլից ուղարկվում է 01.01.2010թ. մինչև 01.12.2010թ. ընկած ժամանակահատվածում նույն դատապարտյալին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովի ու անկախ հանձնաժողովի նիստերին ներկայացնելու թվաքանակի վերաբերյալ ցուցակը:

Առդիր « 1 » թերթ

Պետի առաջին տեղակալ,
արդարադատության գնդապետ՝

Ռ. Հովհաննիսյան

Կատ. Ա.Մանասյան

Ցուցակ

01.01.2010թ. մինչև 01.12.2010թ. ընկած ժամանակահատվածում նույն դատապարտյալին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովի ու անկախ հանձնաժողովի նիստերին ներկայացնելու թվաքանակի վերաբերյալ

Դատապարտյալների թվաքանակը	Նույն դատապարտյալը քանի անգամ է ներկայացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովի նիստերին	Նույն դատապարտյալը քանի անգամ է ներկայացվել անկախ հանձնաժողովի նիստերին
352	1	-
275	2	-
234	3	-
49	4	-
202	1	1
65	2	2
29	3	3
57	2	1
35	3	1
43	3	2
8	4	2
1	4	3
5	4	1

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության
կալանավորված անձանց և դատապարտյալների
հաշվառման բաժին

08.12.2010թ.

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 84x60 1/8
Ծավալը՝ 18.25 տպ. մամուլ

Տպագրվել է՝
«ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ-ում
Վանաձոր - 2011 թ.